

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology  
Printed in JERUSALEM

# ՅՈՎԱՆԴԱԿԱՆԻ ԹԻՒՆ

ՓՈԽԱՆԱԿԱՆԱԿԱՆԻ		209
ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ Ա.Պ.Ը.Զ.		210
— Խաչքարի տօնը		210
ԿՐԹԱԿԱՐՆ		
— ՀՀԱՐՄԱՆ խոսովանիմ	ՃՆՈՐՀՔ ԵՊԻՍՊՈՊՈ	210
ԲԱՆԱՑՑԵԼՇԱԿԱՆ		
— Սիմեոն Խ. Խաչ-Զարք	Մ. ՄՊԱՆՈՒԹԵԱՆ	216
ՊՈՆԱՅԻՌԱԿԱՆ		
— Կողման գրիչ Խ. Ճաղիռդ	Ա. ԵՊԱ. ՄՊԱՆՈՒԹԵԱՆ	220
— Խորեկացու ստեղծագործությանը	Մ. ՄԿՐԵԱՆ	222
ՀԱՅԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ		
— Առաքելոց կամ Պազմուու վաճի	Ա. ԵՊԱ. ՄՊԱՆՈՒԹԵԱՆ	226
ԳԵՂԱՐՔՈՒՑԱԿԱՆ		
— Հայիական զարգարության	Ա. Շ. ՄԵՐԱՑԱԿԱՆԵԱՆ	228
Մայուսիս Ա. Յակոբյ Տանային և պատմական պեղութեա այլ առ թիւ	ՃՆՈՐՀՔ ԵՊԻՍՊՈՊՈ	232
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈԿԱՆ ԵՐԱԺԵՑՈՒԹԻՒՆ		
— Առեւագալի երգեր, առաւտան ժամեզութիւն	Ճ. - Մ.	239
ԿՐԱ ԱԲԻՈՒՆԻ ԳՐԱԴՐ և անու կահեռու գերք		
— Քրիստոնեական գատարակութեան ձեզ	Գ.Պ. Ա. ՕՕՐՈՅԵԱՆ	242
Լուիքերի ժողովը		244
Պատօնական Հաղորդագրութիւն Ս. Արուոյ Գիւմնեն		249
Եղիսկոպոսական Զեւնագրութիւն		251
Ճամփեռոյ՝ ի պատի Մայ Խնճիկ Արեգակի		252
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐԱԾԵ		
— Հեռազիր		252
— Եկեղեցական-Բեմական		252
— Պատօնական		254
ՏԻՐՈՒԻՆԻ		
— Պիոս Ժ. Պապ		256
— Տ. Աղիք. Մ. Վեդ. Կերիւնեան		256

تصدرها - بطريركية الارمن الارثوذكس - المدير والمحرر المسؤول - صاحب النشرة الافتتح هايكازون ابراهيميان  
 سبتمبر - أكتوبر - ١٩٥٨ - تطبع في مطبعة دير الارمن - القدس - المدد ٩ -

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem, Armenian Patriarchate, Jerusalem.  
 Editor - Bishop Haigazoun Abrahamian, Armenian Convent, Jerusalem.  
 Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

# ≡ Ս Ի Ա Ն ≡

Լ.Բ. ՏՈՐԻ - ՆԱՐ ՇՐՋԱՆ

1958

◀ ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ ▶

Թիկ 9-10

## ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ



Աշունը Խաչի տօներու շրջան է Հայաստանեայց Եկեղեցիի համար։ Աւ Հայ Երուսաղէմը դեռ կը քալէ իր խաչի ճամբան։ Տեղին ու պատշաճ է յառաջ բերել մեր խաչի շարականներէն քանի մը պատռիկներ։ Որքա՞ն պերճախօս են անոնք իրենց անսեթեթ պարզութեան մէջ։ Աւ որքա՞ն յուսադրիչ են անոնք իրենց սրտապնդող գերին մէջ....

« Առւրբ Խաչն օգնտիան հաւատացելոց  
« Կանգնեցաւ ի յերկի յաղրող թշնամոյն։  
« Եկայի ժողովուրդի, երկրպագեցուի»։

« Ապարինեցամ ի Խաչ Քո, Արարիչ յաւիտենից,  
« Ար Եսուր մեզ պահապան՝ յաղրող թնդդէմ թշնամոյն։  
« Աղայիմք սովոր, Փրկիչ, պահպանիա զանձինս մեր»։

« Փայտ կենաց կանգնեալ ի մէջ տիեզերաց,  
« Յոյս եւ ապաւէն ազգի մարդկան։  
« Աս պահեսցէ զեզ յամենայն վշանգից մերոց»։

« Եսկ փայտ խաչի Քո կենսատու՝ զաւազան  
« Զօրութեան կենաց մարդկան և Յոյս հաստատթեան։  
« Առաջնորդ եղեւ մեզ ի կենան յախտենից»։

## ԵՐԵՎԱՆԻ ՏԵՐԻ ԸՆԹԱԶՈՒՄ

ԽԱԶԿԵՐԱՑԻ ՏՕՆԸ

Ամեն, Ա. Պատրիարք Հայրը<sup>(\*)</sup> այս  
առարի, Ա. Խաչի տօնին (Սեպտ. 30  
կիր.) հանդիսութիւններուն վայրը ա-  
ւեցուց իր ներկայութեամբ:

Առառուն Ն. Ամեն. Սրբազնութիւնը  
Ա. Պատարագ մատոյց Սրբոց Յակոբ-  
եանց Տաճարին մէջ և խօսեցաւ կրօ-  
նաշաւնչ քարոզ մը ընարան դնելով Պօ-  
ղողոս Առաքեալին սա՛ հաւասառումը. «Իր-  
րեն ՏՏԾԱԽԱԼ, եւ հանապազ ուրախ  
նի՛» (Բ. Իրնթ. Զ. 10), և ըստու —  
«Եւենքի հակասութիւններն են որ կ'ա-  
պահովին անոր նորոգումը, թէ ընական  
երիոյթներուն և թէ մարդկային գոյու-  
թեան բոլոր շրջաններուն մէջ: Ներքին  
նմանութեամբ մը, արտմութեան և  
ուրախութեան հակապատկերներն ալ  
իրարու կը յաջորդին մեր կրօնական  
զարգացումին ամէն մէկ վայրկեաննե-  
րուն, և այդ փոփոխ վիճակներուն շնոր-  
հիւ կը նորոգուի մեր հաւատքը: Խաչն  
ըլլալով նշան մը ցաւի և արցունքներու,  
եղա՛ծ է ու կ'ըլլայ նաև նշան մը ցնծու-  
թեան ու միթարութեան: Ատո՛վ է որ  
քրիստոնեան կը պահէ իր հոգեկան հա-  
ւասարակշռութիւնը, առանց անձնա-  
տուր ըլլալու այդ ներհակ տրամադրու-  
թիւններէն մէկին կամ միւսին: Այսպէս  
կ'ըմբռնենք մեր կեանքին համար խա-  
չին կտարած դերը, և ատո՛վ է որ մեր  
հոգիները ուրախ ըլլալէ չեն դադրի՞ երբ  
կը արտմինք ո՛րևէ վիշտի պատճառով»:  
(Սին, 1928 Հոկտ. - Նոյեմ., էջ 348):

## ԿՐՈՆԱԿԱՆ

“ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

ԵՒ ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԵՄ”

«Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանիմ Քեզ,  
«Հոյր եւ Արքի եւ Ա. Հօգի, ամեն եւ անման թարին,  
«Արարի հեթակայ եւ մարդկան եւ ամենայն եղեց,  
«Ողացեա Քա արարած եւ ինձ բազմակիր»:

Ներսէս Շնորհալի Հայրապետի Հաւա-  
տով խոստովանիմ «աղօթաշարքին առաջին  
հինգ<sup>(\*)</sup> տուները, կ'ըսէինք մեր հափառ  
գրութեան մէջ, առաւելաբար հաւատոյ և  
պաշտաման վերաբերեալ կէտեր կը պա-  
րունակեն իրենց մէջ: Այլ բացարձութեամբ  
հաւատոյ տըւեալներ կը պատրաստեն զե-  
տինը որպէսզի աղօթաւորը բարձրանալ Առ-  
տուծոյ ներկայութեան Անոր մատուցանե-  
լու համար նախ պաշտամունք և ապա իր  
սրբին խնդրան քնները: Առաջին այս տունը  
սակայն բացառութիւն մըն է 24 տուններուն  
մէջ այնու որ գրեթէ ամբողջութեամբ հա-  
ւատոյ խոստովանանք և պաշտամունք է և  
միակ ընդհանուր խնդրանք մը ունի վերջին  
տողին մէջ, որ կը կրկնուի միւս բոլոր տու-  
ներուն մէջ:

Երբ կը ձեռնարկենք այս սքանչելի ա-  
ղօթաշարքին մէն մի տունը ընդլայնամի և  
պարզումի ենթարկել, մեր նպատակն է նախ  
շեշտել և վերջիշեցնել այս աղօթքի մէջ  
յայտնուած կրօնական ճշմարտութիւնները,  
և ապա անդրագառնալ նաև պաշտամունքի  
վերաբերեալ կորդ մը գործնական և արա-  
րական սովորութեանց՝ որոնք անտեսուե-  
լու կամ մասացութեան տրուելու վտանգին  
ենթարկուած են մեր եկեղեցւոյ անդամնե-  
րուն կողմէն:

Ներթին մատեցումի մեր մեթուրը պիտի  
ըլլայ վերցնել իրաքանչչեւր տունի կարե-  
ւոր հաւասառութերը կամ կէտերը և ընդ-  
լայնել զանոնք մի առ մի:

«Հաւատով խոստովանիմ». Ներկայիս

(\*) Համորդ յօդուածի մէջ սխալմամբ տղա-  
գրուած է չորս (Սին, Յուլիս - Օգոստ., էջ 165,  
բ. սիւնակ, Ներքեցն 13րդ տող):

(\*) Դուշեան Պատրիարք:

հասարակ գործածութեան մէջ խոստվանիլ կը նշանակէ մեղքերը հրապարակել, կամ զաղանիքներ գուրս տալ: Մակայն մեր դասական լեզուին մէջ առ հասարակ խոստվանիլ կը նշանակէ ճշմարտութիւն մը ի լուր աշխարհին յայտարարել: Այս իմաստով է որ ի հնաւմն իրենց հաւատքը արիարար և հրապարակաւ յայտարարողները, և այդ իսկ պատճառով չարչարանքի և ծեծի ենթարկուող Քրիստոնեանները կը կոչուէին ժխտագանգներո, ինչպէս կ'իրգուի Ա. Լուսաւորչի Շաբահանին մէջ, անոր չարչարանց կապակցութեամբ, «Խոստվանող վկայ Քրիստոսի Տէր Գրիգորիս»:

Կրօնքի և աղօթքի հիմքը հաւատքն է. առանց հաւատքի երկուքն ալ գոյութիւն չեն կրնար ունենալ: Ան որ Աստուծոյ կը մօտենայ՝ նախ սրտով հաւատալ պարտի և ապա բերնով խոստովանիլ՝ թէ կա՛յ Աստուծուծ, Արուն կը պարտին իրենց գոյութիւնը թէ՛ ինք և թէ՛ համագոյքը, և Արուն փառքը պէտք է պատմէ տիեզերքը և զԱր պէտք է պաշտէ բանաւոր արարածը:

«Երկիր պազմնել», ծառկի գալով ձեռքերն ու ճակատը զետին զնել ու համրուրել զայն՝ արարողական արտայայտութիւնն է Աստուծոյ առջեւ խոնարհումի և Անոր կամքին համակերպելու և զայն պաշտելու: Երականութեան մէջ պաշտամունք ո բանին, որ ծառայութիւն կը նշանակէ, տեսանելի և թանձրացեալ արտայայտութիւնն է երկրպագութիւնը: Մեր բոլոր ներքին ապրումները կը ձգտին իրենց համապատասխան տեսանելի արտայայտութիւնը գտնել, որքան ուժգին ըլլայ ներքին ապրումը նոյն քան անդիմագրելի և ինքնարեր կ'ըլլայ անոր տեսանելի արտայայտութիւնը, երբ կ'ազօթենք և Աստուծմէ բան մը կը խրնդրենք, մեր բազուկները ինքնարելարար և աղաչական ակնկալութեամբ գէպի երկինք կը բարձրանան: Եթէ զԱստուծ զիտակից անկեղծութեամբ Տէր կը գտանինք, ինքնարերարար մենք զմեզ ծառայի գերին մէջ կը զնենք Անոր համապատամբ: Եթէ Աստուծոյ գէմ ըլբռուսացած ենք, ուրիշ խօսքով՝ եթէ մեզք գործած ենք, ու կ'անզրագառնանք մեր ըրածին յիմրութեան, առաջին ինքնարեր շարժումը կ'ըլլայ առնկեալ յերկիր» ճակատը գետին զնել, խոնարհելու համար ընդհանր հզոր ձեռամբներն Ա. Պատր., Ե. 6.:

Երկիր պազմնելը, իբր խոր յարգանքի և խոնարհեցման արտայայտութիւն, շարունակաբար կիրարկուած է թէ՛ Հին և թէ՛ Նոր Կատարաններու մէջ: Արբահամ առտուածային այցելուները զիմաւորեց երկիրապագութեամբ: Մոզեր երբ Մանուկ Յիսուսը գտան առնկեալ երկիր պազմնէին նման: Մատանան Յիսուսը փորձելու ատեն պայման դրաւ Անոր որ աշխարհի բոլոր թագուրսութիւնները և փառքը իրեն կուտայ տեթէ անկեալ երկիր պազմնիցն ինձն: Յիսուս պատասխանեց Աստուծածամունքը պատուէրը մէջ սերելով: «Ճեան Աստուծոյ Քում երկիր պազցես և զնա միայն պատեացես: Աւերմն Յիսուսի իսկ հաւատառումով երկիր պազմնել և պատեն իրարու գրեթէ համազօր եզրեր և արարքներ են: — Արզարե երկրպագութեամբ պաշտամունքի մասնակցիլ ամենասովորական երեսիթ մընէր ի հնումն Դիերագոյն պաշտամունքին, այսինքն Ա. Պատարագի ընթացքին, ինչպէս նաև առօրեայ պաշտամանց բոլոր աղօթքներու մէջ, խազաղութեան արլչութեանէ վերջ շարունակ հրաւէր կ'ըլլայ պաշտամանց մասնակցուններուն և Աստուծոյ երկիր պազմեցուք ու ի հնումն այս հրաւէրին վրայ, առհասարակ պաշտամունքի բոլոր մասնակցունները, իրեւ մէկ մարմին, կ'իշնային գետին և երկրպագութիւն կ'ընէին: Ներկայիս սակայն սոտոյք է թէ տիրող բարքեր, մտայնութիւններ և մանաւանդ գործածուող հագուստի տարագներ արգելք են այս հրաւէրի զանական կիրարկութեան: Այս նկատումներով Լատին Եկեղեցին մէջ երկրպագութիւնը ծննադրութեանն վերադառնութեամբ մէջէն իսպանաց կիրացուած է: իսկ Բաղոքական քրիստոնեաններու մէջէն իսպան վերցուած է: Նոյն ընթացքը ակներեւ է նաև մեր մէջ: Ամերիկայի հայ Եկեղեցիններու մէջ, ինչպէս նաև զրիթէ ամէն տեղ ուր նոստարանի դրութիւնը ընդչանքացած է, բոլորպին վերցուած է երկրպագելու սովորութիւնը: Մեր հին սերունդի և հին աշխարհի մէջ է որ այս վաղնջական ու Ամուսածանչական կրօնական արարմունքը դեռ իր գոյութիւնը կը շարունակէ:

Կրօնական և ընկերացին արարմունքներու մէջ էսկանը ոզին և սկզբունքն է: Առ է արտօնութեամբ որ չըսմիր սկզբունքն մը, կամ ոզեղէն ապրումի մը արտայայտու-

թիւնը չէ, անհրմանու է և կեղծիք։ Միւս կողմէն ու և է սկզբունք և ներքին ապրում որ իր առաջայցութիւնը չի պանել՝ մեռաւլ է, ուժականութիւնն և կենա սունակաւթիւնն զուրկ է։ Հետեւ արար այս երկու քը, ոպի և արտայայտաւթիւն, կամ սկզբունք և կիրարկութիւն, միասին կ'ընթանան, մին առանց միւսին մեռաւլ է։ Այս երկու քին մէջ տարրերութիւնը այն է որ մին (ոպին և սկզբունքը) անփոփոխ է, իսկ միւսը՝ (արտայայտաւթիւնն և կիրարկութիւն) փոփոխական կրնայ ըլլայ։ Մէկ և նոյն սկզբունքը բացաւմ կերպերավ կարելի է կիրարկել։ Հետեւ արար երբ մամանակներու թերումավ և պահանջքով տառապէս երկրպագելը կը գերինայ, անոր հատպէտք չէ մեռնի նաև անոր ետին կեցաղ սկզբունքը, այլ արտայայտաւթիւնն է։ Հետեւ արար ըլլայ ժամերգութեան ընթացքին, կամ ըլլայ Ա. Պատարապի միջացին երբ ռևսուածոյ երկիր պագեցուք Տրանական կուզայ, բոլոր ազօթաւորները, իրբե մէկ մարմին պէտք է ծոյն և խորունկ խոնարհութիւն մը ընեն։ Կիխաւոր արարմունքը որով եկեղեցին ներկաները պաշտամունքի կը մասնակցին գրիթէ ա'յս է միայն։ Այտապէս ներկաները կը գերածուին լոկ հանգիստուններու։ Իսկ հանգիստուն ըլլալու համար եկեղեցի երթալլ ոչ բարյալական պարտաւորութիւն է, ոչ եկեղեցի հրահանգն է և ոչ ալ՝ Աստուածոյ համբին է։ Իսկ աստուածային պաշտամունքին գործնականապէս մասնակցելու համար երթալլ երկիքն ալ է միանգամայն։

«Քեզ, Հայր Եւ Արդի Եւ Սուրբ Հոգի։ Հաւատքով խոստվանանքը և երկրպագութիւնը կ'ուղղուին Աստուածութեան երեւ Անձերուն։ Նկատելի է որ երեք Անձերուն համար գործածուած դերանունը եղակի է, «Քեզ»։ Առանց խորանալու աստուածաբանական հարցերու մէջ, պէտք է հաստատել որ Քրիստոնէական կրօնքի դաւանանքի հիմնական մասն է հաւատալ ի Հայր, յլրդի և ի Ա. Հոգի։ Քրիստոնէական եկեղեցին դաւանական հարցերուն մէջ, պէտք է հաւատալ որ Քրիստոնէական կրօնքի դաւանանքի դիմնական մասն է հաւատալ ի Հայր, յլրդի մը բոլոր կրօնքներէն ի Հայր յլրդի մը պատճենագործուած գործնականապէս մասնակցելու կը բաժնուին ալ է միանգամայն։ ա) բացարձակ միաս-

տուածութիւն, ինչպէս են Մաքուսականութիւնը և Մահմետականութիւնը, և Բ) բազմաստուածութիւն, որ իր մէջ կը բաժնու զակէ գրեթէ մասցեալ բոլոր կրօնքները։

Քրիստոնէական հասկացողութեամբ Աստուածածութիւնը անհաւնորէն բանաւոր, ինքնալիքական և ինքնակամ Հոգի մըն է։ Կոյր և անձնական ոյժ մը չէ։ Յնականաբար Աստուածութիւնը անձնականութիւնը անհաւնորէն կը գերազանց մարդկոյին անձնականութիւնը, որ իր մանրանկար պատկերն է միայն Աստուածութիւնը ոչ մարդյն անձնական է այնաև իր մէջ գոյութիւն ունին երկի Անձեւ։ Այս ճշմարտութիւնը մարդկութեան արուած է զերբնական յայտնութեամբ։ Մարդ իր բանականութեամբ բնութիւնը ուսումնակիրելով կը հասնի Աստուածոյ գոյութեան ճշմարտութեան, սակայն երբեք ի վիճակի պիտի չըլլար գտնելու Աստուածութեան մէջ երեք Անձերու գոյութեան ճշմարտութիւնը՝ եթէ արդ յայտնուած չըլլար իրեն։ Այդին Քրիստոնէաներս կը հրաւիրուինք հաւատատեսներու և պաշտելու մէկ Աստուածութիւն միայն, որ մեզի կը յայտնուի երեք Անձերուի Մեր յաւերենական կեանքը մէզի կ'իջնէ երեք ազրիւրներէ։ Հայր Աստուածմէ, որ կը ստեղծէ զմեզ։ Արդի Աստուածմէ, որ կը փրկէ զմեզ։ և Հոգի Աստուածմէ, որ կը սրբացնէ զմեզ։ Հայր, Արդի և Ա. Հոգի միասնաբար կը կոչուին Ա. Եւրոպակիրիւն, որու մասին, ինչպէս Անձերէն իւրաքանչչիւրի մասին, կ'անզրագառնանք աւելի հանգամանօրէն յաջորդ տուներու մէջ։

«Անել եւ անման բնութիւն ։ Աստուածութեան մասին շտա խոտացեալ հաւատութիւն է այս Բնութիւն բառը հայերէն լեզուութիւն է ամենէն զժուար հասկնալի, և հետեւ արար՝ զժուար բացատրելի բառ մըն է։ Եթէ մինչեւ իսկ փորձ ընկնք զայն սահմանի, գարձեալ կը միայ զժուար ըմբռնելի հաստրակ միտքերու համար, որովհետեւ այս բառը միտքով միայն բռնուելիք գաղափար մը կ'արտայայտէ, այլ բացատրութեամբ մեր զջայտրանքներուն և հետեւ արար մեր զջալի փորձուութեան ներքեւ ինկոզ իրականաւթիւն մը չի ներկայացներ, այլ հմատասիրուէն միայն ըմբռնուած զաղափար մը կ'արտայայտէ։ Բառին այս վերացական հանգամանքը պատճառ եղած է որ

տարբեր-տարբեր իմաստներով հակցուի  
այն և ծնունդ տար անհատնում հեղեղեցա-  
կան գէճերու, մինչև իսկ պատճոս զառ-  
նալով եկեղեցական անդարձմանի և ան-  
ժերապանայի բաժանում մներու:

Բնութիւն բառը ներկայիս կը սահմանուի իրքեւ և համարդութիւնը էակի մը կամ առարկայի մը ա՛յն յատկութեանց որոնք ի թիւն իրեն են, և որոնցմօվ այդ էակը կամ առարկան կը զատորոշուի միւսներէն չայերէն լեզուին մէջ ալ, արդարեւ, բունքուը, որ արժանան է բնութիւն եզրին, կը նշանակէ սկզբնական, հարազարաւ Այստեղ Աստուածային Բնութեան իրքեւ յատկանիշ կը տրուին երկու ածականներ, և Անեղ և անմահու, որոնք միայն Աստուածայ յատուկ են և զԱյն կը զատորոշեն միւս բոլոր էակներէն:

«Անելո կը նշանակէ նա որ չէ ստեղծաւած, նա որ ուրիշի մը չի պարտիր իր գոյութիւնը, հատեաբար՝ նա որ ինքնազոյէ: Իսկ անման ածականը կը չեցաէ աստաւածային բնութեան մահուան կամ վախճանի մը ենթակայ չըլլալը: Այս երկու կարճ և համապարփակ ածականները իրենց մէջ կը խռացնեն աստուածային բնութեան յաւիտենականութիւնը: Անելո ածականը կը յատկանչէ Աստուածոյ յաւիտենականութիւնը անցեալին յարաբերաբար, այսինքն կը հաստատէ Անոր անսկիզբ ըլլալը: Իսկ անմանը՝ ապագային յարաբերաբար, այսինքն կը հաստատէ Աստուածոյ անվախնակ բլլալը:

ա Արարիչ հետևակաց եւ մարդկան եւ  
ամենայն եղելոց »: Աստուածային բնութեան  
միւս կարեսրագոյն ստորեգելին է Արարիչ  
ըլլալը: Առաջին երկու ածականները կը  
յատկանչեն՝ Աստուածոյ կայական հանգա-  
մանքը: Իսկ Արարիչը՝ կը յատկանչէ Անոր  
ուժական և զործով հանգամանքը: Առաջին  
երկու ածականները յարաբերական են ժա-  
մանակի, իսկ Արարիչը՝ միջոցի, որուն մէջ  
զոյութիւն ունին, կը զործեն և կը բարե-  
շրջուին եղած բանները:

Աստուած Արարիչ է Նախ՝ Ինքը ակնեալութեան մէջ, սակայն շարունակաբար ակնարկուած է անսուց գոյութեան և գործունէութեան Ա. Գիրքի սկիզբէն մինչև չեղարձի, Ծննդոցէն մինչև Յայտնութեան

գիրքը։ Հրեշտակ կը նշանակէ մեր լեզուին մէջ պատգամաւոր, և իր այս հասարակի խմառով գործածուած է անխտիր՝ իրքի պատգամաւոր զբկուած թէ մարդերու համար և թէ հոգեգէն էակներու համար։ Հրեշտակ բարին այս խմաստը — պատգամաւոր — կը ճշդէ մասամբ մը գէթ անոնց գերը և գիրքը ստեղծագործութեան մէջ։ Արդարի հրեշտակները Աստուծոյ պատգամաւորներն են, որոնք կը զբկուին Անոր հրամանները և կարքը գործադրելու համար, ինչպէս կը հաստատէ երրայիցոց թուղթի հեղինակը։ Հրեշտակները, կ'ըսէ ան, օրս պատառորդ Հօգիններ են, որոնք կը զրկուին ի սպասաւորաթիւնը անոնց, որոնք փըրսկութիւնը պիտի ժառանգենո (Ա. 14)։ Եւ արդարի բազում են տեղիքներ, թէ՛ Հին և թէ՛ Նոր Կոտակարաններու մէջ, ուր հրեշտակներ կը զրկուին սպասաւորելու համար Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին, թէ Հին եկեղեցին և թէ Նոր եկեղեցին, ինչպէս նաև Աստուծոյ ընտրեալ մարդերու թէ՛ Հին և թէ Նոր Աւատարն մէջ։ Հրեշտակներ երեւցան և օգնեցին Արքահամբին և Մագսէսին, Ա. Կոյսին և մինչև իսկ Յիսուսին, Պետրոսին և Պօլասին ու գեռ ուրիշ շատ շատերուն։

Հրեշտակներու բնութիւնան մասին մեր  
դիտցածն այն է որ անօնք հոգիւղին է ակ-  
ներ ին, օժառուած՝ բանականութիւնամբ և  
ազատ կարքով, մարդոց պէս, և հետեւա-  
բար լոկ ոյժեր չեն այլ՝ անձնաւոր էակներ  
Աստուած զանոնք ստեղծած է ոչ միայն  
իրրե հոգիներ, այլ ստեղծած է զանոնք  
ակրակէ ։ Աստուած արար զհրեշտակս իւր  
հոգիս, և զպաշտօնեայս իւր ի հուր կիզե-  
րուա (Աղմ. ճգ. 4):

Կրակի պատկերը կը յատկանչէ հրեշտակ-  
ներու արագաշարժութիւնը և մաքրութիւնը

Առ հասարակ լնդունուած է որ հրեշտակներու թիւը հազարք հազարաց է և թիւք բիւրուց . ոչ կ'աւելնան . ոչ ալ կ'պակսին : Դարձեալ լնդունուած է որ անոնք զանագան դասակարգերու կը բաժնուին , համաձայն իրենց պաշտօններուն և ըստ իրենց մերձաւորութեան Աստուծոյ Մեր շարականները կը թուին Գ դասակարգութիւններ : (Տես Հրեշտակապիեաց և Երկուրդ Շաղկազարգի Տէր Ցերկնից շարականները) : Բնդունուած է նաև որ ա-

մէն ոք, յատկապէս փոքրիկները, իրենց պահապան հրեշտակներն ունին (Մաթ. ԺՇ. 10), կան նիհետակալվեներ որոնցմէ երկուքը յանուանէ իշտատակուած ևն Աստուածաշունչին մէջ. Գաբրիէլ (Դան., Բ., 16, Պատ. Ա., 19 և 26) և Միքայէլ, (Դան., Ժ., 13, Յուղա, Ա., 19, Յայտ., ԺՇ., 17):

Խնչպէս մարդը, այնպէս ալ հրեշտակներէն ումանք, մեղանչեցին և ինկան Աստուածոյ շնորհքն և վտարուեցան Անոր ներկայութենէն: Այս մասին Յուզայի Թուղթին մէջ լսուած է. «Հրեշտակները որոնք չպահեցին իրենց իշխանութիւնը, այլ թողին իրենց բնակութիւնը, Աստուած զատաստանի մեծ օրուան համար պահեց զանոնք խաւարի մէջ մշտնչենական կապանքով» (Հմբ. 6): Աստուածոյ կողմէ իրենց համար սահմանուած իշխանութիւնը և զիրքը չպահող, և ամբարտաւանելով աւելի բարձր իշխանութեան ձգտող այս հրեշտակները կորսնցուցին նաև իրենց ունեցած զիրքը և վերածուեցան ատանաներու՝ որոնք կ'աշխատին ամէն միջոցներով մարդիկն ալ իրենց վիճակին իջեցնել, զանոնք փորձութեան և մեղքի մէջ ձգելով: Պողոս Առաքեալ չարութեան գեր կը կոչէ «Հրեշտակստանի»: Պետրոս Առաքեալ կ'աւելցնէ. «Ճեր ոսոխը, Սատանան, առիւծի պէս կը մանչէ: կը պատի և կը փնտոէ թէ ով կլէ» (Ա. Պետր., Ե., 8):

Աստուած Արարիչ է նաև Մարգիկն: Մարդու ստեղծումը իր մանկունակ պարզութեան և գրաւչութեան մէջ պատմուած է Աստուածաշունչի առաջին էջերուն մէջ: Այդ էջերը մէկ կողմէն կը ծածկեն ստեղծագործութեան հրաշալի երեսութիւն, այսպէս ասած՝ իրական երեսը, միւս կողմէն սակայն կը յայտնին այս վսիմ և անպատմելի արարչական արարքին, այտպէս լսենք, խորհրդանշական երեսը: Ոյս կապակցութեամբ կրնանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հետ կրկնել. «Գոհանարք զքէն, Տէր երկնի և երկիր, զի ծածկեցեր զայս լիմասնոց եւ ի զիտնոց եւ յայտնեցեր սպայոց» (Պատ., Ժ. 21): Արդարեւ աշխարհի «իմաստունները և գիտուններ» իրենց ծովածաւաշը զիտութեամբ գեռ ստուգապէս չեն զիտէր թէ մարդ ինչպէս և երբ երեցած է երկրագունդիս վրայ. այս մասին իրենց ըսածները առհասարակ վարկածներ են՝ յաճախ մին միւսը

հերքող: Իսկ Աւետարանի մասնուկները զիտեն թէ ինչ կերպով մէջտեղ եկած է մարդը. «Եւ Աստուած ստեղծեց մարդը. Աստուած մարդը ստեղծեց ըստ Իր պատկերին. արու և էգ ստեղծեց. որհնեց զանոնք Աստուած և ըստաւ. Անեցէք ու բազմացէք, և լեցուցէք երկիրը և ուրիշցէք անոր, իշխուցէք ծովու ձուկերուն, երկինքի թաջուններուն և երկրի բոլոր կենդանիներուն» (Ծննդ., Ա., 26-28): Աւելին, ուշւ ստեղծեց Տէր Աստուած մարդը երկրի հողէն, և վչեց անոր երեսին կեանքի չունչը, և մարդը եղաւ կենդանի հոգի» (Ծննդ. Բ., 7): Մարդու ստեղծման և բնութեան մասին բաւական է այսչափ զիտնալը, որովհետեւ էականը այսչափ է. թէ մարդ ստեղծուած է Աստուածոյ կողմէ, թէ Անոր պատիերին համաձայն ստեղծուած է. թէ մեր երկրագունդին իրբեւ իշխան ասեղծուած է. և թէ իր մէջ կայ մասնիկ մը Աստուածոյ անման չունչէն որ կը վերածէ զինք անման հոգիի: Ասկէ աւելին, եթէ մարդու կաղմախօսութեան մասին է՝ մարդուն ծանօթութեան սահմանին մէջ կ'ինայ, իսկ եթէ մարդու ծագման և սկիզբի մասին է, անկայուն վարկած է լոկ:

«Ամենայն եկեղեց. Աստուած ինքնին ռԱնելի» է, բայց ստեղծիչն է բոլոր եղանակներուն, որոնց մէջ են ոչ միայն մեր երկրագունդի վրայ եղածները, այլ նուև արեն ու լուսինը, աստղերն ու մոլորակները, և ամբողջ տիեզերքի պարունակութիւնը, իր անունին արժանի ու է զիտնական կամ իմաստատիրական զրութիւն չի կրնար ըսել որ բնութիւնը արդիւնք է պատահականութեան կամ բախչի: Պարկեւտ զիտնական մը կամ իմաստատիրական մը, եթէ չուզեր յայտարարել Աստուածաշնչական ճշմարտութիւնը, միակ հաւաստումը որ կրնայ ընել տիեզերքի ծագման մասին խոստովանիլն է թէ չենք զիտերը: Արօվհետեւ «զիտնականք» իրապէս չեն զիտեր թէ նիւթ ըսուածը ինչպէս ի զոյ եկած է. չեն զիտեր թէ անկենդան նիւթին մէջ ինչպէս կեանք մասծ է. չեն զիտեր թէ կեանքին մէջ ուրէկ զգացականութիւն և բանականութիւն մասին մասը, առիթները վերլուծել, մասերու բաժնել, անոնց զարծելու օրէնքներուն վերահասուըլլալ, բայց երբեք համոզիչ կերպով մէկէն

մրագին անցման օդակը պիտի չկրնան զըտանել կամ բացատրել, որովհետ անոնք սեղձում են:

Արդին Աստուծած Արարիչն է բոլոր ելեալինուն, մէջն ըլլալով կեանք ու բանականութիւն ունեցող էակները: Գիտական հաւասարում ըրած չեն ըլլար բուր անոնք որ կը մերժեն Աստուծոյ գոյութիւնը և Ծիեզերքի Արարիչ Ըլլալը, վասնզի զայն ժըլտեխուալ ապացոյցը չունին: Մինչզեւ իրենց իսկ հաւասարումով պարկեշտ զիտութիւնը հաւասարում կ'ընէ հիմունելով լոկ հաւասարուած իրականութեանց վրայ: Քրիստոնեաները երբ մեր խօսքը կ'ուղղենք Աստուծոյ և կ'ըսենք: «Հաւատով խոստվանիմ և երկիր պագանիմ Քեզ . . . Արարիչ ամենայն եղելոց» չենք յաւակնիր, ոչ ալ կը փափաքինք, և զիտական հաւասարում մը ընել, այլ՝ զուտ դաւանական: Նոյնպէս բոլոր անոնք որ կը յանդզնին ըսել: «Չենք հաւատար ու չենք խոստվանիր որ Աստուծած կայ, ոչ ալ կը հաւատանք որ համագոյքը Աստուծոյ մը կողմէ ստեղծուած է», թող զիտան որ կրօնական հաւասարում մը կ'ընեն, և ոչ թէ զիտական: Թող ոչ ոք պարծենայ յանուն զիտուրեան երբ կ'ուրանայ Աստուծոյ գոյութիւնը և Արարչութիւնը, որովհետեւ ոչ ոք պիտի կրնայ փաստել Աստուծոյ ստեղծագործութիւնը, գոյութիւնը, այսպէս ասած, չգոյութիւնը, ոչ ալ՝ Անոր Արարիչ չըլլալը: Տգէաներ լոկ կրնան խարել տգէտները զիտութեան անունով, ծշմարիտ գիտութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ բացատրել Աստուծոյ ստեղծագործութիւնը, գոյութիւնը, կոնկան բնութեան մէջ թաքնուած ոյժեր և օրէնքներ և զանոնք կիրարկել մարդկային կեանքի առաւել բարօռութեան համար:

«Ուղրմեա Քո արարածոց» միակ խընդգրանքն է առաջին տունին մէջ: Կրեթէ մեր բոլոր ապագրուած ժամագիրքերու մէջ այս խօսքին կը յաջորդէ աեւ ինձ բազմամելիս» ասութիւնը թէ՝ այս տունին և թէ բոլոր տուներուն վերջաւորութեան: Սակայն թերես աւելի շիտակ է ընդունիլ որ առաջին այս տունը կը վերջանայ լոկ արարածներու վրայ Աստուծոյ ողորմութիւնը հայցելով, իսկ երկորդ տունին մէջ՝ լոկ աղօթաւորին համար Աստուծոյ գութը խնդրելով, և ապա յաջորդ տուներուն մէջ՝ երկուքին համար ևս<sup>(\*)</sup>:

«Ուղրմեա Քո արարածոց». համապարփակ այս խնդրանքը արտայայտութիւնն է քրիստոնէուկան ազնուազոյն սպիրի մը որ մարմնացու է Շնորհալիին և մեր ժողովուրդի հաւատաւուր զանդուածին մէջ: Նախ աղօթել ուրիշի համար, և աղօթել բոլոր արարածներու համար, արդարե մեծ և մաքուր հոգին նշան է:

Աստուծոյ ուղրմեաւրինը հայցելով, ըլլայ ուրիշներու և ըլլայ մեր վրայ: ըսիէ կ'ուղինք որ ենթական իր արժանիքով կամ արդարութեան որէնքով չէ որ Աստուծոյ շնորհքն և պարգևներուն կ'արժանանայ, այլ բակ Աստուծոյ ողորմելավը: Աստուծոյ ողորմութիւնը հայցելու այս զայլափարը շատ շշտուած է Քրիստոնէական եկեղեցին մէջ, այն տատիճան որ աՏէր Աղորմեան մաղթանքը Եկեղեցիի գերազանց և ամենէն շատ կրկնուած աղօթքն է: Ըլլայ մնաք, ըլլան Յոյներ կամ միւս Եկեղեցիներ երբեմն անհատում կ'իրավու կը կրկնենք զայն: ԱՏէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա . . . և Քիրիէ էլէյսոն, Քիրիէ էլէյսոն, Քիրիէ էլէյսոն . . . և Ասով Եկեղեցին սակայն ոչ սակաւահուատութեան նշան ցոյց կուտայ, ոչ ալ՝ զԱստուծած կը տաղակացնէ: այլ՝ լոկ կը հաւատատէ իր ամբողջական կախումը Աստուծմէ, և իր անկարողութիւնը՝ իր անհատական ոյժերով մեղքի ճանիճէն գուրու գալու, և կը շշտէ այն իրութեանը թէ հոգիկան զօրութիւնը և շնորհքները կ'իջնեն Աստուծոյ ողորմութիւնն: Ուրեմն տղօթենք Շնորհալի Հայրապետի հետ:

Հաւատով կը խօսավանիմ եւ կ'եւկրպագեմ Քեզ, Հայր եւ Արքի եւ Ա. Հոգի, անսեղծ եւ անման բնօւրին, Անդիջի հետակենու եւ մարդօ եւ թօր եղանեթօն, Աղօթէ Քու արարածներող, եւ ինծի բազմամելիս:

(2)

ՃՆՈՐՀՅ ԵՊԻԱԿՈՊԱՍ

(\*) Արբոյ Յակոբեանց Զեռագրատան բազում Արականաց զրքերէն և ժամագիրքերէն, որոնց մէջ առանապակ կը գտնուի «Հաւատուով խոսուվանիմ» աղօթքը, առնոււազն երկուքը, թիւ 418 Սազմուը, զրուած 1580ին, և թիւ 200 ժամագիրքը, զրուած 1621ին, չունին առաջին տունին մէջ և ինձ բազմամելիս» մասը, իսկ երկորդ տունին մէջ՝ «Աղօթանա Քո արարածոց» լ. Մնացեալ տուներու մէջ երկուքն ալ կան: Այսպէս է նաև 36 լեզուեան «Հաւատուով խոսուվանիմ» աղօթագրքին մէջ, հրատարակուած ի Վենետիկ:

## ՄԻԱՄԱՆԹՈ ԵՒ ԽՃԵ-ԶԱՐԵ

(Սիրավէկ)

v

I

Ու Միփանի լանջին կեցաւ Միամանթօն,  
 Եւ վար առաւ բեռն իր թեթեւ . ու վըռեց հոն  
 իր վերարկուն , կանաչին վրայ , Խըճէին տակ ,  
 Կարգեց նըժոյզն ալ ջուրի մը բով անապակ :  
 «Խըճէ» ըսաւ , «ա'լ կատարուած է մեր մուրագն ,  
 «Երական է հիմա , երէկն ինչ էր երազ ,  
 «Ա'լ հոգ ըսնիմ , ոյինչ կըրնայ ա'լ զատել մեզ :  
 «Բայց յոգնած եմ , այնքա՞ն յոգնած , կարօտակէզ  
 «Ըլլայ թէեւ սիրուս սիրոյդ համար , անզին  
 «Իմ սիրուհիս , նընչեմ քիչ մը ես քու ծունկին :  
 «Մերն է աշխարհն , մերն է մաքուր , իրական սէրն ,  
 «Կարկաչելով պիտի հոսի ա'լ կեանքը մեր .  
 «Եւ իր ափին պիտի բուսնին ծիլ ու ծաղիկ ,  
 «Ու իր շուրջը պիտի ամին հազար բարիք »:  
 Եւ զըլուխը զըրած սիրած աղջկան զոգն ,  
 Մարի լանջին , Միամանթօն նընչեց անհոգ :  
 Երազ տեսաւ Միամանթօն , երազը հին ,  
 Խըճէն եղնիկ դարձած ու ինք որսորդ կըրկին ,  
 Ու հալածեց , երազին մէջ զայն ընդ երկար ,  
 Բըռնեց , սակայն երկու քն ինկան անդունդն ի վար :  
 Եւ վեր թըռաւ Միամանթօն տեղէն , յուզուած ,  
 Ու Խըճէի թարթիչներէն տեսաւ կախուած  
 Մարգարիտի երկու գունտեր . «Կուլաս իմ սէր ,  
 «Զէ» մեր կեանքը պիտի ըլլար ա'լ անըստուեր ».  
 Էսաւ տըղան , սըրբից արցունքը համբոյրով ,  
 Շոհեց մազերը Խըճէին , սիրագորով :  
 «Միամանթօ» ըսաւ Խըճէն , «քառասուն եզ ,  
 «Կովու մը հետ , հոսկէ անցան , մըրրիկի մ' պէս ,  
 «Ու հտեւէն հասաւ ցուլ մը , կարծես կատղած ,  
 «Զարկաւ - ցըրուեց քառասուն ալ , ու կովս առած  
 «Հեռացաւ շուտ . . . Եւ յիշեցի ըզբեզ իմ սէր .  
 «Ատոր համար է լոկ տեսածըդ արցունքներ »:  
 Միամանթօն վերցուց իսկոյն աղեղն ու նետ ,  
 «Պիտ՝ անպատիք ըըմընայ մէկը ասկէ ետք ,  
 «Ըլլայ ասուն թէ անսասուն , թէ իսկ հրեշտակ ,  
 «Համարձակի թէ խըռուիկ սիրոտ անապակ »:  
 Էսաւ տըղան , անապարնց Միփանն ի վար :  
 Խըճէն կանչեց իր ետեւէն , «իմ սէր , մ' երթար ,  
 «Թող որ անոնք ալ սէր ընեն , դարձիք դուն ետ ,  
 «Ո՞վ զիտէ ուր թարնըեցան անոնք անհետ ,  
 «Միփանն ունի հազար անդունդ ու խորխորատ .  
 «Միամանթօ մըտիկ ըրէ , սիրոյդ խըրատ »:  
 Բայց չըլըսեց Միամանթօն ու չառաւ կանգ ,  
 Հովը տարաւ Խըճէին կանչն ու աղաչանք :

## II

Վիճի մ' եզրին կեցած էին ցուլը ու կովը,  
Կը նայէին, Սիփանն ի վար դէպ' Պանայ Շուլին:  
Սիամանթօն լարեց աղեղն ու մօտեցաւ,  
Մրծակեց նետն, ու ցուլն անդին տապաշցաւ,  
Եւ մօտեցաւ Սիամանթօն, սուրը բաշած,  
Վար ծըռեցաւ, վիզն որ կըտրէ. բայց եզն յանկարձ,  
Վերցուց գրլուխն, վերջին անգամ, ու փարատից  
Ահեղ ոյժով, տըղան անդունդն ի վար նետեց:

## III

Եւ ըսպասեց Խընէն, երկար ու անհամբեր,  
(Ժամանակը կարծես կեցած էր աներեր):  
«Երքէ՞ն ի վեր, զընաց տըղան ու չըդարձաւ».  
Ելաւ Խընէն, փընտռեց իր Սէրն Սիփանն ի վար,  
Սիփանն ի վեր. մըտաւ ամէն անծաւ ու այր,  
Բայց ոչ մէկ տեղ, ան տըղուն հետքը չը գըտաւ,  
Ու օծ մ'ինչպէս կասկածը իր սիրոը մըտաւ:  
Երկար փընտռեց, կանչեց երկար, ծայնը ծըգած,  
Մինչեւ գըտաւ ցուլը անշարժ տեղ մ' երկընցած,  
Մօտեցաւ ան ու նայեցաւ անդունդն ի վար,  
Ահ, մահամերծ Սիամանթօն հոն կը տըքար:  
Եւ հասկըցաւ տըղուն անմար վիճակն իսկոյն,  
Ու Խընէին դէմքը առաւ կըտափ գոյն:  
Անդունդին մէջ, տըղան կոնդի մ' վըրայ ինկած՝  
Որ իր մէջքէն մըտած էր ու կուրծքէն ելած:

## IV

Եւ անդունդին վերեւ կեցած Խընէն անշարժ,  
Իր ցաւին մէջ իր սեւ բախտը այսպէս ողբաց:  
«Սիամանթօ, երանի թէ կուրնայի ես,  
«Զը տեսնէի. անդունդին մէջ, վիճակդ այսպէս,  
«Ո՞իս երանի թէ խաւարէր արեւն յաւէտ,  
«Ես փընտռէի քեզ մութին մէջ, յոյսով մը գէթ.  
«Յոյսը պիտի պահէի վառ խաւարին մէջ,  
«Ու փընտռէի, անոր լոյսով, ըզքեզ անվերջ:  
«Սիամանթօ, ըսէ հիմա ի՞նչ ընեմ ես,  
«Ինչո՞ւ բնդմիշտ կործանեցիր սիրոյդ պարտէզն:  
«Սիամանթօ ինծի հիմա ոչինչ մընաց,  
«Կործանեցաւ իմ դըղեակը մըտայդաց,  
«Կ'երազէի ես անսահման, անարատ սէր,  
«Կ'երազէի ան արծակէր ուրիշ ծիլիր,  
«Որ մեծնային, շողերուն տակ մեր նայուածքին,  
«Ծիլերն ինչպէս, շողերուն տակ արեգակին:  
«Սիամանթօ, խորտակեցիր երազըս դուն...  
«Կ'երազէի ոսկի ժիանքը արտերուն,  
«Ուր ճաշէն վերջ, ջուրի մը քով, ծառի մ' շուրին,  
«Հանգչեցուցած յոգնած գըլուխըդ իմ ծունկին  
«Պիտի օրօր շըշնջէի, հին երգերով  
«Ինչպէս հրեշտակ պիտ՝ հըսկէի որ անխըռով

« Քլար քունըդ . . . : Պիտ' օգնէի դաշտին մէջ քեզ,  
« Ու մեր կեանքը պիտի անցներ երազի մ' պէս :

« Արամանթօ , խորտակեցիր երազըս դուն ,  
« Կ'երազէի խըրծիթ մը ես , քովէն առուն ,  
« և Խոխոչալէն պիտի սահէր , բարտիներու  
« Եարան մ' եղբին , շունչովը մեղմ զեփիւռներու  
« Պիտ' շըշընչէր սիրոյ Խորհուրդն անմեկնելի . . .  
« Հոն ես պըզտիկ Սիամանթօս պիտ' օրբէի ,  
« Ու կարոտով , ամէն իրկուն , վերադարձիդ  
« Բապասէի . . . Պիտի մեծնար ան նայուածքիդ  
« Հովանու տակ . . . Պըզտիկ Խըժէն , յիտոյ , անոր  
« Պիտ' հետևէր . . . Ու մեծնային պիտ' օրէ օր ,  
« Թաւալէին կանաչին վրայ , պարզ ու անհոգ  
« Օրը համբուն , ու վազէին ամէն իրկուն  
« Դիմաւորել ըզբեզ երբոր դառնայիր տուն »:

« Սիամանթօ , կ'երազէի ես բախտաւոր  
« Ծերութիւն մը , ու թոռնիկներ իմ շուրջ բոլոր ,  
« Ամրան աղուոր իրիկուններ , լուսրնկայի  
« Շողերուն տակ , անոնց մեր սէրն պիտ' պատմէի .  
« Իամ ծըմեռը , գուրսն ամէն բան երբոր սառած՝  
« Հաւը ինչպէս իր ծագուկներն շուրջը առած ,  
« Հաւարէի պիտի զանոնք թոնիրին շուրջ .  
« Ու մեր կեանքը պիտի ըլլար հէքեաթ , անուրջ »:  
« Սիամանթօ , ինձի հիմա ոչինչ մընաց ,  
« Թեւը կոտրած թըռչուն մ' եմ ես բոյնըս փըլած . . . »:

Խըճէն նըստած էր ժայռի մը , անդունդին վրայ ,  
Բուռ բուռ մազերն իր կը փետտէր եւ անխընայ  
Կը ծանկըռատէր դէմքն իր աղուոր , արտասուահելձ ,  
Ու արիւնը կը կաթկըթէր իր փէշին մէջ :  
Կը տարածուէր Խըճէին ողքն մինչեւ հեռուն ,  
Ու կը հասնէր Սիփանի վեհ կատարներուն ,  
Կը զարնըւէր հրսկայական ժայռերուն ան ,  
Կը բնկըեկէր , կ'անդրադառնար . . . եւ աննըման  
Իր աչքերէն կը թափէր յորդ արցունքն անսիրջ ,  
Կը միանար արեան , կ'իջնէր իր ծոցին մէջ :  
Մինչ կը տըքար Սիամանթօն արիւնաբամ ,  
Նայուածքին դէմ պատկերն սիրած իր աղջըկան ,  
Ու իր ցաւը մոռցած անոր ցաւին դիմաց ,  
Կը շըշընչէր . « Խըճէ , իմ սէր , ըզզոյշ , վեր կաց ,  
« Դարձիր հօրդդ , անոր գիրկը բաց է նորէն .  
« Դարձիր , իմ սէր , այս է եղեր Գիրըս վերէն ,  
« Բախտին դուռը զեռ չէ Փակուած քեզի համար . . .  
« Իսկ ես կ'երթամ , սիրտիս մէջ քու կարօտն անմար ,  
« Բընութեան մէջ , տեղ մը , քեզի պիտ' ըսպասեմ ,  
« Իմ միակ սէր անապական , երազ վըսեմ :  
« Կ'ուզեմ միայն , տարին հեղ մը այցի գաս ինձ ,  
« Տարին երկու կաթիլ արցունք աչքերէդ զինց ,

«Հողս ողջ տարին պիտ' ըսպասէ պապակով քիզ  
 «Պիտ' ըսպասէ ամբողջ տարին կարօտակէզ:

«Մ' ոյժ չունիմ, նընէս, կը զգամ որ մօտ է վերջն,  
 «Պիտի փակեմ աշքերս, պատկերդ իրենց մէջ:

«Իսկ դուն ի զուր մի ըսպասեր, ետ դարձիր տուն,  
 «Մի ուշանար, իմ մաքուր սէր, տես իրիկոն  
 «Կը մօտենայ . . . չի՞ս լըսեր ծայնը կոյնակին,  
 «Ոչինչ կըրնայ դարձընել ա'լ զիս ես կեանքին:  
 «Մընաս բարով, իմ սիրուհիս, մընաս բարով,  
 «Քեզի համար, աշխարհս եղաւ կարօտի ծով,  
 «Միրտըս նաւակ ծովուն վրայ, շուրջըս քառս,  
 «Ու շողացիր դուն հեռուէն, ինչպէս փարոս,  
 «Անցայ բոլոր վլուանգներէ ու հասայ քեզ,  
 «Բայց բախտն ուզեց որ ես մընամ կարօտակէզ,  
 «Մընաս բարով, ո'վ իմ երազ յաւերժական,  
 «Մընաս բարով, մընաս բարով վերջին անգամ»:

«Ես ալ կու զամ, Սիամանթօ կեցիր իմ սէր  
 «Մի կարձեր թէ պիտի թողում ըզքեզ անսէր:  
 «Մենք միասին պիտի ըլլանք ալ, յաւիտեան,  
 «Կեանքը չուզեց, լաւ Մահուան մէջ կը միանանք  
 «Թող Ան զիտոնայ որ Սէրն իրմէ է զօրաւորա:  
 Ու աղջկը, ճիշով մ' ինքզինք վիճը նետեց . . .  
 Միփանի հովս անոր ողբը առաւ պահեց,  
 Ու կը պահէ, չար բախտին դէմ, իբրիւ անէծք:  
 Անդունդին մէջ անոնց շրթները միացան,  
 Ու լըռութիւն, ու լըռութիւն, ու լըռութիւն յաւերժական:

\* \* \*

Միրտերէն բայց իրենց,  
 Բուսան զոյգ մը կակաչ.  
 Գըլուխնին իրար յեց,  
 Մէկ-մէկու տըւին պաչ:

Զերթ կարճատեւ սիրոյն  
 Իրենց, խորհրդանիշ,  
 Հազիւ թէ արեւուն  
 Նայեցան պահ մը պիշ.

Ու թոռմեցան շուտով:  
 Բայց ամէն գարունին,  
 Շաղկունքն այդ սեւ սիրտով  
 Նոյն տեղէն կը բումնին:

Կ'ըսին թէ անսահման  
 Կարօտով, ողջ տարին,  
 Կը սպասեն այդ օրուան  
 Միրոյ սուրբ համբոյրին:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

(Նախերգանքը յաջորդիւ)

## ԲԱՆԱԿՈՒՐԱԿԱՆ

ԿՈԶՄԱ ԳՐԻՉ ԵՒ ԾԱՂԿՈՂ  
(1205? — 1219?)

•

Հնագոյն գրիչներու կարգին նշանաւոր տեղ մը կը գրաւէ կոզմա, որ տպրած է ժմիւ դարու սկիզբը: Իր պարագան աւելի ուշագրաւ կը գառնայ անով որ իր գրչէն ծանօթ են չորս Աւետարաններ, միջին երկաթագրով և նկարագրարդ: Եսին տեսնենք անոնց համառատ նկարագրութիւնը:

Ա. — Գրուած 1205ին, Խարբերդ, ժագաղաթի վրայ, միջին անկիւնաւոր երկաթագրով, երկսիւն և նկարագարդ, երաժիշտ Թորոս Քահանայի համար. — Հ. Բ. Վ. Խարբերդան, Մայր Յուղակ Հայ. Զենադրաց վենետիկի, Հատոր Ա., 1914, էջ 397—402, Հմետ. Քարեգին Կթղ. Յովաէլիսան, Յիշտառակարանք Զենադրաց. Հատոր Ա., Անթիկաս. 1951, էջ 803—4; Շողակաթ, 1952, էջ 279.

Այս Աւետարանի գրութեան ժամանակի ժաման ցուցակագրով կու տայ ոս ծանօթութիւնը. «Փամանակ 1205 (= ԱԾԴ), որը սակայն նոր գրչութեամբ գրուած է և շատ ետքը, վասնզի հնոյն բնաւ հետք մը չի տեսնելիք, որ ըստ իս այդ թոււակոնէն շատ աշելի էին ըլլալու էօ (էջ 398): Իսկ երկու էջ անզին գարձեալ կը ծանօթագրէ. «Ի թուիս (տեղը գատարկ թողուած, որը նոր գրչութեամբ լրացուած է այսպէս, ԱԾԴ): Մեր տեսութեամբ լիշեալ թոււակոնը լաւ կը պատշաճի այս Աւետարանին գրչութեան և կրնայ ըլլալ խոկական հարազատ տարեթիւը, նշանակուած ոչ թէ անոր այլ տարբեր գրչութեամբ»:

Բ. — Օրինակուած մագաղաթի վրայ, միջին մեսորափան գրով, երկսիւն, Վարդան կրօնաւորի պատուէրով. — Թ. Արք. Գուշակեան, Հանդէս Ա. Խորեայ, 1924, էջ 520; Գ. Կթղ. Յովաէլիսան, Յիշտ. Զենադրաց, Ա. էջ 663—4; Շողակաթ, 1952, էջ 279:

Գ. — Օրինակուած մագաղաթի վրայ, էէս երկաթագրով, երկսիւն և նկարագարդ Ռապնա կոստանդին և պիուպոսին համար.

— Մաղիկ Մաղիկ, Կ. Պալիս, 1891, Մայիս 18, էջ 3, Տրդատ Վ. Պալեան:

Այս ձեռագրին յիշատակարանները չեն մտած Գարեգին-Լաթօնիկոսի մազովածուին մէջ: Իսկ խորանները, զարդերը, պատկիրները և զարդագրերը և ճաշակուոր չինուած, սքանչելի, զմայլելի զեղարուեան են և ուկեղօծեալ: Ըստ ցուցակագրովին:

Դ. — Գրուած 1219ին Բարբանաց Անապատին մէջ (Խարբերդ), ժագաղաթի վրայ, միջին ուղղանկիւն երկաթագրով, երկսիւն և նկարագարդ, Խաչեր Քահանայի համար. — Գ. Կթղ. Յովաէլիսան, Յիշտ. Զենադրաց, Ա. էջ 801—804:

Այս չորս Աւետարաններուն մէջ, աւելի կամ նույն ընդարձակութեամբ, կը զրոնաւին մի քանի յիշատակարաններ գրչէն կ'արտագրենք կարգաւ:

Ա. — Աւետարան

1. — Զթաւրոս երաժիշտ՝ զատցաւզ ուորիսիս յիշեսջիք ի Տէր Թրիստոն ամենայն որդիք Սիսին որբայ, ումէն: Այլ և զմեզուցեալ զրիչս զկոզմա աղաչեմ:

2. — Զպատուական Հայր Թորոս երաժիշտ և Ընտրեալ ուորի յիշեսջիք ի Տէր Թրիստոն ամենայն որդիք Սիսին որբայ, որ նորոցել ետ, ամէն: Այլ և զանարժան Կողմա զրիչ, աղաչեմ:

3. — Ծնորին Տեան և սկրա եւ ուղրմաւրեամբ նույն կատարեցի զատուածայաւուսուրը Աւետարանսի քաղաքիսիս Խարբերդ, ընդ հոգանիւաւ որբոյ Կարագետին և ուորի Յակովրայ, ի թուիս ԱԾԴ [= 1205] ընդ ձեռամբ Կոզմա մեղաւորի և անարժան զրչի: Հրամանաւ աստուածահանոյ հայր Թորոսի և ընտրեալ երաժշտի: Արդ աղաչեմք զամենիսեան որք Կարդայք, յիշեսջիք զիս զմեղապարտ զրիչս զկոզմա և զննուան իմ եւ զելքարտ իմ և զթորոս երաժիշտ զատցաւզ ուորա, զի ուղրմացի մել Տէր Աստուած և գրկեսցէ յանէլչ զենինի հրայն. և յիշողացզ տացէ Տէր զանապատ բարիսն ի Թրիստոն Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս, ամէն:

4. — Զկին ուն տառապիւալ մեղաւոր որոյ անուն Թագուինի, յիշեսջիք ի Թրիստոն, և Աստուած ձեզ ողորմեցի, ամէն:

5. — Ի թաւրոսի երաժիշտի աւգնեաթ Քս. յաւուր մեծի այլ և կողմա մեղաւոր տիրմար յետին զրչաւորի:

## 1. — Աւետարան

1. — Զմեղապարտ գրիչս զկողմա աշ  
դաշիմ յիշել:

2. — Փառք բարերարին Ասուծածոյ ։ ։ ։  
Նորին Ասուծոյ սկսայ եւ ովորմութեամբ  
նորին կատարեցի զիեանսաբեր ուլոր Աւետարան ի ճշմարիտ և փառաւոր աւրինա-  
կէ, որոյ մականուն Կողման Հարունակու-  
թիւնը կը պահախ:

## 3. — Աւետարան

1. — Ատացաւզ սորա զաստածածա-  
րնակ առւրի եպիսկոպոս վերապիտող տանն  
թապնա զտէր Կոստանդին և զշնորհազարդ  
կրտւաւոր զեղբայր նորա տէր զԵպիսկոն  
յիշեսջիք ի Քս. ամենայն օրդիք լուսոյ,  
որ ետուն գծել զիեանսաբեր Ա. Աւետարան  
ի յիշատակ իւրեանց և ծնաւզաց իւրեանց,  
ամէն: Ալ և զանարժան գրիչս զկողմա աշ-  
դաշիմ յիշել արժանի արարէք և ԱԾ ձեզ  
ողորմեցի, ամէն:

2. — Զարբազան եպիսկոպոս զտէր Կոս-  
տանդին զատացաւզ սորա յիշեսջիք ի Քս.  
ամէն: Ալ և զմեղապարտ գրիչս զկողմա:

3. — Ասուծածապատիւ եպիսկոպոս  
զտէր Գրիգոր վերապիտող տանն Փարզ-  
մբնաց և զհրաշալի ծերունի եղբայր նորա  
զԴազարէ կրտւաւոր յիշեսջիք ի Քս. ամ-  
ենայն ընթերցողք սորա, ամէն: Ալ և  
զմեղապարտ գրիչս զկողմա աշդաշիմ յիշել  
և ԱԾ զծեզ յիշելոյ արժանի արացէք, ամէն:

## 7. — Աւետարան

1. — Զանարժան գրիչս զկողմա յի-  
շեսջիք ի Տէր:

2. — Փառք ։ ։ ամէն: Շնորհին Տեսան  
սկսա եւ ովորմութեամբ նորին կատարեցի  
զիեանսաբեր Ա. Աւետարան ի փառաւոր  
աւրինակէ, որոյ Մուրզանեցի Կոչիցի: Ի  
թուիս Ակը [= 1219], ի նուաստ անապա-  
տիկս Բարզաննա, ընդ հոգանեաւ Ա. Ասո-  
ւածածածնիս, ի հայրապետաթեան տեսան  
Յոհաննիսի և յեպիսկոպոսութեան տէր Ա-  
սուաթիւ, ընդ ձեռամբ Կողման մեղաւորի  
և անարժան գրչի: Արդ, ով ասուծածատէր  
հարք և եղբարք, յորժամ լուսաւորիք սո-  
վու, յիշեսջիս զկողմա և զծնոլո իմ եւ  
զելքարտ, զի ողորմեցի մեզ Տէր Քրիս-  
տոս, և զատապեալ կին ուն Թագուհի, և  
յիշողաց տացէ Տէր զանապատ բարիսն ի  
Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք  
յաւիտե ։ ։ ։

Վերոպրեալ յիշատակարաններուն մէջ  
տեսնուող ոճի ակնքախ նմանութիւնները,  
ընդգծուած մեր կողմէ, կը հաստատին գրչի  
նոյնութիւնը: Այդպէս չէ ակայն պարա-  
գան հինգերորդ Աւետարանի մը, զոր Պ. Յ.,  
Յիշատական ներկայացուցած է Շողա-  
կաթի Էջ (1952, էջ 278—283 և 325—331),  
Կողման Գրիչ և Երիք Յանձնական Մարտ-  
նկարները խորագիրը կրազ իր առութեամբ  
րութեան ընթացքին: Այդ վերջին Աւետա-  
րանը միասին է և թղթեայ, օրինակուած  
անցման կոչուած հին բարորագրով և ունի  
համեալ երկու յիշատակարանները:

1. — Տէր ԱԾ ողորմիա Կողմայի մե-  
ջապարտ կրտւաւորի և անպիտան գրչի:  
ի յաւորի քո գատաստանի, և իւր ծնո-  
զացն Պետրոսի և Մարիայի ամէն ամէն:

2. — Քս. ԱԾ ողորմիա Կողմայի մե-  
ջապարտ կրտւաւորի և զծողիք կենաւուու  
տասի քո, և ծնողաց իւրոց յաւոր զա-  
տաստանի քո ամէն: Ծնդ նոսին Պապա  
Սիմեոնի Առաջայցոյ և ծնողաց իւրոց  
Կիւրակս քահանայի ամէն ամէն:

Այս յիշատակարաններուն միւսներէն  
ունեցած անձական մեծ տարրերութիւնները,  
և ձեռագրին թուղթի վրայ, միասին, և  
հին բարորագրով կամ անցման գրավ օրի-  
նակուած ըլլուլ հաստատապէս կը ցհւցնեն  
թէ այս վերջին Աւետարանը գաղափարով  
Կողման տարրեր է նախորդէն և ապրած է  
անկէ ետքը:

Կողմա զրիչի յիշատակարաններուն մէջ  
ուշգրաւ կէտ մըն է յիշատակութիւնը իր  
զործածած օրինակներուն, այսպէս, Բ.  
Աւետարանը զաղափարած է «ի ճշմարիտ  
և փառաւոր աւրինակէ, որոյ մականուն  
Կողման օ: Խակ Պ. Աւետարանը զաղափա-  
րած է «ի փառաւոր աւրինակէ, որոյ Մուր-  
զանեցի Կոչիցի»:

Կողման օրինակէն զաղափարաւած Ա-  
ւետարանը չունի ատհաքրանութեան հա-  
մարը Ղուկասի մէջ, չնացեալ կնկան պատ-  
մութիւնը Յովհաննէսի մէջ և Մարկոսի  
վերջաւորութիւնը (Հանդ, Ամս. 1924, էջ  
520): Կողման օրինակը կը թուի թէ այն  
Աւետարանն էր որուն պատրաստութիւնը  
կապ ունէր միլ. զարու նշանաւոր վարգա-  
պետներէն Յովհաննէս Կողմանին զաղափար-  
յաւիտե ։ ։ ։

## ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

•

F) — «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»

Նարեկացին ոչ միայն իրքի միասիկ, այլև իրքի խոշոր ստեղծագործող պարզ գիտակցում է, որ իր անձնական ապրումների մէջ հասարակական ընդհանրացութիւնը է կատարում, բայց այդ մասին զիս յետոյ, այժմ հատեսնք նրա ռեզը իրքութեան լուսաւանութիւն բավանդակութեան զարգացման ընթացքին:

Եւ բանզի սկիզբն կալոյ խօսել ընդ ենք՝ որ ի ձեռին ունիս գույնչ կենացնութեան հոգուոյ բազմամելիք,

Յիշաւի սարսահալ դուստցեալ տագնապաւ մեծաւ յաւել երկնչիմ . . . ,

(Բան Գ. — Ա.)

Դեռ նոր է ոկոնք բանաստեղծը սրտի խորքերից իր խօսքը Աստուած հետ, բայց զա բաւական է արդէն, որ նրա էութիւնը համակուր մեծ ահով ու տագնապով: Այդ ահը անչափ տանջալից է, ուստի նա Յովդը պարզ աւելի ողբալի պատկերացնելով իր

ուած ուրիշ երկու Աւետարաններու յիշաւակութիւններ ևս հասած են մեզի: Մին 1144 թուականով մազաղաթեայ յիշաւակարան մը ուր կը կարգացուի, և . . . այսմ անգիւտ մարգարտիս և ամենալաւ աւրինակիս, որ կոչի Գրիգորի Մուրզանեցւոյ ճարտարագիծ գրչի . . . » (Հանդ. Ամս. 1902, էջ 62): Միւսը ճիշգ նոյն բառերով և կարեար յաւելումով մը, 1230 թուականին կ'ըսէ. « . . . այսմ անզիւտ մարգարտիս և ամենալաւ աւրինակիս, որ կոչի Գրիգորի Մուրզանեցւոյ, ճարտարագիծ գրչի և անյաղթ գիտնականի» (Հ. Բ. Սարգիսեան, Յուցակ Զեռ, Վենետիկի, Ա. Հատոր, Աւետարան թիւ 129, էջ 572):

Ո՞վ էր այս ճարտարագիծ գրիչ և անյաղթ գիտնական Գրիգոր Մուրզանեցին: Առ այժմ սաշափը միայն յայտնի է որ կ'սպարէր 1144 թուականին կամ անկէ տառաջ:

Ե. ԵՊԱ. ԾԱՌԱԿԱՆ

դրութիւնը, ասում է, թէ աւելի լաւ կը լինէր՝ ինքը բոլորովին ծնուած չէ լիներ: Նո սսսկում է Աստծու անհեղ և անաշագատատանին ներկայանալու մտքից և անհրաժեշտութիւնից, որովհետեւ Աստծուն ոչինչն չի կարող զաղանի մնացած լինել, իսկ ինքը չէ որ երկրածին մարզ է ուկին ցաղականաւ անկայուն գոյիւ զբաղեալը, որ ինքը բացարձակապէս ստում է ամէն քաղաքախին և ճշմարտութիւն բնուած չի խօսում: Ինչ երեսով նա պէտք է ներկայանայ Աստծուն, երբ նրա ցոյց տուած երախտիքների նկատմամբ ինքը չափազանց ապերախտ է գտնուել:

Բանաստեղծը ասում է, որ Աստուած մարդուն ստեղծել է իր պատկերի նման, տարբերել է միւս չնչաւորներից՝ սժաւելով մտքով ու բանականութեամբ և պէճել է անձնիչնան կիսանքով, բայց այդ բոլորի փոխարէն ինքը երախտամուս է գտնուել և նրա հոգուն չի տուել հանգիստ իր մարմինիցն տաղաւարի մէջօ: Նա զարմանք է յայտնում այն բանի համար, թէ ի՞նչպէս Աստուած չի այցում իր նանրութեամբ լիցուն բերանը, չի կշամբում իրեն այն ժամանակ, երբ ինքը յանդգնում է նրան կցորդուել: Այսուղ մի պահ նարեկացին ընկնում է յուսահատութեան գիրկը և բացանչում, թէ ինչ օգուտ հիւսել չափաբերական կակծալի խօսքեր, երբ իր մեղքերի չափը անցել է ու բժշկութիւնը զարձել անհնար, և ինքը արդէն մեռած է հոգով: Բայց այս տրամադրութիւնը տեսում է մի պահ միայն, իսկոյն նա սթափուում է յուսահատութիւնից և գրում:

Խակ արդ զի՞նչ բարենք գոյ առ այս, Կամ ո՞ր օգուտ ինձ առ այն սահման Ծիրացից ձայնիս հեծուրեան, լինել, Եւ ոչ զամբարեալ շարաւ մահացու վիրիս՝ հարաբեաւ բանիս արտակ հերել . . .

(Բան Զ. — Ա.)

Մազում է նորից փրկուելու յոյսը և այն կապում «զարծած մեղքերի» ամենացածան խօսատվանութեան հետ և բանաստեղծը սկսում է իր մեղքերի և յանցանքների պատկերման ու թուարկման անընդհատ շարքը: Բայց հնարաւո՞ր է բոլոր խօսագանել, հորց է տալիս նա: զրանք

այնքան շատ են, առում է նա, որ եթէ ծագերի ջուրը թանաք դարձնի. լայնատարած դաշտերը թղթի վերածի, եղեգնուաների անհամար եղեգներից գրիչներ չենից, իր բարդած անօրինութիւնների նոյնիսկ մի ժամանակամ չի կարող զրի առնել. Եթէ Արարատ լեռ կը եղաք մի նժարը գրուի, իսկ միւս նժարում իր մեղքերը՝ այն չառ թեթև կը լինի դրանք կշռելու համար:

Եարեկացին իր մեղքերը թուարկելիս և խոսուացնելիս՝ իրեւ միստիկ աշխարհիս երեսին ինչքան մարդկային յանցանքներ զիտէ և ինչքան որ իր անսահման երեակայութիւնը կարող է ստեղծել. զրանք բոլորը վերապրում է իրեն թէկուզ այն պատճառով, որ ինքը մարդ արարած է և կարող էր զրանք իրաք ինքը զարծած լինել. (Եարեկի ստեղծագործական այս կողմը նկատի ունենալով, պէտք է սիսալ համարել բանասէրներից ոմանց՝ թուարկուած այդ յանցանքներից բանաստեղծի ինքնակենսագրական փառաեր գուրու բերելու փորձերը): Եարեկացու պատկերացումով՝ մարզու մեղքերը անթիւ անհամար են, որովհետև զրանք կապակցուած են իրար հետ և անընդհատ աճում են. զրա համար էլ մարդկային մեղքերի չափը նոյնիսկ չի կարելի համեմատել ծովափի տաւզների հետ, որոնց հատիկները իրարից անջատ են, առանձնական և զուրկ՝ ծնելու ու աճելու հարաւորութիւնից: Իսկ բանաստեղծի մեղքերը՝ ահա

Ոմն եւ ծնունդի իւր,  
Ոմն եւ շառաւիլի իւր,  
Ոմն եւ բիծէ իւր,  
Ոմն եւ արկածի իւր,  
Ոմն եւ փուլի իւր,  
Ոմն եւ արմասի իւր,  
Ոմն եւ հասուածի իւր,  
Ոմն եւ պտուլի իւր,  
Ոմն եւ նօխարի իւր,  
Ոմն եւ նինիւլի իւր....  
Ոմն եւ ամպրուլի իւր,  
Ոմն եւ կալլակի իւր,  
Ոմն եւ հասմունի իւր,  
Ոմն եւ նեղեղի իւր....  
Օժնդրն եւ դառնուրիւն իւր,  
Կործանիչն եւ ննազանդեալի իւր,  
Բանաւորն եւ յելուզակի իւր,

Դուռողի եւ սպառագենի իւր,  
Աւազուկապին. եւ զումարտակի իւր,  
Դազան եւ կորիւնի իւր,  
Խածանուն եւ ծակուալի իւր...

(Բան Զ. — Պ.)

Արանք են, առում է նարեկացին, բուլոր հոգիները ապականող մեղքերը իրենց սուրագաս մասերով, որոնցից ամէն մէկը իր հերթին գարձեալ բաղկացած է հազարաւորներից և բիւրաւորներից: Ուրեմն, մարդու յանցանքները կապուած են իրար հետ և անզիրջ մէկից ծնւում է միւսը, մէկով պայմանաւորում է մի ուրիշը: Սաւկայն զրանից մարդ պէտքչէ յուսահատուի, որովհետեւ թէպէտ մեղքը ճիճուների պէս չուտ է ծնւում ու բազմանում, բայց ճիճուների պէս էլ չուտ է մեռնում, եթէ գործարում են որոշ գիմազրական միջոցներ: Այս խորհրդածութիւնը, միւնոյն է, չի թէթեացնում Մատեանի լիրիկական հերոսի գրութիւնը և վերացնում ողբը, քանի որ, առում է նա, մարզը իրեն նեղողներից ոմանց թէպէտ կարող է ստասկեցնել. բայց միւսամանակ ոմանց էլ ուժ է տալիս. որոնք հոգին տանում են զէպի կորուսու: Ուրեմն նորից տանջալից ապրումներ, նորից բանաստեղծի այն զանեղրակացութիւնը, թէ ստեղծուած է ինքը իրեւ տանջանքի նիւթ և երեք հոգեկան հանգստութիւն պիտի չունենայ, ուստի մուսմ է իր անձին, իրրե դատապարտուածի վայր բացազանչել:

Վայ անձիս մելպուորի, զի զարարիշն իմ բարկացուցի ...

Վայ բեռնակրիս ծանրութեան մեղաց զմնեից, որ չունիմ զառնալ առ հանդուսական զլսարարն ...

Վայ եղեգնուխուի կիզանողական նիւրոյ, որ սոչուելոց եմ ի զենենենին ...

(Բան Է. — Պ.)

Այն յոյսը, որ բանաստեղծը կապում էր զղումով ու ինքնախարազանութեամբ փրկութիւն ձեռք բերելու հետ, չի արդարանում. նա կանգնում է կորստի հզրին և, աչքի առաջ ունենալով գժոխքի անարկու սարսափները, ծանր հոգեգիճակ ապրում է բայց զարձեալ զա մի պահ է միայն. նա

յուսուվ գանում է այդ յուսահատական դրսթիճից զուրս զալու ելքը. Նու սրոշում է թողնել զգջումն, ինչպէս և մեղանչումը՝ համոզուելով, որ թէ մէկը և թէ միւսը, թէպէտ իրարից տարբեր բաներ են, բայց հաւասարապէս մարդուն կորոտեան են մատնում:

Եւ արդ հանգի միապէս մասն կորսեան եւ զղումն ուժգնապէս եւ մեղանչել մոլորակուր.

Զի քի եւ օսարցեալ իմն են ի միմեաց ալյալլուրիւնք նմանուրեանցն, Ասկանի զիերպարան եւկախանչիւրոցն առ միմեան եղեալ, Զմի եւ ըզնոյն վիատուրեան ծնունդ արտքին:

Զի մինն զնօրշին ձեռն իբր ասիլիար քերանաւուան, Իսկ միւսն ըստ նմանուրեան հառուսական պահաւելինաց Յանգբայս եղեալ, զյուսոյն առասան խզե...

(Բան Փ. — Ա.)

Դրա համար էլ, շարունակում է նա, պէտք է թողնել ինքնախարազանուումը, միտքը զտիւ տարակոյսի թանձր խաւարից և հաւատքի շինուածքը կառուցել: Պէտք է յոյսի և սիրոյ կապերով զօդուել Աստծու հետ, իսկ այդ բանին կարող է օժանդակել Քրիստոսը: Բայց առանց հաւատքի այդ անկարիլի է, պիտի հաւատալ, որ Քրիստոսը ինչ որ կամենայ կարող է անել, և ով որ հաւատում է, նրա համար ամէն ինչ հնարաւոր է: Հաւատքն է որ մարզուն մօտեցնում է Աստծուն: Աւստի ինքը լինելով մահուան ափը հասած մէկը, ցանկանում է մի քիչ չունչ քաշել, կազզուրուել, կանգնել և Քրիստոսի օժանդակութեամբ քրկուել անդարձ կորսաից: Բանաստեղծն ինքնիրեն և ընթերցողներին համոզելու ամբազնդելու համար մէջ է բերում Աւետարանից բազմաթիւ գէպքեր, թէ ինչպէս հաւատքի շնորհիւ շատ մեղապարտներ քրկուել են: Հաւատին գիմելով նա թողնում է ողբը, վստահ իր յաղթանակին, յոյս յայտնելով, որ վերջ ի վերջոյ կը կարողանայ «Եւրան տեսնել:

Այլ այս անսուերագիր վստահուրիւն ապաշամ կարծանեալս՝ կանգուն, [Տան, Թուլապացեալս՝ յալբող],

Վրիպեալս՝ ի դարձն կենդանական, Ամենարօւան շարագրուս՝ ի յոյս, Մահու մատնեցեալս՝ ի կեանօն, Ընդ ապականուրեամբ վանառեալս՝ ի ձիրն, Դմոխային զործովք գրաւեալս՝ ի լոյս ...

(Բան Փ. — Ա.)

Թուում է, թէ այսուհե պէտք է վեր չանար սլատեան Ազրերգութեանք պէտք, բայց այս խօսքերը տոււած են տասնմէկերորդ զիմում, էլի մնում է զիս ուժուուն շորս զլուխ ... ինզիբրն այն է, որ բանաստեղծի հոգու այս խաղաղութիւնը երկար չի տեսում նրա յայցերն ու ապրութերը, ինչպէս ծովի մակընթացութիւնն ու անշատուութիւնը, խիստ ալիկոծութիւնն ու փրփրագէզ ջրերի հանգարատութիւնը յաջորդում են իրար, ըստ որում, բնութեան այս օրինակից տարբերուելով, միշտ զիւղրական տախինանի բարձրացած, միշտ նոր մանրամասնութիւններով և արտայայշչական առաւել ուժեղ ու նոր ձեւերի մէջ մարմարուած: Կորսուեան սարսափն ու ողբը, տանջող տարակոյները, երջանկութեան հասնելու յոյսն ու հաւատալ կոհակ առ կոհակ հրում են իրար, փոխարինում են մէկը միւսին և ինչքան մեծանում, ուժեղանում է մէկը, այնքան մեծանում, ուժեղանում է միւսը:

Այսպէս է սեղծւում պոեմի՝ դրամա ժիգմով հարուս բնբացեր, որը սակայն պէտք է ունենար իր գախճանը: Եւ այդ վախճանը բնականորեն զալիս է և զալիս է լաւատեսութեան յաղթանակով: Քրկութեան և աստուածային էութեան հետ միանալու հաւատով, բայց այդ միայն այն բանից յետոյ, երբ մուալ յուսահատութիւնն ու անդառնալի կորսուեան սարսափն այնպիսի վիթխարի չափերի են հասնում, որպիսին կարող էր միայն նարեկացու հանձարը պատկերել:

Եախ՝ բանաստեղծը հետզհտէ մեծացնում է իր ամեղքերին չափը և թիւը: Եաչի բաւականանում արգէն խստովանած յանցանքներով: Նա միշտ զոնում է, որ զիս բոլորը չի տոււած և պէտք է էլի շարունակիլ:

Կուսովինեցայց վերոտին դարձեալ ատամօր զինացեալ շարուրեանցն զբիծս ...

(Բան Փ. — Ա.)

Դարձեալ այլօքանեցից ի նոյն ռարութակ  
բարդեալ  
գլուխունց եղանակ գործված անձին...

(Բան Ի. - Ա.)

Բարդեալ իւ դիզեա ունձինդ մեղապարտի  
Բարձրանան լոգունս զեյս խոհեր բազ-  
մանանեայ,  
Անձ իր կը աշամբեալ լուսախրանդ բանի:

(Բան Խ. - Ա.)

Պոէմում այսպիսի չառ ուրիշ տեղեր  
կարելի է ցոյց առաջ, որ բանաստեղծը ըն-  
թերցողին բացատրում է իր ներքին աշ-  
խարհի վիճակը: Նա անընդհատ բարզում  
և զիգում է իր անձին ուղղուած կշամ-  
բանքների ու մեղազրանքները, աւելաց-  
նում է նոր ողբեր: Միաժամանակ զրանց  
համապատասխան չափով բարզում ու զի-  
զում է Առածուն և Քրիստոնի ուղղուած  
նոր զավատանքներ, աղօթքներ ու աղա-  
չներներ: Եթի նրան թւում է, թէ իր ա-  
ղաչանքները տեղ են հասնում և պէտք է  
ինքը ներման արժանանայ, իսկոյն ծագում  
է աւալիլուր, այդ սարսափելի տանջանք-  
ներ պատճառող ապրումը, արգե՞ք Աստ-  
ծու համար ընդունելի են եղել իր ապաշ-  
խարութեան գիմումները, մի բան, որ ոչ  
մի կերպ հարաւոր չէ խմանու: Արգե՞ք  
ինքն իր բոլոր մեղքերը խսուագանել է ...  
և բանաստեղծի ահուելի չափերի հասնող  
լիշողութիւնը սկսում է հրապարակ հանել  
նորերը, որոնք միշտ նախորդներից աւելի  
ծանր են:

Նարեկացին իրեն համարում է մի չըն-  
չառը մատեան, որի մէջ բարզուած են  
ողբեր ու վայեր և հառաչանքներ: Նա ա-  
ռում է, որ ինքը հոգու թեհրով սլանալով  
և ըջելով մարզկային անրաւ ծնունդների  
մէջ ու մաքով բոլորին կշուղատելով, ոչ  
ոքի չի կարողացել զանել իր չափ մեղա-  
ւոր, և այդ զես բառական չէ: Ինքը չի  
կարողացել իր մաքի երիվարը բանականու-  
թեան սանձով կանգնեցնել և մաքի թոփչք-  
ներով մութ խորհուրդների միջից սլանա-  
լով՝ մարզկային բոլոր հին չարիքներին  
նորերն էլ ինքն է աւելացրել: Արովհնեա-  
նքը Արարչի գէմ միշտ նենգաւոր է զըտ-  
նըել, իսկ սառանայի գէմ միշտ հաւա-  
տարիմ, բայց որ ամենից զարհութելին է,  
ինքը երրեմն էլ ուղղուի բմբաստցից ու  
պատամբել է Արարչի գէմ:

Սպառնացար, եւ ոչ զարնուրեցայ.  
Արգահատեցիր, եւ ոչ երբեք լուայ.

Ու ե ապատիքուրեան յայտնի նեանակ:  
(Բան Խ. - Ա.)

Ամբարտաւանեցայ փուխս օնչաւոր,  
Ամբարհուանեցայ կաւս ձայնաւոր,  
Հպարտացայ նողս անարզուրեան,  
և վեր ամբարձայ մոխիրս մերժելի,  
Բազուկ կառուցի բաժակս մանելիի:  
Տարածեցայ առաւել իբր վեն,

Եւ գարձեալ իբր զներեալ առ ինքն ամ-  
փոփեցայ:  
Բարկուրեանն բոցով ցոլացայ տիզս բա-  
թիք զանեւու ո՛վ մեծամեցիի, Յնաւոր,  
Ու ընդ կառուանեաց մահու եմ փակեալ:  
(Բան Խ. - Ա.)

Բանաստեղծը (որն այստեղ սքանչե-  
լիուէն արտազակի է ժամանակի հակակրօ-  
նական արամազրութիւնները) ասում է, որ  
նման սարսափելի յանցանքներ գործելուց  
յիտոյ մարզը Արարչին մօտենալով էլ ի՞նչ  
կարող է խնդրել նրանից, էլ ի՞նչի՞ կարող  
է նա արժանանաւ: Աւստի նրան թւում է,  
թէ ինչին ձգաել է անընդհատ, \* զրանից  
բոլորպին զրկուել է արդէն:

Քանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլայ  
սատկապէս,  
Յանցակին ձգտիլ իմոյն ոչ հասի.  
Եւ ենագոյնն ամբառանալ՝ ասուս զլորեցայ,  
Յերկնային ուլույն՝ անդեղոց մատեցայ,  
Եւ զլոււանան առաւել՝ յաւել վնասեցայ,  
Յանարան պահիլ՝ մանր խորտակեցայ,  
Կործելով ընդ անեակն մցիլ՝ յաջն զրեցի,  
Եւ զերկուրդն խուզիլ՝ զնախնին կորուսի...:

(Բան Խ. - Ա.)

Եւ զա նրան անհուն վիշտ է պատճառում  
և երբեմն նա այս սոչ մի տեղից ոչ մի  
օգնութիւն չի սպասում այդ տանջող վշտից  
զուրս զալու համար և ոչ մի յենարան չի  
գտնում իր խորտակումը կասեցնելու համար:  
Եւ ուրդ զիտ՞րդ առից մխիքարուրին այս-  
էանեաց վեսաց,  
Եւ կամ ընդ ուխանեաց տարակուանոց  
խուսի լուսուռուրին յուսոյ կենաց  
լատնեցից,  
Եւ կամ ս՞ւր արգել զլոււապար ոսին  
կառուցից,  
Եւ կամ յո՞ր վասհուրին զաշս իմ յուեցից,  
Եւ զի՞նչ անդուրուրին ծփանաց նկատեցից,

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԵՐԵՐ

### ԱՐԱՔԵԼՈՑ ԿԱՄ ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔ

**ՊԱՏՄԱԿԱՆ.** — Բառ առանգութեան, Առաքելոց Վանքը հիմնած է Ա. Գրիգոր Լուսաւորիչ։ Տիրինկառար կոչուած Անահատական մեհնանին տեղ, անդ գետեղելով Պետրոս, Պօղոս և Անդրէս Առաքեալներու ժամանքները։ — Ալիշան, Հայոպատում, էջ 98։

Ա. Գր. Լուսաւորչի կողմէ Առաքելոց Վանքին Վահանայր կը կարգուի Զենոր Գլահի եղբայրը՝ Ղազար, որուն անունով Վանքը կը կոչուի Ղազարու Վանք։

Անսու կը հանգչին սրու հանգստարաններու մէջ յիշատակարաններով և մահարձաններով մեր երանելի թարգմանիչ Վարդապետներէն չատեր, Մայսէս Խորենացի, Դաւիթ Անյաղթ, Մամրէ Վերծանող, և այլն։ — Եղիշէ Եպոս, Զբիհնկիրեան, Յիշատակներ, 1925, էջ 54։ — Այս պատճառաւ երբեմն այս Վանքը կը կոչուէր նաև Թարգմանչաց Վանք անունով։

Տարօնի իշխան Չորտուանէլ Մամիկոննեան, 1104 թուին, իր ծննդավայր Բերդակ գիւղը կը նուիրէ Առաքելոց Վանքին, յատուկ պարզեւագիր յիշատակարանով։ — Հայոպատում, էջ 396։ Յագէփեան, Յիշատակարանը Զենորաց, Անթիլիսս, էջ 287։

Առաքելոց Վանքի Առաջնորդներէն ծանօթ են հետեւելները։

1. — Պօղոս Վրդ. Տարօնի, 1101-1123, կոչուած «մեծ հոեսոր Հայոց», ունի գաւանաբանական և ծխազիտական զրուածք-

նւ կամ յօ՞ր ըղձական դիւրուրիւն ձեռն  
համբարձից։  
Զի երէ ի ձեղուն բարձրուրեան եւկնի,  
Անտի անձրեւեաց հոււն Սովոմայ...  
իսկ երէ ի յատակ խորուրեան եւկրի,  
Սա երաց զկոկուրդն բիբանդական  
նւ եկուլ գիտական բանակօն Աբրեսնի։

(Պատ. ԱՅ. — Պ. )

(Տարումակիի 8)

Մ. ՄԿՐԵՍՆ

ներ։ Կը վախճանի 1123 թն և կը թաղուի անդ։

2. — Աբրամամ Վահանիար, 1204. Զունագիր Կ'ԷՌԱՋ Նշանաւոր Տօնականին վերագնման, մասնակցութեամբ բարձրաթիւ միաբաններու և բարեգուածներու։ — Հայոպատում, էջ 450։ Յիշատակարանը, էջ 719։

3. — Յարսել Վահանիար, սպասուն վարած է 1204 էն հաք. — Յիշատակարանը, էջ 715, 721։

4. — Ներսէ Վրդ. Տարօնի, 1271-9. — Պ. Արք. Յագէփեան, Խաղբականք, Բ., էջ 194-5։

5. — Տեր Թաղեան Առաջնորդ, 1314. — Լ. Ա. Խաչիկեան, Յիշատակարանք մին. Դարի, Երեան, էջ 105։

6. — Տեր Յովհաննես Առաջնորդ, 1339. — Ե. Լալայեան, Յաւցակ Զես. Վասպուրականի, էջ 201։ Խաչիկեան, Յիշատակարի, էջ 321։

Ալլազգինները Կ'աւերեն Վանքը 1371 թուին, և Կրօնաւորները կը ցրուին ուրիշ զաւառներ. — Հայոպատում, էջ 548։

7. — Պօղոս Աբեկափիսկոպոս, 1439. Մուշի ամիրան կը կողովուէ Վանք. — Հայոպատում, էջ 549։

8. — Թաղեան Աբեկափիսկոպոս, 1540. Կը նորոգէ Առաքելոց Տաճարի մեծ զբարէթը. — Պ. Սրուանձտեանց, Թ. Ազրար, Բ., էջ 422։

9. — Բարսել Եպո. Մարմանցի, Գաւանցի, Արծունի, 1601-1637. որդի Ապուհարի և Ելչիկի, աշակերտ և հոգեսոր որդի Աւանայցի Սրապիսն Կաթողիկոսի Վանքին մէջ նորոգութիւններ կատարած է 1607 թն. — Հանդ. Ամս. 1956, էջ 417 հ.։

10. — Յովհաննես Եպիսկոպոս, 1637-66. Վանքին քայլայուած զիրքերը նորոգել կու առյ. — Հանդ. Ամս. 1956, էջ 419, 422. Հայոպատում, էջ 550։

11. — Գաւիր Աւրգապետ, 1671. — Հ. Ասկեան, Վասպուրականի Վանքերը, Պ., էջ 1007։

12. — Գասպար Վարդապետ, 1755. — Պ. Ազրար, Բ., էջ 488։

13. — Յովհաննես Վրդ. Ապավեան, Աւրանցի, 1794-1839. — Կը նորոգէ Վանք և զիրգուած պարտքերը կը վճարէ. Իրեն կը զործակցին հին միաբաններ, Խաչատուր

գրք. Վանեցի, Գրիգոր Գրգ. Պոլսեցի, Յառագլուհին Վրգ. Արդանցի, Դավար Վրգ. Մոռուցի և Կիրակոս Վրգ. Դէրգիգանցի. — թ. Աղբար, Բ., էջ 486-8:

14. — Յովհաննես Ծ. Վրդ. Մուշտիան, 1874-1899. — Գ. Վ. Արուանձտեանց, Հայոց և Նորոց, էջ 28-9, Եղիշէ Եպս. Զիլինկիրեան, Յիշտակներ, էջ 54:

Յովհաննես Վարդապետի Կողմէ Երբեմի անտեսուած Ճեռազիրներուն վերաբերմամբ ցոյց արուած հոգածութիւնը կը յիշատակէ Գ. Վրդ. Արուանձտեանց. «Եթոք նախ քան զքսան ամ ունէր Առաքելոց Վանքն ոչ սակաւ Ճեռազիրոց զետեղեալ յարկեցս և եղեալ ի խորանին որ առընթեր Աւագ Տաճարին յաջմէ կուսէ. բայց այնքան անայցելու թուղեալ էին զայնոսիկ, և անհոգ զգտանիաց նորին, մինչեւ յամս քանիս ի ձիւոյ և յանձրեոյ ծածկեալ ձեղուն, և ձիւնք և շաղախ թափեալ ի վերայ և ի մէջ արկեղցն, ապականնեալ էր և փչացուցեալ զրագուման: Զարդիս նոր Վանահայրն Արժ. Յօվհաննես Վարդապետ Մուշտատեանն, Խընամ ունի վասն Թացելոցն, և հոգայ զշինութիւն սուրբ տանն եւ տաճարին»: — Հայոց և Նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 28-29:

Վանքը աւերակ կը դառնայ 1916 ին, թշնամիներու կողմէ կը քանուին զանգակատան, գաւթին, և տաճարին գմբէթները, կը խորտակուին թուրդմանիչ Վարդապետներու խոչարձանները, կ'աւերակուին միաբաններու և ոխտաւարներու սենեակները. — Արարատ, 1916, էջ 581:

ՄԾՈՒԱՐԻԹՈՅՑԻՆ. — Առաքելոց Վանքի մշտկութային գործունեութեան մասին քիչ են տեղեկութիւններ: Անզ օրինակուած զրչագիրներէն տիգքը մաս մը միայն հասած է մեզի. Այսպէս.

Ա. — Վարդան Քահանայ Կարնեցի, Կրիչ և Մազկող, 1204-5 ին Կ'օրինակէ մէծ Տօնական մը, միջին երկաթազրով, և գեղեցկորէն կը ծագէէ, Բարերդցի Աստուածութիւն պատուէրով. — Հ. Բ. Արզգիսան, Յուցակ Զեռ, Վենետիկի, Բ., էջ 471-7: Հայապատում, էջ 448: Յիշտ. Զեռպարաց, էջ 699-726:

Բ. — Բարսիկ Գրիչ, 1275 ին օրինակած է մասամբ, Մէլիքուրիւն Հնդամանենի, Փիտնի, Տարանեցի Ներսէս Վարդապետի հա-

մար. — Յագսէփեան, Խողբակեանք, Բ., էջ 194-5:

Գ. — Առաքել Քահանայ, Գրիչ, 1312-14. — Դավարու Վանքին մէջ Կ'օրինակէ.

1. — Աւետարան, 1312 ին, Ներսէս Քահանային համար. — Զեռ. Ա. Յ. Թ. 1949, A. Tchobanian, La Roseraie d'Arménie, Tome II, 315:

2. — Աւետարան, 1314 ին, Թումայ Քահանայի խնդրանքով. — Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 105:

Գ. — Յովհաննես Նկարիչ, 1312 ին ծաղկած է Առաքել երէցի օրինակած Աւետարանը. — Զեռ. Ա. Յ. Թ. 1949:

4. — Ատեփանոս Կրօնաւոր, Գրիչ, օրինակած է Աւետարան մը, 1339 ին: Յիշտատակարանին մէջ կան սա ուշագրաւ տողերը. «Արդ. . . յիշեսիթ զգրող սորա . . . որ զայս մագաղաթս ի շահ ածի: Զի յառաջն Աւետարան էր, և անկեալ էր ի ձեռս այլազգեաց, և թուղթ թուղթ էր արած, և լուացի զինքս ու շատ աշխատեցայ, այսոր համար որ զգիրն զժար կու առնէր . . .»: Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 321:

5. — Աստուածատոր Արենայ, Գրիչ եւ կազմող, 1540-73. — Դավարու Վանքին մէջ օրինակած է.

1. — Սալմոս, 1540 ին, Դաւիթ Քահանայի խնդրանքով. «Ի լընտիր աւրինակէ ի Փառնեցոյ»: — Արուանձտեանց, թ. Աղբար, Բ., էջ 421-3:

2. — Աւետարան, 1573, Մատթէսոսի գլուխը միայն, մեացեալը շարունակած է Խառարատայ, Վանքին մէջ. «Ի Հայրապետութեան Տէր Գրիգորիսի նորընձայ Կամթօղիկոսի»: — Ե. Լալայեան, Յուցակ Զեռ. Վասպարականի, էջ 677:

3. — Գրիգոր Գրիչ Նշեցի, որդի Ասեմանոս Քահանայի, 1621 ին օրինակած է մէկ ժողովածոյ, որուն աստիճն զլուխն է Աղօքաբիրք Ա. Տեղինաց, Վարդան Վարդապետ (1321). — Զեռ. Ա. Յ. Թ. 939: Աղունունի, Միաբանք, էջ 503:

4. — Վարապետ Վրդ. Գրիչ, հոգեւոր որդի Ա. Մթեցի Բարոն Վարդապետի, որուն պատուէրով կը ձեռնարկէ օրինակելու մէկ Միկն. Թիլուլի Պալըսի, Անանիս Անանեցոյ, և Կ'աւերտէ Եղիշապարու Վանքին մէջ, 1625 ին. — Հանզ. Ամս. 1956, էջ 441-2:

5. Եղիշ. Մովլուկուն

## ԳԵՂԱՐՈՒԵԱՆԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԴԱՐԱՆԵՐԸ

ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈԹԻՖՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ոչ այլ ենթակա բիոլոգիկ աշխատվածքը մի խնդիր մասին՝ «Հայկակա Զարդարություն» անուն կորողական զեղեցիկ եւ հնատից զիրություն, որուն հետինների և Ա. Շ. Մանականինան, ու որ նոյն պատկերապատճեռով համարակալուած է Հայկական ԱԽՍ զիտուրիսների Ակադեմիայի կողմէ, 1955թն, Խելամիք մէջ։ Այս զործքը՝ որ մեծ ուսուցութիւն գրաւեց նույն արժանահանիք մէջ, իւ Տեսութիւն մէջ եզրակի եւկայր-բարին մըն է, ուսուն ընթեցումը առեն նոյն սիրո արգար հպատականը կը լինի։ Մեր ընթեցումներն իւստալ հասորի բովանդակութենեն նույն մը այլու նպատակու կ'արժանապես մասիր զործին կօրինենալ զույնուն։ ԽԵՄԲ.

ROSS: THE JOURNAL

Մասնագիտները, սպառաբարք, յառակապէս մանրանկարչութեան բնագաւառում, այսակ խմբաւոծ մաթիֆները միասին չեն քննուում։ Չնոյած նրանք յաճախեն խօսուած մուտքերի և խորանների մասին՝ սրբէս ձարասարապետական հասկացողաթիւնների հետ կապաւոծ մաթիֆների, բայց երբեք չեն փարձուած այդ հարցը քննիլ նուի ճարասարապետական տեսուններինից, մինչդեռ նրանց բաւն էութիւնը հասկանալու միակ ձանապարհը կայտնուում է հենց գրանուում։

*Ukuhun, p. 311, m. ph. p. b. g.,*

Մեկ մօտ ընդունուած է այս գորդերը  
կաչել կիսափոքաններ, մի բան, որը ճիշտ  
չէ: Ինչպէս կը տեսնենք, խորան հաս-  
կացողութիւնն ընդգրկվում է ամբողջու-  
թան չէ՞նքի զաղափառը, իսկ մռւաքը՝ չէ՞ն-  
քի միտյն մի ժամն է և ոչ երբեք նրա  
կէսը: Աւելին, զարդարուենառում մեծ  
տարածում գտած մռւաքիրը տրատյու-  
տում են ոչ թէ ամբողջ մռւաքի, ոչ ու  
միայն նրա վերին ժամսի զաղափառու:

ինչպէս ձարսաբազեաւթեան մէջ,  
ոյնպէս էլ զարգարւեասում մուտքիրը  
լինում էն մի քանի ահանկ, այն է, կա-  
մարածե, զմբէթուծե, արխիարազային,  
ինչպէս նուե այս հիմունքն ձեւիրի կամ-  
բինացաւմներով:

Թէ ինչպէս են ծաղկել ժուտքերն ո՞նք-

Հանրապէս, զուալ հարց է: Մեզ այստեղ  
հաստքքը ուժը է միայն մուտքերի գոր-  
գորուենուային կազմը, նրանց միջազգ  
արտայացուած գաղափարների հարցը:


Թէ՛ աշխարհիկ և թէ՛ հագեար ձար-  
տարապետութեան մէջ մինչև հիմու էլ  
առկոյ է մուտքերը յասուեկ եղանակավ  
զարգաբելու պրակարիկան: Հասկանալի է,  
որ տարրեր գարուշքանիրում և տարրեր  
կառայցների գրայ տարրեր զարդամաթիֆ-  
ներ են հանգէս գալիք: Հենց այս տար-  
րերութիւնն ինքնին ակնարկում է այդ  
զարգերի գաղափարական յասուեկ բավան-  
գակութեան պարագան: Եթէ ուշ շրջա-  
նում այստեղ էլ այդ զարգերը չեն գի-  
տակցուել և պահպանուել են բառ ճաշակի  
ու աւանդութեան, առա նոյնը չի կարելի  
առել հին ժամանակների ժաման:

Այժմ փորձենք ընդհանուր գծերով  
ձանօթանալ մուտքերի վրայ տարածուած  
հիմնական զորքամոթիքների և նրանց ու-  
տյզ մուտքերի զաղախարական տանչու-  
թիւնների հետ:

Այսակ էլ ամենատարձէքուսոր փառ-  
տերը բերուիլու ևն մանրանկարչութիւ-  
նից, որովհան մանրանկարչութեան մէջ  
պահպանուած ևն ուելի հին ծագուած ու-  
նեցող, բազմապիսի և բազմաքանակ վը-  
կայաւթիւններ։

Զեռագրերում խիստ հազուագիւտ են  
անց մատօնառ սասնա տառապալում են

սովորական, անզարդ չէնքերի համապատասխան մասերի պատկերը: Մեզ ձևած այդպիսի նկարներից մէկը զանում է № 338 ձեռագրի 2աթ թերթում (նկ. 779): Գոյզ սիւների և մի գերանի պարզ միացւմով կառուցուած մուտքի նկար է, որի միջին մասին արուած է կանոնաւոր կամուր ձեւ: Այս պարզ ու անշաւք մուտքը, այլ առավելական, անշաւչ, կարսկ է մեծ արձեք ներկայացնել մասնագէտների համար: Զարդարուեասով իտութեան համար, սկզբյն, այդ և նման աւրիշներն առանձին աշանկութիւն չունեն: Երանք բնորոշ էլ չեն զարդարուեասաբն: Վերջինիս համար յատուկ են զարդարուն մուտքերը:




նկար 779

Վերցնենք № 7729 ձեռագրի 495ա թերթում նկարուած մուտքը (նկ. 780): Այսակ կոյ մի շրջանակ, երկու այժ և երեք կենաց ծառ, այդ բոլորը, սկզբյն, օրդանապէս կապւած են միմեանց հետ իրենցից ներկայացնում են մի անքակտելի ամբողջութիւն: Մուտքի վերին ոչ և ձախ անկիւններում կան մէկական կենաց ծառեր. Երանցից իւրաքանչիւրն իր չփառում ունեցաղ հասիկից արձակել է մի զայդ արմատ, որոնք, ուզիղ անկիւն կազմելով, միանում են միմեանց հետ և ստեղծում ամբողջ շրջանակը: Ըստ արուած, վերջինիս սասրին մասի զմբէթաձև բարձունքը, իր հերթին, վեր է ածւում մի կենաց ծառի, որի զայդ ճիւղերը ձգւում են գէպի մուտքի շրջանակաւոր ձականի ներսը և այսակ, արոնչիւրով երկուական ճիւղերի, պաղաքերում են: Պառազնիներից երկուսը բաւական ձեւ ունեն,

իսկ երկուսը՝ կենդանական: Այս վերջինները մի-մի այծագլախներ են, որոնց երկոր եղջիւրները, միանիւսուելով, բարձրանում են վեր և գուրս գալիս չըջանակից: Մուտքի սասրին մասի զմբէթաձև փորւածքի զծերը, իրենց հերթին, արտայուտում են այս վերջին կենաց ծառի արմանների գաղտփարը և միացած են մուտքի վերին անկիւններում գտնուող փոքրիկ կենաց ծառերի արմանների հետ:

Մի պահ մուտքանք այս մուտքի կապը ձերարագեական կառույցի հետ և նույնք նրա վրայ որպէս զարդարութիթի: Պարզ է, որ այսակ գործ ունենք ձնող-զայդի, կենաց ծառի և պաղաքերութեան գաղտփարների հետ: Քանի որ ձնող-զայդն



նկար 780


էլ կենդանակերպ է, ուստի այսակ առկայ է սասակիզմի մնացուկը, որը խօսում է առնմասիրական կարգերի և ֆրամարիալ կազմառուակների մասին: Այժմ վերյիշնք նաև այդ ամբողջի կապը ձերարագեական կառույցի այնպիսի կարենը մասի հետ, ինչպիսին է շեմքը, մուտքը: Այդ չէնքը արգէն ոչ թէ մի սավորական բնականականի իմաստ է արտայայտել՝ իր

անսեստկան տռումով, այլ ամբողջ առնմիւ զերցնենք մի ուրիշ օրինակ՝ նոյն ձեռագրի 590ա թերթից (նկ. 781): Այս մուտքի շրջանակը բազկացած է բուսական պատճերի ձիւզերից, որպէսք, միահիւսուելով, կազմել են թէ ողջ մուտքի ձակասի ներսում և թէ նրա վերին ծայրին զանուող զարդերը: Դա կենաց ծառն է՝ իր սիմեորիկ շարայրութեամբ: Այդ ծառն էլ, սակայն, կազմւած է կենդանակերպ ծնող-զորդի հետ, որը երեսն է զալիս հենց մուտքի ձակասի կենարունում՝ խաչաւորման պրացեսում: Այսակ


այսինքն՝ արտայացառում է առնմիւ և նրա բազկացուցիչ մասերի գաղափարը:

Բերենք ես մի վկայութիւնը, այս անգամ ընդօրինակելով № 5537 ձեռագրի 90ա թերթից: Մուտքն այսակ սրա-չակի կերպով արհնուած է երկու կէսի: այդ կէսերը, սակայն, օրգանապէս կազմւած են միմեռնց հետ և հենց այդ կապի արդիւնքն է նրանց կենարունում զանուող կենաց ծառը նշանած կէսերից իւրաքանչիւրի վրայ կանգնուած է մի սիրամարգ, սրանք հանդիսանում են առնմային ընառնիքի երկու կէսերի (ֆրամարիների) տառեմ ներկայացուցիչները, սրանց միանութիւնից ել հենց սերւած է նրանց միջև բարձրացուած տառեմային կամ շրջանակներում, սրանք իրենց մէջ,

Այսպիսով, տեսնում ենք, որ զա- գափարական հարուստ բագանակաւ- թիւն կայ ոչ միայն մուտքերի վրայ պատկերուած կենդանական ու բուսական մոթիֆների մէջ, այլև այն շրջագծերում կամ շրջանակներում, սրանք իրենց մէջ



նկար 781



նկար 782

էլ առկայ են առանմիզմի, առնմային հա- սարակութեան և ֆրամարիալ կազմաւոր- ման գաղափարական մեացուկները:

Ծնող-զորդի գաղափարը միշտ չէ, որ ցոյց է արևում մուտքի կենարունում, շրր- ջանակի ներսում, այն, սովորաբար, պատ- կերում է նաև մուտքի վերին մասում: Այդպիսիներից է, օրինակ, նոյն № 7729 ձեռագրի 377ա թերթի մուտքը, որն ընդ- օրինակամ ենք հասաւածաբարը (նկ. 782): Այսակ էլ ամբողջ մուտքի էսեթիւնը ցոյց է տալիս հենց այդ զորդի միասնութիւնը,

են ընդզրկում ամբողջ մուտքը Աւստի, եթէ նման գէպքերում բացակային բաւ- ստկան և կենդանական մոթիֆները, ուզու շրջանակային գծերի սիմեորիկ շարայրա- րութիւնը նարից կորսղ է արտայալել առնմա-ընառնեկան յարաքերութիւնների հետ կազմւած սրաշ հասկացութիւն: Այս- ակից էլ պարզ է, որ զարդարուեատի երկ- րաչափական կոչուած մոթիֆների մէջ այն- քան շատ արածուած զծերը և նրանց կա- նանուասը միահիւսումները նոյնպէս ունե- ցել են գաղափարական բովանդակութիւն:


Մանրանկարչութեան, քանդակագործութեան մէջ և այլ բնագաւառներում մաւրային զարդարնթիվների այն անմիջական կապը, որ տեսանք վերեւում, յանի մասամբ խօսիսում է, յանի ի խիստ ազաւազաւած, Բայց և այնպէս միք ձեռք բերած այս ծանօթութիւնների շարժիւնչաւութեամբ նկատում են նրանց փախադարձ կապերը:

№ 3033 ձեռագրի 198ա թերթում պատկերաւած մաւրաքի տեսարանում թթուշային ծնող-զայզը կանգնած է մաւրաքի վերին մասում և առանձին կազ չունի այդ մաւրաքի հետ: Թւում է թէ, դա մի ընկան տեսարանի վերաբարպետիւն է: Առկայն մեզ տրդէն քաջ յայտնի է գաղափարական այն կուռ ազերսը, որ կայ այդ թռչունների և մասցած բոլոր զարդերի միջև: Նոյնը կարելի է տակ նուե: № 378 ձեռագրի 7թ թերթի համապատասխան նկարի մասին (նկ. 785), որի

բնաւում է, ուստի կրկնաւմիւններ չենք կատարում:

№ 1379 ձեռագրի 2ա թերթում հանգի իսկաւմ ենք տահմային և փրատրիտ հուկացարնթիւնների հետ աւելի սերտ կոպէր ցուցարերազ մուտքապատկերի:

Տոնմի երկու ֆրիտարիտները պատկերաւած են վագրանման կամ տարեծանման երկու գաղափնների միջացով, որոնց պաշերը, ձիւզաւորաւելով միահիւսուել են միմենց հետ և առեղծել տժրողջ տիսարանով մէկ սփռուած դալուրանիւս շրջազիրի, համակիւնինների և այլ զարդերի բարդ շարայարութիւն: Այդ բալորի կենարունից նայում է տոնմի մարդոկերպ նախնակ կամ նրա սերնդի գաղափարապատկերը: Այսակ էլ, ինչպէս տիսանում ենք, ճարտարապետական կառույցի մուտքի ճակատը, իր զարդերի միջացով, դըրսւուրում է տոնմի ներքին կառուցուածքի պատկերը:



նկար 785

նմաններն այնքան շատ են զարդարուեաւում:

Ինչպէս տրդէն տեսանք նախորդ գըրախնիքաւմ, տոնմային կենաց ծառերի վրա միանգամբից երեան են զալիս աւելի տարդ հասկացողութիւններ: Նոյն երեսը, բնականաբար, իր դրաշմն է զրել առել մոււաքերի պատկերների վրայ: Այսպէս, օրինակ, № 7729 ձեռագրի 490թ ներթում զանուուզ մոււաքի վերեւի մասում կանգնած է թռչնակերպ ծնող-զայզեր, իսկ մոււաքի ներսում, երկծիր կերպ ծուափ միահիւսուեմբից սերուել են ինչպէս բուսական, նոյնպէս և կհնդանական-արիւծագլուխ պատղներ:

Քանի որ այս մաթիքների հարցն առանձին-առանձին, հիմնականում, արդէն

№ 7482 ձեռագրի 2ա թերթում զըտնուազ համապատասխան զարդի միջացով են գրսեւորաւած են նման գաղափարներ: Մոււաքի վերեւի մասում կանգնած են երկու թռչուններ, որոնց միջև զեակզուած է տոնմի պատկերութեան գաղափարը՝ մարդկային պատկերների և բուսական զարդերի միջացով:

Մոււաքազարդերի մէջ էլ վերին աստիճանի մէծ տարածում ունեն մուրգազգլուխ և կենդանամարդին էակների պատկերները: Այդպիսիններից յիշնոք մի քանի օրինակ:

Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

(Շարունակելի՝ 1)



# ՍԱԼԻՐԿՈՒՄ Ս. ՅԱԿՈԲԱՅ ՏԱՂԱՐԻՆ


## ԵՒ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԱՅԴ ԱՌԹԻՒ

ՀԵՆ ԾԻՆՈՒԱԾՔԻ ՄԸ ՄՆԵԱՑՈՐԴ. — Պեղումներ կատարուեցան նաև հիւսիսային երկու կեղբունական սփռներու մէջտեղը, այսինքն Առաքելական Սթոռին ետեւը։ Այստեղ երեւան ելաւ հին կառոյցի մը մնացորդը, որուն ինչ ըլլալը կամ ինչ նպատակի ծառայելը բաղաքիս մէջ մնացած եւ ճնագէտ ճանկուած անձեր եւս զժուարացան ըսկէ։ Այս կառոյցը (Տեղ Պատմէր Բն-3) կը

մէջ՝ պարապութեան վրայ, իսկ երրորդը՝ արեւելեան կողմը, լաւ շինուած եւ լաւ վիճակի մէջ պահուած ազուգայի մը վրայ, որ իր կարգին կ'երթար կը կորսուէր հողին տակ, դէպի աջակողմիան դասի սիւնին ներ-


PATRIARCAT ARMENIEN DE JERUSALEM  
CATHÉDRALE SAINT JACQUES  
TOUILLERS ENCAUTÉES SOUS LE PAYAS  
RELÈVÉ DU 29 NOVEMBRE 1957  
ÉCHELLE DE 0.08 P.M. MÈTRE

BLAN



Թիւ3, հին կառոյցիմբ մնացուղը, երեւան ելած  
Ս. Յակոբայ Տաճարի յատակէն։

բաղկանար մօտաւորապէս 170 սմ. × 130 սմ. յատակով աւազանէ մը, որուն արեւելեան կողմը բազուկի մը լայնորդ ծակ մը կը բացուէր ուրիշ փորքագոյն աւազանիկի մը վրայ, որ ունէր 40 սմ. × 30 սմ. տարածութիւն։ Այս աւազանիկն ալ ունէր ուրիշ երեք ծակեր, որոնցմէ երկութը կը բացուէին հիւսիս եւ հարաւ, ներկայ վիճակի



BASSES ET CANALISATION EN MACONNERIE AVEC EN DENTÉ AU MONTAGE DE CHAÎNE, RAILLE ET TUYAUX CORDÉS, DIT « TURRA ». LES TAMBONS DE POTERIE TROUVÉS EN SITUATION AVEC DES RÉSIDUUMS SONT BAZANTINS ET BYZANTIENS. EN CES COUSSESON DU 4 DEC 1957


թիւ 4, թիւ 3 պատկերին յատակագիծը. Եվկո պատկերներ կը նային իրաւու նախառակ ուղղութեամբ. ոսյն յատակագիծն ներեւեի մասը կառոյցին արեւմետան կողմն է։

թիւ: Այստեղ եւս, փորուածքին հարաւա-  
րելելիան անկիւնը (Տէս. Պարհէց Ռէ-4) 135,  
ամ. խորութեան մէջ երեւան եկաւ ուրիշ  
փխունացած կմախր մը:

Այս բոլոր փորուածքները, իրենց պա-  
րունակութեամբ հանդերձ չափազուելէ եւ  
պատկերահանուելէ<sup>(\*)</sup> վերջ, ըստ առաջ-  
նոյն ծածկուեցան հողով, ամրացուեցան  
լողով եւ ապա ձեռնարկուեցաւ մարմարա-  
պատման աշխատանքին:

ՄԱՐՄԱՐԱՊԱՏՄԱՆ գործը ի սկզբան բաւա-  
կան մնած դժուարութեան բաղկացաւ. նախ  
որովհետեւ Ա. Յակոբայ Տաճարին մէջ եր-

ներու իրարմէ ունեցած նեռաւորութիւնը  
10 ամ. աւելի է արևուտեան սիւներու հա-  
մապատասխան միջոցէն: Հարաւային թեւի  
լայնը 260 ամ. է, կեղրոնական սիւներէն  
դէափ հարաւային պատ հաշուելով. մինչ-  
դեռ նիւսիսային թեւի լայնը արեւմտեան  
սիւնէն դէափ նիւսիսային պատ հաշուելով  
380 ամ. է, իսկ արեւելիան սիւնէն հաշուե-  
լով՝ 329 ամ. է: Բաց ասափ, եկեղեցին  
կարգ մը մասերը արգէն իսկ ի ննուց մար-  
մարապատուած էին<sup>(\*)</sup>, որոնց մէջտեղերը  
պէտք էր ամբողջացնէինք մենք. նախկին  
մարմարապատումն ալ նշգրիտ չափերու  
վրայ չէր կատարուած, մինչդեռ նոր մար-



Թիւ 5. Ա. Յակոբայ սալայատակը մարմարապատումն վերջ:

կրայափօրէն ճշգրիտ չափ զրեթէ գոյութիւն  
չունի. իրարու համապատասխան զիծեր եւ  
միջոցներ միշտ իրարմէ քիչ մը պակաս կամ  
աւելի են: Օրինակ, եկեղեցին արեւմտեան  
պատը արեւելիան պատէն մէկ մետր եր-  
կայն է, հարաւայինը՝ հիւսիսայինէն 40  
ամ. երկայն է, արեւելիան կեղրոնական սիւ-

մարմերը ճշգրիտ չափերով կտրուած սալ-  
քարեր էին: Սալարկող վարպետը սակայն  
կերպով մը կրցաւ յաղթահարել այս զրժ-  
ուարութեանց:

(\*) Առնուեցան 50 նկարներ, իւրաքանչիւրէն  
չորսական սրինակ, սրոնցմուգ կազմաւեցան չորս  
ալպումներ, սրոնցմէ մին կը մնայ ի Պատրիար-  
քարան և ուրիշ մը Գանձատօւն:

(\*) Ի հնուց յ մարմարապատուած էին Ա. Գիուա-  
զրի մատրած առջևի ընդարձակ միջոցք, եկեղե-  
ցիի չիւսիսային թան մէջ: Ուծ Առեանի մէջ-  
տեղի մասը, եկեղեցիին գմբւթին ներքեւ և եւ  
մէկ ու կէս մեթք լայնքով ճամբայ մը՝ զառէն  
անմիջապէս դուրս, չիւսիսային պատէն մինչ  
հարաւային պատ:

եկեղեցին հարաւային թեւր սալար-կուեցաւ յար եւ նման հիւսային թեւի նախկին սալարկին: Այսինքն մարմարները գրուեցան վաշէ՛ք՝ յարաբերաբար եկեղեցիի պատերուն: Մարմարներու իրարու միացման կէտերուն մէջ զետեղուեցան Յ սմ. լայնքով և մարմարեայ երիզներ (Տե՛ Պար-էր Բէ 5): Արեւմտեան պատի ամբողջ երկայնքին, 1.50 մետր լայնքով սալարկուեցաւ յար եւ նման գտուէն անմիջապէս դուրս գոյութիւն ունեցող նախկին սալարկին — քարերը շեղակի եւ մէջտեղեր սիւ երիզաքարերով: Իսկ եկեղեցիի մնացեալ մասին, այսինքն ատեանի հիւսային եւ հարաւային կողմերու եւ եկեղեցիին ամբողջ նաւին մարմարները գրուեցան եկեղեցիի պատերուն վաշէ՛ք-է՛ք-է՛ք, եւ միացման կէտերուն զետեղուեցան է-բէ երիզաքարեր:

Մարմարը իր անկոփ ծեւին մէջ քբր-  
ուած էր Խտալիայէն եւ կտրուած ու սա-  
հուն ողորկութեամբ յղկուած էր Ամման,  
երկրի միակ մարմարի գործարանին մէջ։  
Ենդակի գրուած մարմարներուն չափն էր  
50 × 50 սմ., իսկ հորիզոնական դրուածնե-  
րունը՝ 40 × 40 սմ.։ Սալարկուեցաւ մօտա-  
ւորապէս 140 քառ. մեթր տարածութեամբ  
յատակ։ Սալարկումը աւարտեցաւ 1957  
Դեկտեմբերի վերջին:


ՈՐՄԱՆԱԿԱՆ ՍԻՆԻ-  
ՐՈՒ ԿԱՐԳԻՆ՝ արեւմտեան պատին մէջ կի-  
տովին թալուած երկու որմասիներ կան։  
Ասոնց ստորոտը ծածկող յախճապակիները  
թուլցած ըլլալով, ամբողջութեամբ վար  
առնուեցան վերստին ամրացնելու համար։  
Յախճապակիներու շպարը վար առնուելէն  
ետքը երեւան եկաւ սիւներու իսկական ե-  
րեսը։ Շինուած էին անոնք լաւ տաշուած  
մեծկակ քարերով, որոնք ծածկուած էին  
մեծ ու մանրիկ հարթերաւոր խաչերով (Տե-  
սարչեր 14- 6)։ Ասիկա անսովոր երեւոյթ  
մը չէ Ս. Երկրի հին եկեղեցիներու համար։  
Որինակ, Ս. Յարութեան Տաճարի մեր Ս.  
Լուսաւորիչ եկեղեցիի պատերն ու սիւներն  
ալ ծածկուած են նման հազարաւոր խա-  
չիկներով։ Միններուն անկիւնները վերէն  
վար տաշուած եւ զոգաւորուած էին։ Այս  
ծեւով գոգաւորուած են նաև այս որմա-  
սիւներու հանգիպակաց՝ եկեղեցիի գաւթին  
հաստահեղոյս սիւները, որոնք տարիներ  
առաջ մաքրուելով վիրենք երթեմն ծածկող

ծեփէն, կը պարզին այսօր իրենց քարային գեղեցիկ ուժականութիւնը :

Հիւսիսային որմասսինի բացուած մասին հիւսիսային անկիւնը, հնագրոշմ զիրերով արծանագրութիւն մը երեւան ելաւ սապարունակութեամբ.

ԲՐԱՉՈՒԵԼ ԽԵՆՉՈՒ  
ՊՐ ՇԱՄՇԱՏԻՆ Ե(Ս)  
ՀՕՐՆ ԹՎ. ՊԿՊ.

վերսիշեալ ՊԿԳ = 863 հայկական թուականը կը համապատասխանէ Փրկչական 1414 թուականին։ Հին արձանագրութիւններով ժամ եւ նորերով հարուստ Ս. Յակոբայ Տաճարին Ներսէ հունվար այժմ զոյտթիւն ունեցող եւ մեզի ծանօթ Եւրոպ հնագոյն արձանագրութիւնն է այս։ Մեզի ծանօթ հնագոյն արձանագրութիւնը կը զբոնուի Պոլոս-Պետրոսի մատքանց վերելից



Թիւ 6, Ա. Յակոբյան Տաճարի հիւսիս - արեւմտեան որմասիւր, յախճապակիները վար առնուելէն վերջ: 1414 թուականա արձանագրութիւրը պատկերին վերի աշ անկիւնն է: Հարաւ - արեւմտեան փոխն զօթէն վար մասն այ ձածիւրած է մեծ ու մասրիկ խաւերով:

հին եւ գեղաքանդակ տախտակէ դրան վրայ,  
ՊԵ = 805, որ կը համապատասխանէ 1356  
թուականին(\*):

(\*) Այս թուականը լաւաշնեանցի կողմէ սխալմար կարդացուած է Պի=820, և հետեւ-

Հնագէտներ փափաքիցան որ գէթ այս միներու բացուած մասը չծածկուի: Սակայն նկատի ունենալով որ կապոյտ յախնապակիներու միակտուր գեղեցկութիւնը պիտի կոտրուէր մերկացած որմասիւներու այս պարզ զեղեցկութեամբ, աւելի յարմար մեպուեցաւ վերածածկել զանոնք իրենց նախկին յախնապակիներով: Հիւսիսային որմասիւնի արձանագրութիւնը միայն, և համապատասխան կտոր մը հարաւային որմասիւնի վրայ՝ բաց ձգուեցան նմոցին համար:

ՈՐՄԱՆԿԱՐՆԵՐ. — Սրբոց Յակոբեանց Միաբանական շրջանակի մէջ տարածուած՝



Թիւ 7. Քառասուն Մանկանց այժմու նկարը, պատսի վրայ:

բայց ոչ մէկ ականատեսի կողմէ հաստատուած զրոյցի մը համաձայն, Ա. Յակոբայ Տաճարի բոլոր պատերը ծածկող այժմու նկարներու ներքեւ իրենց հին նմանակները զոյտութիւն ունեն: Այդ զրոյցին հիմնաւոր ըլլալն ալ հաստատուեցաւ այս առթիւ:

Ա. Յակոբայ Տաճարի պատերը ամբողջութեամբ ծածկուած են յախնապակինով, պատկերով և ծիփով: Գետնէն շուրջ մէկ ու կէս մեթր բարձրութեամբ բոլոր պատերը և սիւները ծածկուած են ներմակ խորքի վրայ կապոյտ-ծաղկանկար Քէօթահական ընտիր յախնապակինով, պրուած 1712ին եղիա վանականի ծիռամբ: Անկէ



Թիւ 8. Քառասուն Մանկանց նին որմանկարը, այժմու պատկերին ներեւէն եղած:

բար վերածուած է 1371 փրկչական թուականի (Պատմ. Երուսաղէմի, Բ. Հատոր, էջ 1226):

իսկ եկեղեցին արտակի մասին վրայ գտնուած երկու հնագոյն արձանագրութիւնները կուզանքին. գարէնու Այս մասին հետեւեալ ծանօթութիւնը կայ Սաւալանեանցի վերսիչեալ զրքին մէջ, էջ 1219ի վրայ. «1835 տարին Ա. Յակոբը վերնատան ընտրեան առքին նին պատեր խանդուած ժամանակ խանդակարդ խաչար մը երեւան կ'ելլէ, նետեւեալ յիշաւակողութեամբ. «Ի թուին հայոց Ռ (= 1151)», Այս խաչար այժմ ազուցուած է նոյն վերնատան արեւմտեան արտակի պատին վրայ: Նոյն վերնատան հիւսիսային արտակի պատին վրայ ազուցուած է հնագոյն խաչար մը նետեւեալ թերի արձանագրութեամբ. «Թուուզըմեա ... հոգուոյն ամէն. ՌԲ (= 1153)»:

Հնագոյն այս երկու թուականներուն և վերութիշեալ 1356 թուականի միջին ինկող թուականով մը մէջի ծանօթ ուրիշ արձանագրութիւն չկայ Ա. Յակոբայ Տաճարին ներսը կամ զուրսը:

վեր, շուրջ մարդանասակ մը բարձրութեամբ կայ նկարներու առաջին շարքը որ կը շրջանակէ ամբողջ եկեղեցին և սիւները: Ոպա 30-35 սանդիմեթր զուրս երկրնցած զորնիշէ մը վեր կայ մօտ երկու մարդանասակ բարձրութեամբ խոչոր պատկերներու ուրիշ շարք մը: Պատկերները թէ՛ վերը և թէ՛ վարը, ամրօրէն իրարու ազուցուած են միակտուր դարձած շրջանակներով և կազմած են անբաժանելի ամբողջութիւն մը: Պատկերներէն վեր պատերը և ամբողջ առաստաղը ընտիր ծեփով ծածկուած են: Առաստաղին ծեփերը սկսած են արդէն թափթփիլ:

Վերոյիշեալ զրոյցին ստուգութիւնը

հաստատելու հետաքրքրութեամբ քակուեցան և կեղեցիի երկու մուտքերուն աջ կողմերը գտնուած երկու պատկերները, որոնք կղզիացած էին միւս պատկերներէն իրենց քովի որմասիւներով։ Հակառակ որ այս պատկերները ընդհանուր շարքին չեն միացած, այնքան ալ դիւրին չեղաւ զանոնք իրենց տեղերէն հանելը, ինչ որ ուրիշ փոքր ապացոյց մըն էր մեր նախնեաց գարերու նախատեսութեամբ զործ ընելու մտայնութեան։ Երբ պատկերները վերցուեցան երկուի ներքեւէն ալ իրենց յար եւ նման նախատիպերը մէջտեղ ելան, սա կարեւոր տարրերութեամբ որ հիները ուղղակի պատին վրայ նկարուած էին, թեքնիկ բացատրութեամբ՝ «Ֆրեսքօ»ներ էին։ Ուրիշ յատկանշական տարրերու թիւնն այն էր որ սկզբնատիպերը համեմատաբար աւելի ճարտար ծեռքի զործեր էին քան պատառին վրայ զժուած այժմու զործածական պատկերները (\*): Աւագ դրան կողմինը Քառասուն Մանկանց պատկերն էր, իսկ Ս. Մակարի դրան բովինը՝ Երուսաղէմի Ս. Տաղերուն հետաքրքրական մէկ նկարը։ Քառասուն Մանկանց ֆրեսքոյի մէջ, քացի դէմքերու վերի շարքէն, մնացիալ մասին ծեփը, ժամանակին ամբողջութեամբ ինկածէ, եւ նկարը ապա ամբողջացուած է նուազ ճարտար տարրեր ծեռքի մը կողմէ։ Ոյապէս՝ յատկանշական մեծ տարրերութիւններ չկային ֆրեսքոյի եւ պատառի վրայ նկարուած պատկերներուն միջեւ։ (Տե՛ Պարգև Բէ-7 և 8):

Զգայացունց նորութիւնը սակայն մէջտեղ ելաւ «Տեառնական» կոչուած պատկերին վերացումով։ Այս մեծ պատկերը կը գտնուի Ս. Կիսաղրի մատրան եւ Ս. Ստեփանոսի եկեղեցիի գրներուն միջեւ զբնուած պատին վրայ 250 մմ. լայնով եւ 260 սմ. բարձրութեամբ։ Իր դիրքով եւ մանաւանդ իր ներկայացուցած նիւթով պէտք է նկատուի ամբողջ եկեղեցիին կեղդոնական եւ զիսաւոր պատկերը։ Այժմու «Տեառնական» պատկերը կը ներկայացնէ իր վերի

մասին մէջ «Բաժակարբու Առաքեալները», Մեծն Յակոբոսը (Գլխադիր) եւ Յովհաննէս Աւետարանիչը Քրիստոսի աջ ու ձախ կողմերը բազմած, համածայն իրենց մօր լորդութեանքին (Մատթ. թ. 21)։ Պատկերին ներքեւը ձախ կողմը կը ներկայացնուի Ս. Յակոբը զիսատումը, եւ միւս կողմը՝ Յովհաննէս Առաքեալը՝ որ իր Աւետարանը կը գրէ ալեներ տարիքի մէջ։ Ներկայ այս պատկերը նկարուած է 1896 թուականին, օտար նկարչի մը կողմէ։ Ան իր գոյներու պատճառութեամբ եւ սրբանկարային արուեստի ոճէն իր շեղումով՝ շեշտակի կը պոռայ իր տարրերութիւնը եւ օտարական մը ըլլալը՝ մէկ ոճով իրագործուած հարիւրաւոր պատկերներու այս Տաճարին մէջ։ Չենք կրնար հասկնալ թէ ինչպէս արտօնուած է (եւ աւելի քան 60 տարիներ հանդուրժուած է), ինքն իր մէջ թէեւ յաջող, բայց եկեղեցիի ընդհանուր ոճին հետ հիմնովին աններդաշնակ այս նկարը, այսքան կարեւոր տեղ մը։ Այս հակայ նկարը վերցուելէն յիտոյ անոր ներքեւէն երեւան եկաւ գեղարուեստական իսկական յայտնութիւն մը, ինչ որ ունիանկարը։

Ներքեւի ֆրեսքոն ալ կը պատկերացնէր վերեւ յիշուած նիւթը – վերը՝ Առաքեալներ Քրիստոսի աջ ու ձախ կողմերը, ներքեւը՝ զիսատում Ս. Յակոբայ եւ աւետարանագրութիւն Ս. Յովհաննէսի։ (Տե՛ Պարգև Բէ-9):

Սակայն նիւթի իրագործման մէջ անբաղդատելի տարրերութիւն կար երկու պատկերներուն միջեւ։ Ֆրեսոյի մէջ երեք դէմքերը, Քրիստոս իր փառքին մէջ եւ առաքեալներ իրենց բաժակներով Անոր աջ ու ձախ կողմերը, ներկայացնուած էին նախաւելի մեծ եւ աւելի վեճ ու տիրական դիրքերով։ Անոնց դէմքերը եւ դիրքերը նկարուած էին սրբանկարային արուեստի քաշահմուտ եւ փարժ ծեռքի մը կողմէ։ Վեհութիւն, խաղաղութիւն եւ հազիւ զգալի քաղցրութիւն մը կը հառագալթէր անոնց մէ։ Պատկերին ներքեւը, աւելի փոքր չափերու վրայ, կը ներկայացնէր Ս. Յակոբի զիսատումը, իսկ անոր հանդիպակած կողմը Յովհաննէս Առաքեալը՝ ծունկի եկած։

Գեղեցիկ այս որմանկարը ընդհանրապէս եւ անոր ներքեւի մասը մասնաւորաբար զրեթէ անվերանորոգելի կերպով եղ-

(\*) Բայ Մաւալանեանցի այժմու զործածական պատկերները «նկարուած են ճարտար պատկերան Տիրացու Յովհաննէսի ձեռքով» 1730 - ական թուականներուն (Պատմ. Երուսաղէմի, թ. Հատոր, էջ 709).

ծուած էր : Նկարածեփերը կարեւոր չափով թափուած եւ թափուելու վրայ էին : Պատկերին ներքեւը երկու անկիւններու ծեփերը ամբողջութեամբ ինկած եւ վերալցուած էին հասարակ ներմակ ծեփով : Նոյնը պատահած էր պատկերին ներքեւը, 60 սմ.ով չ0 սմ. քառանկիւնի կեդրոնական մասին վրայ : Ա. Յակոբի գլխատեալ մարմինը, ինչպէս նաև իր դիմացը ծնրադիր իր եղ-

րօր Յովհաննէս Աւետարանից կերպարանքը հազիւ նշմարելի էին : Պատկերին մէջ չկար Ս. Յակոբի կտրուած գլուխը : Մենք կ'ենթադրենք որ Առաքեալի գլուխը՝ կեղրոնի ծեփը թափուած մասին վրայ էր, հաւանաբար ուկի կամ արծաթ շրջանակի մէջ առնուած, ինչպէս է պարագան ներկայիս մատրան մէջի գլուխի նկարին :

Դժբախտաբար պատկերին վրայ ոչ



Թիւ 9, արձիակութ հին ուժանկար, երեւան եկած Ս. Յակոբայ Տաճարին նշանային պատին վրայ, Ա. Գլխադիր մատրան անմիջական բավիկը :

նկարչի անուն կար եւ ոչ այլ՝ ուսէ թուական։ Ս. Գրական կամ պարզ բացատրողական արձանագրութիւններ կային միայն երեք դէմքերու գրուխներուն վերեւ։ Առաքելոց գլուխներուն վերեւ գրուածները մինչ միւսին շարունակութիւնը եւ լրացուցիչ էին։ Բայտ այսմ Յակոբոս Առաքեալի (Փրկչի աջ կողմը) լուսապատճին վերեւ գրուած էր. 80ԺԱՐ ՀՄՊՈՒԹ.ՔՆ.

80dBULP LUTRON

## ԶԲՈԴԱԿԵՐԸ ԱՐԵԱՆ

իսկ Յովհաննէս Առաքեալի գլխուն վերեւ՝  
ՍԲ. ՏԵՍՈՒՔՆ ՄԵՐ

## ԱՐԴԻՔՆ ԱՐՈՏՄԱ

Փրկչի զլիսուն աջ կողմբ գրուած էր՝

## ՓՐԿԻՉՆ ԲԱԶՄԻ

ՅՈՒԹՈՒՆ, ՓԱՌԱՑ

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ

ИПОГИ. СУЗ. 2Ф00-11

*LOS TORNOS 20.880.000 :*

*p̥hu m̥t̥g ɻ̥kawɪħn̥ ɻ̥k̥*

ուստի պահպանման կերպերու մասնագէտներ, որպէսօք կարելի ըլլար ստուգել թէ հնարաւո՞ր էր փրկել այս անփոխարինելի նկարը։ Մեր կարծիքու գրեթէ անկարելի էր, քանի որ, ինչպէս ակնարկեցինք, որմանկարին ներկերը զրեթէ փոշիացած էին եւ ներկածեմբերը կարեւոր չափով թափուած եւ թափուելու վրայ էին։ Այնպէս որ յակամայս եւ ցաւով հարկադրուեցանք մերստին ծածկել այս արժէքաւոր որմանկարը, որ վստահ եմ թէ եւրոպական կամ լատին ունէ եկեղեցին մէջ եթէ երեւան եկած ըլլար, պարծանքով բաց պիտի պահէին եւ ամէն միջոց ի գործ պիտի դնէին փրկելու համար այսն, գիտնալով հանդերձ արժէքը եւ նշանակութիւնը այս միւս որշմարտութեան թէ եկեղեցին հնութեանց ցուցագրավայր է։ Այս նկարը ոչ միայն հնագիտական արժէք ներկայացնող գեղարուեստի գործ մը, այլ նաև աւելի տպաւորիչ եւ ներշնչող սրբանկար մըն էու։

Այս կապակցութեամբ կ'անդրագառ-նանք նաև ցաւալի այն երեւոյթին որ կը ծածկէ Ս. Յակորայ Տաճարի հնագիտական արժէքը : Ս. Յակորը ոմանց կողմէ որակ-ուած է «Ս. Երկրի գեղեցկագոյն հեկողեցին»: Սակայն իր արժէքը լոկ իր գեղեցկութեան մէջ չի կայանար, ոչ ալ Ս. Երկրի կարե-ւորագոյն Արքավայրերէն մէկն ըլլալու ի-րականութեան մէջ : Ս. Յակոր Երուսաղէմի հնագոյն եկեղեցիներէն մէկն է, իեթէ ոչ իր ներկայ ամբողջութեամբ, գէթ իր կարգ մը

մասերուն մէջ : Ներսէն դիտուած Ա. Յակոբը արդարիւ կը պարզէ հոյակապ ճարտարապետական գեղեցկութիւն մը, այսինքն կ'արդարացնէ իր «գեղեցկագոյն Տաճար»ի հանգամանքը : Սակայն այս հնադարեան եկեղեցին տարիքը մատնանշող ոչ մէկ երեսոյթ կայ ներսէն : Ներկայիս եկեղեցին ներքին ոչ մէկ տեսանիկի մասը 17-րդ դարէն անդին չանցնիր : Եկեղեցին հնագոյն մասերը ծածկուած ու պահուած են սովորական պատկերներու, յախճապակիներու և ծեփերու հոտին : Մինչեւ իսկ չներ զիտէր թէ Ա. Յակոբը հաստ եւ հսկայական պատերը ինչ տեսակ քարերով շինուած են : Այս կէտի մասին մասամբ մը գալափար կազմելու համար, օգտուելով «Տեառնական» որմանկարի ներքեւի մասին ծեփերուն ինկած ըլլալու հանգամանքէն, կնդրունի քառանկինի մասը ամբողջութեամբ մաքրուեցաւ ծեփի մնացորդներէ եւ սուռացուեցաւ որ եկեղեցին գէթ այս (հիւսիսային) պատր շինուած է կոչու եւ անոտաշ քարերէ :

Արիշ երեւոյթ մը որ մասամբ կը խափանէ Տաճարին ճարտարապետական գիծերուն «երկնակամար» գեղեցկութիւնը, Ա. Յակորայ առաստղէն կախուած կանթեղի չուաններու բազմութիւնն է: Անոնք կախուած են ճախարակներով, եւ անոնց ձայրերը կապուած են սիներուն և պատերուն, այսպէս կրկնապատկելով չուաններու խճողումը: Մասյգ է որ տօնական օրերուն, երբ ամէն չուանէ կանթեղ մը կախուած է, եկեղեցին մէջ կը ստեղծուի զարդական գեղեցկութիւն մը որ իր լուսմին կը յանգի առտուան մթնշաղին, երբ Տաճարի բոլոր կանթեղները վառուած են եւ ամենուրեք կը սփռեն գոյնզգոյն ապակիներէ իրենց պլազուն կինդանութիւնը, պարզելով այսպէս անմոռանալի տեսարան մը: Սակայն սովորական օրերուն, երբ կանթեղներ մնեն մասամբ վեցուած կ'ըլլան, մերկ չուաններ եւ անոնցմէ կախուած զունտեր աւելի կը շեշտեն իրենց դատարկ ներկայութիւնը, ցրուելով զիտողի ուշադրութիւնը այն հոյակապ եւ մայուն ներդաշնակութիւնն որ Տաճարին կամարները, զըմբէթը եւ ընդհանուր ճարտարապետական գիծերը կը յօրինն: Իր կարգ մը ոչ աներաժեշտ զարդերէն մերկանալով այս ըստանելի Տաճարի պարզօրէն սլացիկ վիճութիւնը աւելի երեւան պիտի զայ:

(2)  
*(Gurmukhi)*

ՏԵԱՐՀՔ ԵՊԻՄԿՈՊԱՆ

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱՇՏԾՈՒԹԻՒՆ

**ԱՐԵՎԱԿԱԿԱՆ ԵՐԴԻՆՅ, Ա.Ա.Ա.ԽՕՑԵԱՆ  
Ճ.Ա.ՄԵՐԴՈՒԹԻՒՆ**

Երգեցողութիւնն Արևագալի Հայց Առամելական Անդամական Ակեղեցուոյ.

Քառամայն դաշնաւուց Վարդան Մարգարեան.  
Տպ. Երևանի 1957, էջ 70, գիմ 4 Տոլու:

Անցեալ տարի, 1957ին, Ա. Յակոբեանց տպարանէն ի լոյս ընծայուեցաւ Հայ Եկեղեցական Երաժշտութեան տհասակէտէն Կառքեւոր Հատոր մը, Երգեցողութիւնն Արեւագալի Հայց. Առաքելսկան Աւզդափառ Եկեղեցոյ անունով՝ Գիրքին ծաւուն է 20×26 սանթիմետր, 70 էջերէ բաղկացած։ Հրատարակողը, Տ. Թորգոմ Վարդանէն, Այս Հրատարակութեան Մասին Խօսիով մը կը յայտնէ թէ առաջին անգամն է որ Արեւագալի երգերը կը հրատարակուին քառամայն խառն խումբի համար ձայնագրուած և երգեհոնի բաժինով ճախացած։ Հրատարակութիւնը կատարուած է մասնաւորաբար ի մտի աւնենալով անգլիախօս գաղութներու մէջ բնակող զաւակները Հայ Եկեղեցուոյ։ Առափ, երգերու բասերուն ներքեցիակուած են նաև անոնց անգլերէն առաջարձութիւնը։ Իսկ երգերու բասերուն իմաստուն հազորդ պահելու համար երգիշները, ինչպէս նաև գոհացնելու համար առ հասարակ հետաքրքիր հաւատացեալը կամ ոչ-Հայ ընթերցողը, նոյն էջին վրայ, բնագրին հանդիպակաց, զետեղուած է անգլերէն թարգմանութիւնը, «զոր այնքան խզ ճամուրէն և ճամուրէն կատարած է Գիրք»։ Տ. Տիրան Արքեպիսկոպոս, նախկին Առաջնորդ Հայց, Եկեղեցոյ Ամերիկայի Թեմին։»

Երգերուն գաշնաւորումը և երգեհոնի բաժինով ճախացումը կատարած է երգահան-երաժշտ Վարդան Մարգսկան, Մարտուրէն։ «Վարդան Մարգսկան», կը հաւասաէ Տ. Թորգոմ Վարդանու աշնորհն ու զիտումիւնը աւ համար հայ Եկեղեցական երգերուն հաշրագատ արտայայտութիւնը գտնելու և զանոնք ծալկեցնելու՝ ներսէն, իրենց իսկ ենթահոգին մէջ նիրհուն մեղքիսկան ծալրաւակութիւնով։» Երաժիշտը ձեռքի տակ ու-

նեցած է տարբերակներ մայր եղանակներուն, որոնք սպազմաբար կ'երգուին Երուսաղէմի, Անթիլիսափ և Պոլսայ Եկեղեցիներուն մէջ։ Երաժապէմ և Անթիլիսափ կը գործածեն Լեռն Զիլինկիրեանի կողմէ միաձայն ձայնագրուած եղանակները Արեւագալի։ Պոլսոյ մէջ հաւանաբարու աւելի շատ տարբերակներ կան, որոնցմէ տպագրուած նմուշ մըն է Ներկայ Խիւտագէրտեանի հրատարակութիւններ կը ներկայացնեն վերարիշեալ կեդրոններու մէջ երգուած Սրբագուի երգերը։ Թէ ի՞նչ եղանակ է էջմիածնի մէջ գործածականը, չունինք ստորպ տեղեկութիւն։ Ներկային, պատճառներ ունինք մտածելու թէ վերարիշեալներէն տարբեր պիտի չըլլայ այնտեղ կիրարկուած եղանակը։ Զեսքի տակ ունինք Զայկուկան խաչեցած տպուած համուրը Երգի Զայնագրեալի ի ժամագրոց Հայց. Ա. Եկեղեցուոյ, Վաղարշապատ. Տպ. Ա. Էցմիածնի, 1877, որուն 397-405 էջերը կը բովանդակին Զայ Աբբեւլ Երբեք Արքայութեան Հասարակաց Աղջիկ Արևաբարձր Ժամանակակից մասնաւոր կամ Հարեանցի բաղկատութիւններ որ նիկողայոս թաշճեան Պուլսէն հանչուած էր էջմիածնի, կարգուուրելու համար Հայ Եկեղեցուոյ շարականներն ու երգերը։

Յայտնի է թէ Վարդան Մարգսկան ջանացած է օգտագործել մայր եղանակներու տարբերակներէն ումանք, երբ զանոնք գտած է բանաւոր և հայ Երաժշտուական սպիթն, ու մթնոլորտին հազորդ և ոչ-անհարազատ Այսպէս. Գ. Մարտիրոս Ակոսուածքը ունի երկու տարբերակ, առաջինը՝ պարզ, և երկրորդը՝ աւելի ոլորակաւոր կամ հանդիսաւոր, ինչպէս կարգ մը երգիշներ կը փորձուին զուլ։ Երանապէս Անեղնանելլու երգին տունները բաշխուած են երկու տարբերակներու վրայ, որոնցմէ առաջինը կարծեապահ մը թուիչք կ'առնէ, առաւտատեան արտոյտին պէս զիտում գիմաւորելու, իսկ երկրորդ տարբերակը կը բացուի ալքերէն խոզուն ու խազուղ հազիներուն։ Նոյն տարբերակները պահելով. Վարդան Մարգսկան, նկատի առնելով Միջակ ու թաւ ձայնիրու բարձրութեան տարսղութիւնը, Անեղնանելլու

երգին տօւները ձայնագրած է քառեակ մը վար հրմանայի վրայ, էջ 46-48, ի զիւրութիւն երգիչներու ։ Եսյն նպասակազ և նայն աշխատանքը կատարած է Գ. Մասի ձաւագրականին երգին Յորդութակին համար։

Արեւագալի հատորին ապագրութիւնը պատռաւրեր ձեռնարկ մըն է Ս. Յակոբեանց Տպարանին համար։ Տպագրութիւնը՝ մաքուր, բացի ձայնագրաւած վերջին ութը էջերէն, որոնց մասին իմացանք թէ արկածի մը հետեւանքով և երկրին մէջ նոյն սեհակի և որուկի թուզթ չգտնուելուն պատճառով, ապարանց պարուաւուած էր Պէյրութ տանիլ ձայնագրեալ տախտակները և այնուղ ապագրել տալով երւուազէմ փոխագրել։ Գնահատանքի արժանի են, բացի երիտասարդ տրուեստագէտ Վարուժան Հայրապետեանէ։ որ իւրայատուկ ըմբռանովութեամբ պատրաստած է կողքի զծագրութիւնը, ամերիկաբնակ երկու ընասնիքներ, որոնք նպաստած են հատորին հատարակութեան։ Երև Եսոք բնակող Տէր և Տիրին Փօլ Չափութեան հայթայթած են ձայնագրեալ էջերու լուսափորագրեալ տախտակները, ի յիշտառի իրենց գողամեռիկ թռուան՝ Կարօ Փօլ Թորոսեանի։ Իսկ Ֆիլատելիքայէն, Տէր և Տիրին Արամ Աթթարեան նիւթագէս օժանդակած են, յիշտառկ մը արձանագրելով իրենց զաւակաց՝ Տէր և Տիրին Մարտիրոս Աթթարեանի և թռուան՝ Արամիկի և Լեռնիկի անուան։

\* \*

Ուրիշ կարեոր աշխատանք մը զոր կատարած է երաժիշտ Վարդան Մարգասեան, Տ. Թորգոմ Վարդի յանձնարարութեամբ, դաշնաւորւմն է նախապատարագիան արարողութեան, այսինքն Առաւոտեան Ժամերգութեան երգերուն և քարոզներուն։ Հաւաստի ազրիւրէ զիտենք թէ Տ. Թորգոմ Վարդի ի մօտ պատրաստ կան հետեւալ երգերն ու քարոզները, բոլորն ալ երգեհոնիք բաժինով և ոմանք խոռոքի համար բազմաձայնուած։ — Առք Խոշբերէց, Արք երգին երկու փոփոխակներով և Փառա Յառաբեկան Քո երգին ծանրոր ու յորդոր տարրերակներով։ Եսե Փառա ի Բարձուան օրհներգութեան երկու փոփոխակները, ասոր հետեւալ ըստ պատշաճի սազմաներով։ Տա-

կաւին, սարկաւագի +արշավը՝ Աստազուն, Մայր Առ-ըբ, Առաւոտ Մէջ, Զճշնարիւն, Առաջնորդութեալ, զպիրներու բազմաձայնեալ պատասխաններով։ Եւ վերջապէս, Առըբ Առաւոտ, Նորասուշնորդեալ (երկու տարրերակներով և Այսէն Որդէքուուր առաջնական հանդիսաւոր մէկի եղանակազ), Եղիշը սազմոնը և Խորիսուցուած քարոզը։ Առաւոտեան Ժամերգութեան երգերուն պատրաստի էջերուն ընդհանուր թիւն է մօտ 150։

Բացի Առաւոտեան Ժամերգութեան երգերէն, պատրաստ կան 100 էջիր ըստ հետեւալին։ — Պատէլ Խորհուրդը, Հաքենաչէլու (Երև Տէր, Ար յանէց, Քահանայի, Ժամելուաց, և Արքնան, Առարիսայան, Անել Խորհուրդը), Յարունեան Ութը Ճաշուն, Ամէն Հայր Առըբ և Տէր Առըբէա երգերու փոփոխակներ, Համապատասխան (հուածայն) և Առաւոտեան։

Վարդան Մարգասեանի կատարած աշխատանքին երաժշտական արժէքին մասին գնահատանքով արտայատուեցան բանիմաց երաժշտագէտներ և արուեստի քննադատներ, Արեւագալի Երգերու հրտարակութեան ասիթով։ Այդ արտայատութիւնները կարելի է ամփափուած տեսնել հետեւալ տողերուն մէջ, որոնք նոյն տակն կը ցոլացնեն Հայ երաժշտական Հոգիին հաղորդ իմացականութեան մը ներկայութիւնը։ Պրուֆսիէն, Հայկ Փալանթարեանց, անձնական համակի մը մէջ կը զրէ։ —

.... Կարեոր աշխատանք մըն է այս, մեր Եկեղեցւոյ շարականներու կալուածին մէջ, և կատարուած է մէծ խնամքով և ձեռնասութեամբ և արժանի է լուսպոյն գովեստներու։ Այս շարականները իրենց մեկեղիսական սոզերով, իրենց եղանակներով և գաշնաւորումով, զմիկ կ'առաջնորդեն զէպի Հայ Եկեղեցւոյ գաւերական, հարազատ երաժշտութիւնը, թօթափած օտար ամէն ազգեցութիւն։ Առանց նկարագրին և կառուցուած քին չնարհիւ, մեր Եկեղեցւոյ երաժշտակներները անսոց մէջ պիտի գոնին հետքեր ժողովրդական երաժշտութեան և վերջամացութիւններ հեթանոսական ըրջանի երգերէն։

«Այս տեսակէտէն, ես զանոնք զերազու կը համարիմ քան Հայր Ղեղոնդ Տայեանի «Նարականիներ» (Վենեատիկ, վերջին տըպագրութիւն), որոնց մէջ օտար ազգեցութեան ըրջանը զգալի կերպով շեշտուած է,

և հետեւար ծանրօրէն կը ճնշէ հարազա-  
տութեանը վրայ Հայ Եկեղեցւոյ Երաժշ-  
տութեան . . . .

Այս կապակցութեամբ աւելորդ չըլլար  
թիրես անգրագանաւէ Բարիկահայ շարա-  
թաթիրք Խթանի այն ուրախութիթ տեղե-  
կութեան, ըստ որում, Բարիկարնակ Պր.  
Գառլօ Միրաքեան ստանձներ է հոգալ տը-  
պազրութեան ծախսիրը եւրոպական ձայ-  
նազրութեամբ միաձայն զրի առնուած հա-  
տորի մը, որ պիտի պարունակէ Յարու-  
թեան Կիրակիներու ըստ ութը ձայնիրու-  
րուար արարողութիւնները, սկսեալ Տէր չէ  
բայց էն մինչ պատարագ: Այս գովելի  
և համբերատանջ աշխատանքը կատարած  
է Պր. Նշան Սերգոյեան, Բարիկէն: Միայն  
թէ, հարց կը ծագի թէ ի՞նչ են ազրիւնիրը  
ներկայացուելիք երգերուն և շարականնե-  
րուն. մ՞ր կեզրոնի կամ ըրջանի եղանակ-  
ներն են անոնք. մ՞րքան հարազատութեամբ  
իրենց մէջ պահած են Հայ Եկեղեցական ե-  
րաժշտութեան ոգին ու նկարազիրը: Տա-  
կաւին, եթէ Պր. Ն. Սերգոյեան պարզա-  
պէս հայկական ձայնազրութենէն նոյնու-  
թեամբ փոխազրած է եւրոպական ձայնա-  
զրութեան, հարց կը ծագի թէ մ՞րչափով  
ներկայիս կիրարկիի եղանակներ են ներ-  
կայացուելիքները: Այս պարզապին պիտի  
վարանինք համաձայն գտնուելու անոնց,  
որոնք կը կարծեն թէ նման աշխատանք մը  
կանչուած է կորուստէ փրկիլու մեր հնա-  
ւանդ գանձերը: Այդ գանձերը արգէն իսկ  
կորուստէ փրկուած են որքան ատեն որ  
արձանագրուած են և տպագրուած, թէ իսկ  
հայկական ձայնազրութեամբ: Իսկ եթէ Պր.  
Ն. Սերգոյեան փոփոխութիւններու ենթար-  
կած է իր ձեռքին տակ ունեցած բնազիր-  
ները, առանց մէջ նշմարելով կամ ընդզգա-  
լով մնացորդներ օտար ազգեցութեանց,  
այն ժամանակ պիտի պարտաւորաւինք ա-  
շելի լրջանալ: Այդ պարազային կը միջա-  
տեն արուեստագիտական և երաժշտական-

բանասիրական հարցեր, որոնք Պր. Սեր-  
գոյեանի ուսերուն կը դնին խղճամբառ և  
հմուտ ուսումնասիրութեան մը պատաս-  
խանատուութիւնը: Նման աշխատանք մը  
աւելի թանկագին և օգտակար պիտի լինէր  
քան պարզ վերծանում մը հայկականէն  
գէպի եւրոպական ձայնազրութիւն:

Կասկած չունինք որ հայ եկեղեցինե-  
րէն ներս երգեցողութիւնը պէտք ունի ա-  
ւելի մէծ խնամքի: Հին հասկացողութեամբ  
ուշացանէրու ձեռքը կարելի չէ թողուէ ա-  
նոր խնամատարութիւնը, եթէ Եկեղեցին  
իր հոգեոր երգերը պիտի ծառայեցնէ հո-  
գեոր սնունդ ջամբելու իր զաւակներուն:  
Չի բաւեր միայն հպարտանալ այն իրողու-  
թեամբ թէ ունինք հարազատ հայ եկեղե-  
ցական երաժշտութիւն, որուն ինքնայտ-  
առկ մթնոլորտին մէջ օտարներն անգամ  
կ'ազրին հոգեկան վերացման պահեր: Այ-  
ժանը պարտականութիւն մը կ'իյնայ Հո-  
գեոր իշխանութեանց ուսին, որպէսզի ըս-  
տեղ ծուին նպաստաւոր պարմաններ Հայ  
երաժշտութեան հմուտ արուեստագէտները  
քաջալիրելու, զանօնք աշխատանքի գծե-  
լու, մէկ կողմէ ուսումնասիրելու համար  
անհշակ մնացած նիւթերը, միւս կողմէ  
մշակելու համար Հայ Հոգեոր երաժշտու-  
թիւն մը: Իսկ հոգեոր դաստիարակչութեան  
պակասին հետեւանք է անշուշտ, որ երգե-  
լու շնորհ ունեցող զաւակները Եկեղեցինն,  
այլ և այլ պատճառներով հնուռ կը մնան  
եկեղեցիններու երգչախումբերէն, փոխանակ  
իրենց հոգեոր պարտականութիւնը նկատե-  
լու Աստուծոյ տան պայծառութեան ընծա-  
յելու Աստուծմէ իրենց շնորհուած մէկ ձիր-  
քին և բարի յատկութեան արգասիքը:

Հայ ազգը իր երաժշտական առաքի-  
նութեանց լաւագոյնը պարտի ի սպաս դնել  
Հայ Եկեղեցւոյ խորանին զիմաց, ուրկէ  
միշտ պիտի բացուի լուսեղէն ճամբան իր  
պատմութեան և իր ապազային:

Ճ. - Մ.



## ԿԻՐԱԿԻՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԸ ԵՒ ԱՆՈՐ ԿԱՐԵՒՈՐ ԳԵՐՐ

### ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷԶ

— • —

Կիրակինօրեայ գպրոցը եկեղեցւոյ կը բթական մէկ հաստատութիւնն է, Աւետարանի ծըմարտութիւնները ժողովուրդին, և ի մասնաւորի, մատաղ սերունդին ուսուցանելու նպատակաւ հաստատուած։ Եկեղեցին գլխաւոր նպատակակէան է զէթ, Աւետարանին սկզբունքները քարոզել և կիրարկել ժողովուրդներու առօրինյ կեանքին մէջ։ Ասիկա կրօնական դաստիարակութիւնը կարելի է Կիրակինօրեայ վարժանը ամենէն ազգու միջոցն է եկեղեցին ձեռքը՝ այս դաստիարակութիւնը տաշտու համար նոր սերունդին։

Մանուկը երբ պղտիկուց վարժուի կրօնական սովորութեանց և իր նկարագիրը կազմէ քրիստոնէական կրօնի վիճ իտէալներու անմիջական ներշնչումներու ներքեւ, այլևս անիկա չահուած է եկեղեցին համար։ Մանկան մաքուր սիրտը, պարզ միարքը, ջինջ երեակայութիւնը և հոգեկան ընկալուչ տրամադրութիւնները զինքը ամէն կերպով ընդունակ կը դարձնեն որտաց որդիգրելու և իւրացնելու Աւետարանի այն փրկարար ծըմարտութիւնները՝ որոնք անհրաժեշտ են բարի նկարագրի մը կազմութեան համար։

Զափահաններու հոգերանութենէն բուլորդին տարբեր է մանկան հոգերանութիւնը։ Եկեղեցւոյ բեմէն մեծերու համար խօսուած քարոզը փոքրիկներուն չյարմարիր։ Անոնք անկէ օգուտ չքաղելէն զատյանձախ ծանծրութիւն ալ կը զգան։ որ պատճառ կը գառնայ եկեղեցիէն և կրօնքէն ուժանանուն։ Եկեղեցի մը ժողովուրդով կանգուն է, ժողովուրդ ունենալու համար ալ անհրաժեշտ է մատաղ սերունդը բռնել։ Եթէ եկեղեցին մատաղ սերունդը պիտի շահի եր կողմը, պէտք է կամ անսնց համար առանձին պաշտամունք կարգագրէ աղայոց կողմէ հասկնալի և մատչելի քարոզներով։ և կամ Կիրակինօրեայ գպրոցներ պէտք է կիմնէ։

Հին ատեն գպրոցներ եկեղեցին հակակշաբն ատէ էին և այս պակտուը կը լրացնէր գպրոցներու մէջ մանկանց տրուած կրօնական դաստիարակութեամբ։ Այժմ կացութիւնը փոխուած է, արդի պայմաններ նոր պահանջներու առջն դրած են Եկեղեցին։ Աւսուի Կիրակինօրեայ գպրոցի հարցը՝ իրեն կինուական պահանջք, տարուէ տարի կը ստանայ աւելի մեծ կարեւութիւն։

Ի՞նչ է Կիրակինօրեայ գպրոցին նպատակը։ Կիրակինօրեայ գպրոցին նպատակն է քրիստոնէական ազնիւ նկարագիր ստեղծել մանկան մէջ։ Բայց մեր հայերուս համար անոր նպատակը երկու է։ Քրիստոնէական ազնիւ նկարագիր կերտելէ զատ, Կիրակինօրեայ վարժարանը կաշում ունի նաև հայ մանկան ներշնչել Հայ եկեղեցւոյ ոգին և սորգեցնել անոր մեր տոհմային առաքինութիւններն ու բարիմասնութիւնները որ ան ըլլայ ոչ միայն քրիստոնեայ այլ հայ քրիստոնեայ։

Կրօնական և ազգային այս երկու նպատակները աչքի առջն ունենալով, Կիրակինօրեայ գպրոցներու մէջ, Ա. Գրոց կրօնական գէմքերու պատմութեան հետ միաժամանակ պէտք է աւանդուի մեր մատաղ սերունդին հայ եկեղեցական պատմութեան կրօնական հերոսներուն կինուագրութիւնները։ Արքահամբ, Առվուէփի, Առվուէսի, Դաւիթի և Պօղոսի կեանքին հոգեսր արժէքները։ Արոգհետե ամէնքն ալ նոյն Ս. Հոգիէն ներշնչուած և նոյն Աստուծմէ ստացած են իրենց հոգեսր տաղանդները։

Կիրակինօրեայ գպրոցի արդի դրութիւնը 178 տարուան պատմութիւն ունի իր ետեւ Անիկա հիմնուեցաւ 1780 թուականին, Ռուպէրթ Ռէյքսի նախաձեռնութեամբ, Անգլիայ կլուսթը քաղաքին մէջ։ Բայց մանկանց

կրօնք ուսուցանելու սովորութիւնը շատ կին է Քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ:

Բայտ հրէից թալմուտ գրքին, «Եթէ զիւզ մը մանուկներու համար զպրոց չունէր» պէտք էր կործանուեր»: Յիսուսի ժամանակ հրէից Շարաթօրեայ սինակոկները մեր արդի Կիրակնօրեայ զպրոցներու զերը կը կուտարէին: Փիլո զանոնք «Դասիարակչական Տուներ» կը կոչէր: Յիսուս մանուկները զուրգուրտնքի առարկայ զարձուց իր հրման կրօնքին մէջ: Նախկին քրիստոնեաներ իրենց մանկանց խղճամբար կրօնական կրթութիւն կուտային:

Նոյնպէս հայ ժողովուրդի համար կրօնական գաստիարակութիւնը նորութիւն մը չէ: Քրիստոնէութիւնը Հայաստան մտած օրէն սկսեալ մեր նախահայրերը ուր որ հեղիղեցի հաստատած են, չեն մոռցած անորկից բանալ զպրոց մը: Կրօնական գաստիարակութեան Հայաստանի մէջ արուած հաշբեարութեան հետեւնքով, եւ գարու ընթացքին հայ ժողովուրդը ունեցաւ կրօնական վերածնունդ մը՝ որ կը կողմէ մեր պատմութեան սոկեցարը:

Ասկէ տասնըհինգ զարեր առաջ հայ վերծանողներ Հայաստանեայ Եկեղեցին մէջ Աստուածաշունչ Մատեանը թէ՛ ժողովուրդին հանգած լեզուին կը թարգմանէին, թէ՛ կը մեկնէին և թէ՛ կը բացարկէին, տալու համար անոնց հոգեւոր սուսնդ և ներշնչում:

Հետեարար արդի Կիրակնօրեայ զպրոցի դրութեան հայոց մէջ մուտքը ուրիշ բան չէ՝ բայց եթէ հազար հինգ հարիւր տարի սուած սկզբունքով ընդունուած ձեռնարկին ներկայ բրանումավ վերաբարձումը:

Ժ.՝ գարու վերջին շրջանին Անգլիոյ մէջ ծագում առած Կիրակնօրեայ զպրոցներու արդի գրութիւնը ԺԹ.՝ զարու մէջ սուած միջազգային մասնաւոր հանգամանք:

1889ին, Յուլիո 1-6, երբ Կիրակնօրեայ Պարոցներու Համաշխարհային սուածին Համաժողովը գումարուեցաւ Լոնտոնի մէջ, անհետագրելի էր սահմանած խանդագառութիւնը: Այս Համաժողովին մէջ ներկայ էին 904 պատուիրակներ, 360 Մարդկաց նախանդներէն, 69 Գանատայէն, 440 Անգլիայէն, և 35 հոգի ալ ալ և ալ երկրներէ: Կիրակնօրեայ զպրոց յաճախողներուն թիւն էր այդ տարին 19,715,781:

1928ին, ասկէ 30 տարիներ առաջ, երբ Համաշխարհային Տասներորդ Համաժողովը գումարուեցաւ Գալիֆորնիոյ Լոս Անձէլը քաղաքին մէջ, Յուլիո 11-18ին, ներկայ էին 7,631 պատուիրակներ, 51 տարրեր երկիրներէ եկած, իսկ ունկնդիրներուն թիւը կը նկատուէր աւելի քան 40,000: Բայտ այս Համաժողովի տեղիկազրութեան, Կիրակնօրեայ զպրոցներուն մէջ 1928ին կը պաշտօնավարէին 3,603,517 զասատուներ, և կը գաստիարակուէին 29,411,435 ուսանողներ: Այս Համաժողովին մէջ մասնաւոր հարէւրով ներկայ էր Ֆրէզնոյէն, Գալիֆորնիոյ թեմի անդրանիկ առաջնորդ, Գարեգին Եպիսկոպոս Խաչատուրեան (այժմ Պատրիարք կ. Պոլսոյ), որ խնամքով պատրաստուած անգլերէն գեղեցիկ գրութեամբ մը ծանօթացուց ներկաներուն Հայ Եկեղեցւոյ անցեալի մէջ ունեցած կրօնական ուսման բնոյթը և Հայ Կիրակնօրեայ զպրոցներու արզի կացութիւնը: Գարեգին Սրբազնի սոյն գրութիւնը ունկնդրուեցաւ հետաքրքրութեամբ և արժանացաւ մէծ գնահատութեան: Իսկ Հայ Աւետ Եկեղեցիցին ներկայ էր Բրօֆ. Լութֆի Լևոնեան՝ որ կարգաց շահեկան գրութիւն մը, որու նիւթն էր ռԱՄհմետական աշխարհի պէտքը»:

Համաշխարհային Կիրակնօրեայ զպրոցներու այս շարժումը ցարդ ունեցած է 13 Համաժողովներ: Առաջինը գումարուած է 1889ին Լոնտոնի մէջ, Երկրորդը՝ 1893ին Միացեալ Նահանգաց Աէյնթ Լուիզ քաղաքին մէջ, Երրորդը՝ 1898ին Կրկին ի Լոնտոն, չորրորդը՝ 1904ին յերուսալէմ, հինգերորդը՝ 1907ին Հռոմի մէջ, վեցերորդը՝ 1910ին Ռւաշնկմբնի մէջ, հօրենտորդը՝ 1913ին Ցիրիխի մէջ, ուրենորդը՝ 1920ին Թոքույի մէջ, իններորդը՝ 1924ին Կատակոյի մէջ, տասնեւրորդը՝ 1928ին ի Լոս Անձէլը, տասնեւերուրորդը՝ 1932ին Պրազիլիայի մէջ, տասնեւերուրորդը՝ 1936ին Օուլյի մէջ, իսկ տասնեւեթերորդը՝ 1950ին ի Թորոնթօ (Գանատա):

Իսկ վերջին Համաժողովը՝ որ տասնեւրուրորդը պիտի ըլլայ, զումարուեցաւ 1958 Ծփու. 6-13ին, Խոնիոյի մեջ (Ճարտա): Ժողովը իրեն նշանաբան ունէր: «Քիսուս և հանապահն, հօմարտութիւն եւ կիսնել»:

Այժմ աշխարհի վրայ աւելի քան 70 տարրեր երկիրներու Կիրակնօրեայ զպրոց-

## ԱՄԲԵԹԻ ԺՈՂՈՎԸ

Լամբեթի ժողովը մէկն է Անգլիան  
Եկեղեցւ մեծագոյն զէպքերէն՝ որ տասը  
տարբին անզամ մը տեղի կ'անհնաշ և ուր  
կը փոթան Անգլիան Եպիսկոպոսներ աշ-  
խարհի չարս կողմէրէն, խորհրդակցութիւն-  
ներ անհնալու համար։ Ան իր անունը  
կ'առնէ Լամբեթի Պալատէն՝ ուր կը գու-  
մարուի ժողովը և որ մինչոյն առեն պաշ-  
տօնատունն է Քենթրապրի Արքեպիսկոպո-  
սին — Նոխագահը և հրահրովը այս հա-  
շոքոյթին։

Այս ժողովներէն առաջինը տեղի ու-  
նեցաւ 1867ին, Լոնդոնի Արքեպիսկոպոսի  
օրով, երբ չուրջ 76 Եպիսկոպոսներ ժողովի  
հետոն Բայց հետզհետէ, ժամանակի ըն-  
թացքին, ան եղաւ կարեոր և ազգեցիկ  
ժողով մը՝ որուն իրենց մասնակցութիւնը  
բերին եպիսկոպոսներու մեծ թիւ մը։ Զոր  
օրինակ, գերջին անզամ, 1948ին, 326 եպիս-  
կոպոսներ ներկայ էին, իսկ այս տարի՝ 317։

Լամբեթի ժողովը աւելի խորհրդակ-  
ցական մարմին մըն է քանի թէ օրէնսդրա-  
կան, և իր նիստերը գոնիքակ են՝ Անգլի-  
ան Թհմուկալ եպիսկոպոսներու միայն  
վերապահուած։

Ներուն մէջ ՅՈ միլիան մասնակներ և երի-  
տասարդներ կրօնական դաստիարակութիւն  
կը ստանան մաս 5 միլիոն դաստուներով։

Հայ կրտնօրին գպրոցները աւելի  
արգիսկանացներու և աւելի հաստատուն  
հիմերու վրայ զնելու համար խիստ կարեօր  
է Հայ ժողովուրդին մասնակցութիւնը այս  
տեսակ խորհրդակցական մեծ Հայաժողով-  
ներուն։

Հայը Քրիստոնի կրօնքը պետականա-  
ցնող առաջին ազգը եղած է պատմութեան  
մէջ, և Քրիստոնէւթեան դատի յաղթա-  
նակին համար, իր թւոյն համեմատութեամբ,  
ամենէն շատ նահատակներ ու մարտիրոսներ  
տուած է, և մասնակցած է նաև Քրիստո-  
նէւական Եկեղեցւ Տիեզերական առաջին  
երեք մեծ ժողովներուն, ուստի պատճառ  
մը չկայ որ չմասնակցի այս և նահանօրինակ  
կրօնական մեծ շարժումներուն։

Ֆրենք, Գրիմ, Գալուստյան

ԴՐ. Ա. ԱՍՏՐԱՖԵԼ

Ազգարութիւն եղած է այս առթիւ  
հրահրութիւն նաև օսմար Եկեղեցիներու չեր-  
կայացուցիչներ, որպեսզի անոնք մասնակ-  
ցին Քենթրապրի Մայր Եկեղեցին անզի ու-  
նեցած ժողովի Բացման Հանգիստուոր Պաշ-  
տօնաւնքին, ներկայ լլլան ժողովի կապահու-  
ցութեամբ կազմակերպուած լնկերութիւն  
զանազան հաւաքույթներու (Ճաշկերութիւն,  
թէյանեզան, հալլին), և ապա պաշտօնաւ,  
պէս ընդունաւին ժողովէն, ուր իրենց ևս  
կ'ասաւջարկուի խօսք առնեն։

Այս տարւան ժողովին ներկայացնու-  
ցիչներ եկած էին Կ. Պալույ Յոյն Օրթո-  
ոսքու Տիեզերական Պատրիարքութիւնէն,  
Մակուայի Ռուս Օրթոստքու Պատրիար-  
քութիւնէն, Խումանիոյ, Պուլկարիոյ և Հին  
Կաթոլիկ Եկեղեցիներէն։ Անգլիայ Հայրա-  
պետական Պատուիրակ Գերը։ Տ. Պատկ  
Եպու Խումանիան ևս պաշտօնապէս հրա-  
փուած էր։

Օտար Եկեղեցիներու Պատուիրակու-  
թեամբ պաշտօնական ընդունելութիւնը  
տեղի ունեցաւ Շաբաթ օր, Յուլիս 5ին։  
Բայր Արքեպիսկոպոսներն ու Եպիսկոպո-  
ները հուաքուած էին Լամբեթի Պատուի  
Մատենագարանի մեծ սրահին մէջ, նախա-  
գահութեամբ Քենթրապրի Արքեպիսկոպո-  
սին, ընդունելու համար այլ Եկեղեցիներու  
ներկայացուցիչները։

Ընդհանրապէս Անգլիական եպիսկոպու-  
ս ժողովին կը ներկայացնէ Պատուիրա-  
կութեաներէն իւրաքանչիւրը։ Արեմանան  
նիւ եօրքի եպիսկոպոս Լ. Լ. Աքէֆ ներ-  
կայացուց Աւթրիխթի Հին Կաթոլիկ Արքե-  
պիսկոպուլը։ Օքսֆորտի եպիսկոպոս Հ. Շ.  
Քարքինթը ներկայացուց Օրթոստքու Եկե-  
ղեցիները։ Ա. Գ. Մաք Իննէս, Երուսաղէմի  
Անկլիքան Արքեպիսկոպուլը, ժողովին ներ-  
կայացուց Գերը։ Տ. Պատկ Եպու Խումանի-  
իանը։ Պատուիրակութեամբ ներկայացուե-  
լէն ետք, խօսք տրուեցաւ իւրաքանչիւրին։

Ստորե կը զնենք Մաք Իննէս Արքե-  
պիսկոպուլ ճառը՝ որով ան ներկայացուց  
Հայց, Եկեղեցին և Տ. Պատկ Արքականը  
ժողովին։

«Գերապատիւ Տէր, և Եպիսկոպոսներ

Մեծագոյն առանձնաշնորհ կը նկատիւ  
որ այս կէսօրէ վերջ կարողացած եմ հս-  
տու և ողջունել Տ. Պատկ Եպու Խումա-  
յանը».

հանը՝ որպէս մասնաւոր ներկայացուցիչը կանոնի մէջ Ամենայն Հայոց Ծեղ հանրաշխան Հայրապետին։ Ոչ միայն հաճոյք մընէ այսպիսի մեծ անձնաւորութեան մը ներկայացուցիչը ողջունել, այլ նաև ուրախութիւն՝ ողջունելով մէկը որ երկար առարիներէ ի վեր կը ճանչնամ։

Եթէ կը խօսիմ երաւաղէմի Եկեղեցւոյն և անոր հետ ունեցած մեր յարարերութեանց մասին, պարզապէս անոր համարէ որ՝ հան Անկլիքան Համայնքին մէջ՝ յատկապէս շատ սերտ յարարերութիւն ունեցած ենք Հայ Եկեղեցւոյն հետ։ Պահ Արքազանի ուսանողաւթեան շրջանին երաւա-



Լամբերի ժողովականները պատամունքի բնրացքին, Քենրապրիի Մայր Տաճարին մէջ։

Որքան յիշողութիւնս կը ներէ, իրեն հանգիստած եմ երեսուն տարի առաջ Երուսաղէմի մէջ, ուր ան Աստուածաբանութեան ուսանող էր Երաւաղէմի Հայոց ժառանագաւորաց Վարժարանը, և որքան մեծ եղաւ ուրախութիւնս երբ քանի մը տարի առաջ Լոնտոն գալով տեղեկացայ որ ան հաստատուած էր այս երկիրը։

գէմի Պատրիարքն էր շատ մեծ անձնաւութիւն մը և մեծ պատմաբան մը — Դուրեսն Պատրիարք։ Վարժարանին ուեսուչն էր մէկը որ Երաւաղէմ այցելողներու ծանօթ էր Հայր Կիւրեղ (Ֆատհը Սիրը) անունով, որ յետոյ եղաւ Պատրիարք Երաւաղէմի, և մենք արդարե կը սկսնք իր վաղաժամ մահը 1949ին։ Հայր Կիւրեղ

իրքն Պատրիարք, ինչպէս նաև իր տեսչութեան օրերուն՝ մեծ ջանքեր ըրաւ աւելի սերտ յարաբերութիւն յառաջ բերելու համար իր եկեղեցւոյն և մերինին միջն, և զայս իրագործեց յաճախ այնպիսի փոքրիկ միջոցներով որոնք կրնան մոսցուիլ:

Ժառանգաւորաց Վարժարանի իր տեսչութեան օրերուն, մեր համայնքն մէջը իր մասնակցութիւնը կը բերէր կրթական այդ գործին։ Հայր Պրիմէէն, Ամերիկայի Բողոքական Եպիսկոպոսական Եկեղեցին քահանայ մը, երկար տարիներ ուսուցիչ եղաւ այստեղ, և ուրիշներ իրեն յաջորդեցին։ Աւելի վերջերս, ուսուցիչ տուածէինք նաև Անթլիփասի (Լիբանան) Ժառանգաւորաց Վրժ. ին։ Ամերիկացանք զայն առժամապէս զագրեցնել քաղաքական կացութեան պատճառաւ։ Այսպէս, մենք մասնաւոր սերտ կապ մը կը հաստատէինք մեր մասնակցութիւնը բերելով զատիքական թեան գործին անոնց՝ որոնք Հայ Եկեղեցւոյ պաշտօնեաները պիտի ըլլային։

Ուրիշ ապացոյց մը Երուսալէմի մէջ գոյութիւն ունեցող այս մատիկ յարաբերութեան այն իրողութիւնն է որ, Աւագ Հինգչարթի օրը, Առնարուայի արարողութիւնէն յետոյ, ժողովուրզին մէջէն հրաւիրուեցայ, զգեստաւորուած շուրջառով և թագով, Անգլերէն կարգալու Առնարուայի Աւետարանը՝ վերջին օրհնութիւնէն առաջ։ Ասիկա սովորութիւն մըն է որ աւանդութիւն գարձած է, և կարծեմ առաջին անգամ տեղի ունեցած է Ա. Պատերազմին յաջորդող տարին, երբ հայրս Երուսալէմի եպիսկոպոս էր և անակնկալորդէն հրաւիրուեցաւ զգեստաւորուիլ, Աւետարանը կարգալ և ապա իր օրհնութիւնը տալ։

Ահա այն սովորական և ընտանի կերպերը որոնց միջոցաւ սերտ յարաբերութիւն մշակուծ ենք Հայ Եկեղեցին հետ և հետզհետէ իրազեկ եղած իրենց կորովին, քաջութեան և բազմապիսի բացառիկ ձիրքերուն՝ որոնցմով օժտուած են անոնք։

Մեծ յայս ունէինք որ այս տարի կարելի պիտի ըլլար բանակցութեանց ձեռնարկել Երուսալէմի մէջ — նախապատրաստական խօսակցութիւններ — օրոնց հիման վրայ թերեւ կարելի ըլլար ապագայ բանակցութեանց օրակարգը պատրաստել։

Ամէնք աւ տեղեակ էք այն գժուա-

րութեանց՝ որոնք վրգոված են Միջին Արևելքը։ Պիտի չփորձիմ լայնորէն խօսիլ Զեզի ներկայ Ժամանակներու քաղաքական հարցերու՝ և ոչ ալ այն գժուարութեանց ժամին՝ որոնց մէջէն կ'անցնի Հայ Եկեղեցին։ Պատրիարք Տիրան ներկոյեան, որ Պատկ Եպու Թումայեանի նախորդներէն մին էր Լոնտոնի մէջ, Պատրիարք Ընտրուեցաւ, բայց իր Ընտրութիւնը գեռ չէ վաւերացուած Կառավարութեան կողմէ, և հետաքար իր գերքը կը մնայ բարգ և գժուարին։ Ու երբ կ'աղջուննենք իրենց ներկայացուցիչը այստեղ, կ'աղօթենք որ չուտով խաղաղութիւն հաստատուի այդ Եկեղեցին ներս, և մենք կարողանանք չուտով աւելի մանրամասն բանակցութեանց ձեռնարկել և մասին մեր յարաբերութեանց՝ որոնք այնքան երջանիկ եղած են երկար տարիներէ և վեր։

Երկու տարի առաջ զատիքուը ունեցաց Պատկ Եպու Թումայեանի հետ Լոնտոնի օգակայանը երթաւու և որպէս Զերգ Գերապատութիւն Քինթրպիթի Արքեպիսկոպոսիկ ներկայացուցիչը բարիգաւուստ մաղթելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ որ Անգլիա կ'այցելէր։ Վասահարար առաջին անգամն էր որ Կաթողիկոս մը Անգլիա կ'այցելէր։ Ասկէ առաջ, կարծեմ հարիւրաւոր տարիներէ ի վեր, ոչ մէկ Կաթողիկոս հեռացած էր Ա. Էջմիածնէն։ Պատմական այցելութիւն մըն էր ասիկա և կը խորհիմ որ ամէնքս ալ մէծապէս տպաւորուեցանք այն անձնաւորութենէն որ այդ բարձր պաշտօնը կը վարէ։ և երբ հիմա կ'աղջուննենք այստեղ Արբազանը, պիտի խնդրէինք որ մեր ողջոյնները հազորդէր Ա. Կաթողիկոսին՝ որուն ներկայացուցիչն է, և նաև ըսէթէ որքան կը փափաքինք արտայայտել մեր ի Քրիստոս միութիւնը այս մեծ Եկեղեցին հետ և այն հրացումը զոր կը զգանք անոր հանդէպ այն կեցուածքին համար՝ որով ան զարերէ ի վեր տոկացած է հալածանքներու, օրինակ հանդիսացած է քրիստոնէական Եկեղեցիներուն աշխարհի ամէն կողմ, և թէ ինչպէս կարելի է խաղաղութիւն պահպանել, հակառակ որ ընդհանրապէս կ'ապրին իրեւ որոշ սպասնալիքի տակ ապրող փոքրամասնութիւնն մը՝ ժողովուրդներու մէջ, որոնց մեծամասնութիւնը կը պատկանի այլ կրօնքներու։

Հետեւ արար, Պատկ Արքագան, կ'ոզ ջուշները զգեց, և ուրախ ենք աեսնելու որ այդ Եկեղեցին կը ներկայացնէք այս ժաղովին մէջ։»

### Տ. ՊՈՅԻ ԵՊՈՒԹ ՃԱՌԸ

«Զերդ Գերապատուաւթիւն, և Արքագան Եպիսկոպոսունք

Պարտք կը զգամ Զերդ Գերապատուաւթիւն և այսուեղ ներկայ եղան Արքեպիսկոպոսներու և Եպիսկոպոսներու գ հազորդիլու Ն. Ա. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Արքագան Կաթողիկոսին եղբայրական ողջոյները և Լուրեթի ժողովի մազթել լիտակատար յաջողութիւնիր բոլոր կարեսը յանձնառութեանց մէջ։

Առաջին անգամն է որ Հայ Եպիսկոպոսը պատիւը կ'ունենայ Լամբեթի Ժազգիկ Հրաւիրուելու, ու այս ազնիւ ժեսուը կարելի չէ աւելի նշանակալից կերպով բացատրել քան այն իրողութեամբ թէ գարուս սկիզբէն ի գեր սիրալիր յարաբերութիւներ կը մշակուին Անկիքան և Հայ Եկեղեցիներու միջն։

Ոչ մէկ տեղ այս բարեկամութիւնը այնքան ակներել է որքան Երուսաղէմի մէջ, Անկիքաններու և Հայոց Պատրիարքարանին միջն, և ուր Անկիքան Եպիսկոպոսը կը հրաւիրուի մասնակցիլ Առնալուացի հանդիսաւոր արարողութեան, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Աւագ Եշ. օրը։

Բայց այս սերտ բարեկամութիւնը իր բարձրակէտին հասաւ այն օրը՝ Երր Ն. Ա. Օծութիւն Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը այս երկիրը այցելից որպէս հրեր Քենէթքարի Արքեպիսկոպոսին և երկու քը միասին ներկայ եղան Ա. Պատարագի արարողութեան և յայտարարեցին իրենց անկեղծ բարեկամութիւնը։

Աւելին՝ Իրեն հատեանք երկու Եկեղեցիներու միջն տեղի ունեցող ուրախաւորիթ և բարեկամական այս գէպքերուն, երկուստեք առաջարկուեցաւ աւելի առաջ երթաւ և Անկիքան ու Հայ Եկեղեցիներու միջն ժաղով մը գումարել ծանօթանալու համար երկու Եկեղեցիներու վարդապետական զանազան տեսակէտներուն և այդու զիրար լոււագոյն կերպով հասկնալու։ Այս

բանակցութիւնները, որոնք պիտի սկսէին անցեալ Մայիսին՝ առժամապէս յետաձըգուեցան, այն յոյսով որ կարելի պիտի ըլլայ զանոնք չուտագ սկսիլ։

Կ'ապրինք այնպիսի ժամանակի մը մէջ երր Բրիտանիա Հոգե որ Մարմենոյն միութիւնը գերազանցօրէն անհրաժէշտ է արժանապէս կատարելու համար պարտականութիւնները զարս Աստուած զրած է լիրաքանչւր Ե-կեղեցոյ ուսուերուն վրայ՝ նիւթապաշտ և հակալրօն աշխարհի մը մէջ։ Կ'ապրինք այնպիսի գարաջըզանի մը մէջ ուր աւելի զօրաւոր Եկեղեցոյ մը կարիքը կայ առապարէկ կարգալու համար խաւարի ոյժերուն՝ որոնք կը սպառնան մեր կրօնքի հիմնական սկզբունքներուն։ Միութենէ զուրկ և բաժանեալ Եկեղեցի մը չի կրնար ախոյնանը հանգիստանալ մեր հաւատքին։

Եկեղեցոյ միութիւնը ոչ մէկ ատեն այնքան հրամայական է որքան մեր օրերուն։ Դարսու սկիզբէն ի վեր Եկեղեցիներու միջն միութեան փափաքը ելած է քրիստոնէական ճշմարիտ կեանքի զլիսաւոր երկութիւններէն մին։

Հայաստանեալց Եկեղեցին միշտ իր սրտին մօտ նկատած է քրիստոնէական միութեան կարեսութիւնը և չի գազգրի երբեք ալօթելէ համայն քրիստոնէաներու միութեան համար։ Մեր ամենօրեայ ազօթքներուն մէջ կ'ազերսինք «զի միաբանուց զեկեղեցի իւր սուրբ, շինեալ ի վերայ հիման առաքելոց և մարգարելցոց։

Քրիստոսաբանական վէճերէն ի վեր Երր մարգեային փառասիրութիւններ և Եկեղեցիներէն սմանց տիրապետական ձրգութեարը իրենց տիսուր զերը կատարեցին և պատճառ եղան Քրիստոնէութեան պառակաման — Հայց, Եկեղեցին թէ նախընտրեց բացարձակ մեկուսացման կեանք մը, այսուամենայնիւ բարեմտութեամբ ողջունց Եկեղեցիներու միութեան ամէն ջանք, առանց սակայն շեղելու իր անկառութեան դիրքէն։

Սակայն հիմա որ ժամանակները փոխուած և հաղորդակցութեան արդի միջոցները ժողովուրգները աւելի մօտեցուցած են իրարու և այդ իսկ պատճառաւ անարդարանալի գարձուցած Եկեղեցական մեկուսացումը, ատենն է որ Քրիստոնէական Եկեղեցիները մեծագոյն ճիգ մը ընեն գէպի

միութիւն և տեսնեն անոր իրազործումը  
այս աշխարհի վրայ:

Աւրախ ենք տեսնելու որ գարուս  
սկիզբէն ի վեր Անկլիքանք բարձր կը բանեն  
Եկեղեցւոյ Միութեան զրոշը: Հայոց Եկեղեցին  
կրնայ զՁեզ և ուրիշ որեէ Եկեղեցի  
վստահացնել թէ ինք սիրազ պիտի ողջունէ  
ամէն նման շարժում և անկեղծօրէն զոր-  
ծակցի, ինչպէս եղած է միշտ իր գարաւոր  
տւանդութիւնը, պայմանաւ որ այդ շար-  
ժումը տեղի ունենայ փոխակարծ յարգանքի  
և քրիստոնէական սիրոյ մթնուրափի մը մէջ:

Խմ խօսքս վերջացնելէ առաջ կը փառ-  
փաքիմ այս ասիթազ չնորհակալութիւն  
յայտնել Զեկ այն ամէն օժանդակութեան  
համար զոր լնծայոծ էք մեզի մեր զըժ-  
ուարութեանց մէջ: զՁեզ կրնամ վստա-  
հացնել թէ Հայ Եկեղեցին Զեր սիրելի  
անձնաւորութեան մէջ միշտ պիտի ողջունէ  
իր մեծ և անկեղծ բարեկամը:

Վերջացնելով խօսքս, կը կրկնեմ այն  
աղօթքը՝ զոր կը մատուցանենք Հայ Եկե-  
ղեցիներու մէջ, Քրիստոսի Եկեղեցւոյն  
միութեան համար. «Զիսաղաղութիւն չնորհ-  
եա Եկեղեցւոյ քում սրբոյ զիսաղաղութիւն  
և զանշարժութիւն ի թշնամեաց պատե-  
րազմէ, և հաստատեա ի մի հաւատ զկա-  
թողիկէ Եկեղեցի. զքեզ խոսավանիմք  
Տէր և Աստուած, կեցո զմեզ:»

### ՀՕՅՅ. ԵԿՂՅ. ՄԱՍԻՆ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԼԱՄԲԵԹԻ ԺՈՂՈՎԻ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ ՄԷՋ

Լամբեթի ժողովի (1958) Տեղեկագրին  
մէջ (էջ 34-61) կան 131 որոշումներ՝ որ-  
դեգրուած ժողովին կողմէ:


Այս որոշումներէն 42րդը կը վերաբերի  
Հայաստանեայց Եկեղեցւոյն, և այս պատ-

ճառաւ վոտահ ենք որ պիտի հետաքրքրէ  
մեր լնթերցողները: Այսուհեղ կ'արտատպէնք  
զայն նոյնութեամբ:

«Ժողովը սիրով կ'ողջունէ բանակցու-  
թեանց կարելիութիւնը Հայ Եկեղեցւոյն ներ-  
կայացուցիչներու հետ, Անկլիքան և Հայ  
Եկեղեցիներու միջն տւելի սերտ բարեկա-  
մութիւն յասաջացնելու նպատակաւ: Ան  
ցաւով կը զիտէ այժմու այն գժուարու-  
թիւնները՝ որոնցմէ կ'անցնին այս հին Ե-  
կեղեցւոյն անդամները, և կ'աղօթէ որ ա-  
նոնք չուտով յաղթահարութիւն: Ժողովը կը  
խնդրէ Յենթրաբի Արքեպիսկոպոսէն քոյ-  
ւեր առնել կարգադրելու համար այս բա-  
նակցութիւնները Հայ Եկեղեցւոյն ներկայա-  
ցուցիչներուն հետ՝ երբ ժամանակը նպաս-  
տաւոր թուիւ:»

Մեր Եկեղեցւոյ մասին ուրիշ ակնար-  
կութիւն մը կայ Յանձնախումբերու Տեղե-  
կագրին մէջ (էջ 2/50) «Աւրիշ Արքելեան  
Եկեղեցիներ» զլուխին տակ:

«Ե սիրոս աշխարհի իր համայնքնե-  
րուն տուած այցելութեան՝ Հայոց Բնդհան-  
րական Կաթոլիկոսը Անկլիքա Եկաւ կ'զմիած-  
նէն 1956ին և լնդունուեցաւ Քենթրապրիի  
Արքեպիսկոպոսէն: Մրագրուեցաւ նախա-  
պատրաստական բանակցութեանց ձեռնար-  
կել Անկլիքան և Հայ Եկեղեցիներու ներ-  
կայացուցիչներու միջն 1958ի Զատկին,  
Երուսաղէմի մէջ: Կարգ մը վայրերու մէջ  
Հայ Եկեղեցւոյ զժրախտօրէն ունեցած  
գժուարութիւնները պատճառ եղան այս  
խօսակցութեանց յատաձգման: Այսուամե-  
նային, աշխարհի այլ մասերէն տուեալներ  
կան Անկլիքան և Հայ Քրիստոնեաներու  
միջն շարունակուող բարեկամական յարա-  
բերութեանց:»



## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՈՒՅՑՆի 1958 Ապրիլ-Մայիս թիւին մէջ տրուած Հաղորդագրութեան համաձայն, որ ճիշնուած էր Ներքին Գործոց Վասն. Նախարարի յանուն Կառավարութեան անձամբ տրուած հաղորդումն վրայ, կը սպասուէր «Ա. Աթոռոյ տագնապին վերջնական լուծման և Պատրիարքարանին օրինական գործերուն կանոնաւորման համար»: Սակայն անկէ ասդին պատահած զէպեր չժառայեցին տագնապին օրինական լուծման:

Օգոստոս 30, Տարաթ օր յետ միջօրէի ժամը 2.45ին, երբ Տիրան եւ Առուրէն Սրբազններ Պատրիարքարանի պաշտօնական ինքնաշարժով Գեթսեմանի ծոր կ'իջնէին, հանդիսապետելու Ա. Աստուածածինայ Վերափոխման տօնին առթիւ Տիրամօր Գերեզմանի Տաճարին մէջ կատարուելիք ժամերգութեանց, նախատօնակին և անոնց յաջորդելիք զիշերային հսկման արարողութեանց, յանկարծ, քաղաքի պարիսպի մեծ դրան մօտ զանուող ոստիկանատան առջեւ, ոստիկանական պաշտօնեաններ կը կեցնեն Պատրիարքարանի կառքը: Կը համնի ոստիկանապետը և կը հաղորդէ որ հրահանգ ունի նորին Գերաշնորհութիւն 8. Տիրան Սրբեափսկոպոս Կառավարչատուն հրաւիրելու: Տիրան Սրբազն կը համակերպի: Առուրէն Սրբազն կ'ընկերանայ Տիրան Սրբազնին: Զինուորական երկու ինքնաշարժերու մէջ Պատրիարքարանի կառքը կ'առաջնորդուի Աստիկանապետի պաշտօնատունը: Պատազանակիր Հայրսուրբը, որ ազատ ծգուած էր, բօթը կը բերէ Գեթսեմանի Միաբանութեան, որ կը սպասէր Սրբազններու ժամանումին: Միաբան Հայրերէն ոմանք անմիջապէս կը փութան կառավարչատուն. և ոստիկանապետարանի առջևւէն անցնելու պահուն կը նշմարեն որ Տիրան Սրբազն արդէն իսկ փոխադրուած էր զինուորական կառքի մը մէջ տարուելու համար օդակայան: Միաբան Հայրեր իրենց բուռն բողոքը արտայայտելէ վերջ կը հետեւին զինուորական կառքին դէպի օդակայան: Մինչ այդ Առուրէն Սրբազն կը դիմէ քաղաքիս Վասն. Կառավարիչն իր բնակարանին մէջ և կը խնդրէ որ Տիրան Սրբազնին մեկնումը գէթ 24 ժամ յետածգուի, որպէսզի իր անցագիրը և այլ անհրաժեշտ պիտոյները առնենելու ժամանակ ունենայ. սակայն կը մերժուի: Միայն կ'արտօնուի որ անձամբ վանք վերադառնայ և բերէ անհրաժեշտ նկատուածները Տիրան Սրբազնին՝ օդակայան: Երբ Առուրէն Սրբազն քանի մը հետեւորդներով վանք կը վերադառնայ, կը տեսնէ զայն պաշարեալ հարիւրաւոր զինուորներով, որոնք կ'արգիլեն իր մօտեցումը վանքին մուտքին. չեն ուզբը մինչեւ իսկ լսել տրուած բացատրութիւնը թէ Զինուորական Կառավարչի հրահանգով եկած են մեխան Սրբեափսկոպոսի անցագիրը տանելու . . . : Առուրէն Սրբազն կը հարկադրուի վերադառնալ օդակայան . . . : Դժուար է այստեղ ներկայացնել այն ողբերգութիւնը որ տեղի կ'ունենայ վանքէն ներս, երբ ամբողջ Միաբանութիւնը բացակայ էր իր տունէն . . . :

Օդակայան, Ամերիկեան փոխ-Հիւպատոսին միջամտութիւնը և միջնորդութիւնն ալ, 24 ժամ յետածգելու Տիրան Սրբազնի մեկնումը, կը մերժուի: Տիրան Սրբազն օդական կը դրուի և կ'ուղարկուի Պէյրութ . . . :

Գանական վարչութիւնը յետ խորհրդակցութեան անհրաժեշտ նկատեց, պաշտպանելու համար դարիերով յարգուած իր իրաւունքները, անմիջապէս պատկան իշխանութեանց ուղղել շատ մը պատշաճ զիմումնագրեր՝ որոնցմէ կը լիշնենք հետեւեալները միայն:

31/8/58 — Հեռագրուեցաւ Ն. Վեհափառութիւն Հիւսէյն Թագաւորին, Առուրէն Սրբազնի կողմէ՝ յանուն Միաբանութեան, յայտնելով Միաբանութեան «Խորագոյն վիշտը», և պարզելով որ Տիրան Սրբեափսի աքսորը «ուժգին հարուած մըն էր Միաբանութեանս ու մեր համայնքին, մանաւանդ անոր համար որ Արքեափս.ը կը ծերբակալու էր կրօնական պարտականութեան կատարումի իր համբուն վրայ, մեր եկեղեցւոյ մեծագոյն

տօներէն մէկու ընթացքին։ Սրբազանին արտօրումը արիւնող վէրք մը կը բանայ մեր կրօնական զգացումներու մէջ։ Կը հաստատուէր որ կատարուածը հակառակ էր Ս. Քաղաքին մէջ տիրող՝ եւ նախընթաց բոլոր Կառավարութիւններէ հանչցուած եւ յարդուած։ Որպուէլույի տրամադրութեանց։ Եւ խնդրանք կ'ըլլար նորին Վեհափառութեան զթարտութեան որ հրահանգէր Տիրան Սրբազանի վերադարձը։

31/8/58 — Ն. Վասեմ. Յորդանանու Վարչապետին, յայտնելով Միաբանութեան ցաւը, եւ բողոքելով Տիրան Սրբազանի արտօրէն վերջ, եւ Միաբանութեան բազակայութեան ընթացքին զինուորներու կողմէ վանքէն ներս կատարուած յոյժ ցաւալի վէպքուն դէմ։ Այս նամակին, ինչպէս նաև Վեհափառ Թագաւորին զրկուած հնուազրին պատճէնները ուղարկուեցան նաև Պետութեան մնացեալ բոլոր Նախարարներուն։

1/9/58 — Հեռագիրներ զրկուեցան արտասահմանի Հայց. Եկեղեցւոյ Թեմերուն, հաղորդելով Տիրան Սրբազանի արտօրման իրողութիւնը։

4/9/58 — Երուսաղէմի Հայոց Մոլխթար Տիրար Յովհաննէս Նազարէթեանի անունով եւ ի գիմաց առնուազն 300 հայ ընտանիքներու, հեռագիր զնաց Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Թագաւորին՝ ուր կը խնդրուէր Տիրան Սրբազանի վերադարձը։

4/9/58 — Քաղաքիս Վասեմ. Կառավարիչին ուղղեալ նամակով մը բողոք ներկայացուեցաւ որ ականջ կը կախուի կարգ մը փասբուս անձերու կողմէ Կառավարութեան տրուած սիալ եւ չարամիտ տեղեկութեանց, որոնց հետեւանքով յումաէտս խուզարկութիւններ կը կատարուին վանքարհակ կարգ մը ընտանիքներու մէջ, այդ զրաբարութեանց սուստ ըլլալը բազմիցս հաստատուելէ վերջն ալ, նախազէս կատարուած խուզարկութիւններով։

5/9/58 — Քաղաքիս Վասեմ. Կառավարիչին ուշադրութեան յանձնուեցաւ որ, Յորդանանեան կրօնական կազմակերպութեան մը անդամ եղող բարձրաստիճան կրօնաւորի մը, իր կրօնական պարտականութեան համբուն վրայ հապճեազով եւ առանց քննութեան երկրէն հեռացուիլը Ա. Քաղաքիս մէջ տիրող Որպուէլույի հակառակ էր եւ խնդրանք կ'ըլլար որ Տիրան Սրբազան վերադարձուէր իր հոգեւոր տունը։

7/9/58 — Բողոքագիր նամակ, որով Երուսաղէմի Վասեմ. Զինուորական Կառավարիչին ուշադրութեան կը յանձնուէր զինուորներու վանքէն ներս ի զործ զրած օրէնքի հակառակ արարքները։

20/9/58 — Բացատրական ընդարձակ նամակ մը զրուեցաւ Վասեմ. Վարչապետին պարզելով Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի վայելաւ, եւ ցարդ յարգուած, իրաւասութիւնները։ Այս նամակին պատճէնները զրկուեցան բոլոր Նախարարներուն։

21/9/58 — Խնդրագիր ներկայացուեցաւ Նորին Վեհ. Հիւսէյն Թագաւորին, Երուսաղէմ վանուող 26 կարգաւոր Միաբանից 22ի ստորագրութեամբ, խնդրելով Ն. Վեհ. Թագաւորին որ արտօնէ Տիրան Սրբազանին վերադարձը իր հոգեւոր տունը։

Միաբանութիւնը իր վիշտին մէջ չկորսնցուց իր արիւութիւնը եւ արդարութեան վերջնական յաղթանակի մասին իր ունեցած հաւատքը եւ համոզումը։ Միակամ եւ միասիրտ յառաջ տարուեցան թէ՛ Տիրան Սրբազանի վերադարձին համար անհրաժեշտ աշխատանքները, թէ՛ վանական ներքին գործերը, ինչպէս նաև իրաւական արտաքին աշխատանքները։ Ճիշդ այս օրերուն զրւադիպեցաւ թէ՛ Ս. Յարութեան եւ թէ՛ Ս. Աստուածածնայ տաճարներու նորոգութեան համար առնուած գործնական քայլերը։ Մեր բանակցութիւնները եւ խորհրդակցութիւնները շարունակուեցան իրաւակից համայնքներու ներկայացուցիչներուն հետ։ Միաբանութիւնը եւ հաւատացեալ ժողովուրդը կ'աղօթէ եւ կ'աշխատի արդարութեան վերջնական յաղթանակը ապահովելու համար։ Գերշ. Տ. Սուրէն եպս. կը շարունակէ մնալ Ս. Աթոռոյ Գործոց Էնդհանուր Վարիչի իր զերքին եւ պաշտօնին վրայ, հաստատուած Միաբանութեանէն եւ հանչցուած տեղւոյս Կառավարութեան կողմէ։

ԱՅՅԵՐԻԹԻՒԽՆ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒԽՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ: — Ամմանի մեր Հոգեւոր Հովուի ջանքերով կարելի եղաւ ապահովել ժամադրութիւն մը արքայական պալատէն, եւ Հոկտ. 22ին, Գեր. Տ. Սուրէն Եպս., հիտն ունենալով Աւագ Թարգման Հոգ. Տ. Վազգէն Վրդ.ը եւ Ամմանի Հովիւ Հոգ. Տ. Արիս Սրեղան, այցելեց Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Թագաւորին: Սուրէն Սրբազնն նախ յայտնեց իր Միարանութեան եւ Հայ համայնքի հաւատարմական զգացումները, եւ շնորհաւորեց Նորին Վեհափառութիւնը, երկրին ապահովութեան համար իր ի գործ դրած կորովի եւ կորուկ միջոցառութերուն համար, ընդդէմ երկրի կործանարար թշնամիներուն: Ապա ներկայացուց հակիրճ կերպով վանքին տագնապը: Եւ խնդրեց անոր դարմանը: Վեհափառը խոստացաւ ներկայացուած խնդրանքը նկատի ունենալ: Շուրջ կէս ժամ տեսեց այս շատ սիրալիր եւ յարգալիր խօսակցութիւնը:

ԴԻԲԱՆ Ա. ԱԹՈՒՐԻՑ

## ԶԳՕՆ Ծ. ՎՐԴ. ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑԱԾ

Ա. Աւասիս Միաբան եւ Երաքի Հայոց Առաջնորդ Հոգ. Տ. Զգօն Ծ. Վրդ. Տ. Յակոբ Եպիսկոպոսական բարձր աստիճանին արժանացաւ Հոկտ. 19ին, ի Ս. Էջմիածին:

Համաձայն Մրցոց Յակոբեանց Միաբանական Աւասիսի Կանոնին, Միաբաներու Եպիսկոպոսացման թեկնածութիւնը կ'որուէ Ս. Աւասիս Միաբանական Ընդհանուր ժողովը, Տեօքէն ժողովեն բերուած առաջարկին վրայ: Տեօքէն ժողովը իր ձևի նիստին մէջ նկատի տառ Հոգ. Տ. Զգօն Ծ. Վրդ.ի Եպիսկոպոսացման հարցը, եւ միաձայնութեամբ դրական առաջարկ տարած Միաբանական Ընդհ. ժողովին: Մեպտեմբեր ամսոյ 24ին Միաբանական Ընդհ. ժողով գումարուեցաւ, ուր ժողովի ներկայ 17 Հայրենէն 14ի բուեներով Հոգ. Տ. Զգօն Ծ. Վրդ. արժանի նկատուեցաւ Եպիսկոպոսական աստիճանին:

Հոկտ. 18ին նետեւեալ նեռազիրը ստացուեցաւ Տ. Զգօն Ծ. Վրդ.ին. — «Կը խնդրեմ նվիրյուրեան ազօրքները: Զեռնադրութիւնս (տեղի կ'ունենայ) Կիրակի (Հոկտ.) 19ին, առանձին»:

Հոկտեմբեր 19ին, Տ. Սահակ Արքապիսկոպոսն ստացանք նետեւեալ նեռազիր.

«Վեհափառը այսօր Ձեր խնդրաներ նպիսկոպոս ձեռնադրեց Զգօն Ծ. Վարդապետին: Ուրիշ ձեռնադրութիւն չկայ»: Ձեռագիրները ուղղուած եին Գեր. Տ. Սուրէն Եպս.ին, ու Զգօն Եպս.ին նետեւեալ նեռազիրը զարկաւ Հոկտ. 20ին. «Ձեր նպիսկոպոս ձեռնադրութեան առիրով կը յայտնենք Արտագին Շնորհաւորութիւններ: Կը մալրենք Երկար կեանք Նորին Ս. Օծուրեան»:

Տ. Զգօն Եպս. ծնած է Քեջանի (Վան) 1904ին, համայնքական ընտանիքէ: Վասպուրականի գաղրին (1915), կ'ապաստանի Ռուսահայաստան, ապա՝ Պագուած եւ Նամրէ-Օմար: 1922ին կ'ընդունուի Երուսաղէմի Փառ. Վարժարանը, զոր կ'աւարտէ 1926ին եւ Սարկաւագ կը ձեռնադրուի: 1930ին կը ձեռնադրուի Կուսակրօն Խամանայ եւ կը մտնէ վանական ծառայութեան մէջ զանազան պատօններով: 1937ին մեկնած է Ֆրանսա պատօնով, իսկ 1940ին անցու է Միացեալ Խամանգներ: 1952ին կ'ընտրուի Հովիւ Հայոց Միլանի. իսկ 1956ին կը ստանձնէ Երաքի Հայոց Առաջնորդական պատօնոր: Աֆլի յանուն Մրցոց Յակոբեանց Միաբանութեան կը օնորհաւորէ եկեղեցւոյ նոր նոգեւոր իշխանաւորը եւ կը մաղք իրեն արդիւնաւոր զործունեկութիւն:

## ՃԱՇԿԵՐՈՅԹ

Ի ՊԱՏԻՒ ՄԱՅ ԻՆՉԱՍ ԱՐԲ Ի

Լուսնի Ա. Սարգիս Եղիկելյայ Խնամակարարեան, Համայնքական Խորհուրդի և Քառելործականի Վաշչորեանց կողմէ Օ գուստի 13ին, 1958, Քենցինկրըն Փալու Հօրելին մէջ հաշեեւոյք մը տրուած է ի պատի Երաւաղիմի Անդիքան Արենափակովու Մայ Խննիկի և իր Տիկնոց:

Ճաշկերոյքին ներկայ եղան են Անդիքան Եղիկելյացիներն ու Լուսնի մեր ազգայիններն ուստե:

Ճաշկերոյքին առաջին խօսով եղան է Անդիլիոյ Հայոց Կորուպիկոսական Պատուիրակի Տ. Պատի նույ. Պատմայիան, որ շատագովականը բառ է Անդիքան և Հայ եղիկելյացիներու սիրայիր յառաքերութեանց եւ իր խօսքը մերց ուսուուրեան անդրադանձ Տ. Տիրան Արենագ. ի անձին և զարծնեաւրեան մասին, բաւելով Երազան Հօր առաջինութիւններն ու կարուի և օֆնուաց զուգուեաւրիւնը, ուստի ներկաները իշեց համամտութիւնն ու համակրութիւնը յարցած են իշեց ծափանարութիւններով:

Տ. Պատի նույ. են իսու առած է օրուան գրաւույ հիւրը՝ Մայ Խննիկա Արենափակովա: Եւ Շնորհականիան խօսերէն են, ան երկրուեն անդրադանձ է և ծանրացած լիքինեաւակա Հայոց Եղիկելյաց Անդիքան Եղիկելյացիներու միջին տեղի ունեցող բարեօ փոխ-յառաքերութեանց մասին՝ ի մասնաւուի Երաւաղիմի մէջ: Մայ Խննիկա Արենագ. իր խօսքի առարտին յայտնած է իր անկեղծ և սրաբուխ համակրութիւնը Տ. Տիրան Արենափակովուի անձին և զարծնեաւրեան հանդեպ:

Փառաւուր հիւրասիրութենն մը են, Եղիկելյանը այդ շեմ մքնուրտեն մեկնած էն նորդեկան մեջ գիտուական հանդեպ:



## Ս. ՅԱԿԱԲԻ ՆԵՐՈՒԴԻ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Երևանի, 26 Ծիռ. 1958

Նորին Վեհ. Հունիկ Թագավոր

Անձնական

Յանուն իմ, Ա. Յակոբեանց Միարանուրեան և Յազգանուու հայ համայնքին, կուրած Ձեր Վեհափառութեան ներկայացնել շեմագին Շնորհաւուրութիւններ՝ Մարզակի ծննդանի տօնի աւիրով, պիտուազիոն մեր հաւատարմաւրիւնը Հաշմական Դուքի:

ՍՈՒՐԵՆ ԵՊՈ. ՔԷՄՀԱՃԵԿԻՆ  
Լիգի. Վարիչ Գործոց Ա. Արարու

## ԵԿԵՂԵՑՈՒԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Նր. 30 Օգոստոս, Նովակար Ա. Էջմիածնի տոնին առթիւ, Նախատօնակը և սրուան Ա. Պատագը տեղի ունեցան Մայր Տաճարին կը ս. Եջմիածնի Եղիկեցին մէջ:

— Վերաբարիման Նախատօնակի առթիւ, կ. յ. տեղի ունեցաւ «Հրաշափառուսի մուտքը Եղիմիածնի Ա. Պատուած ամուայ Տաճար», ուր պաշտը շցան ժամերգութիւնն և Նախատօնակի կեր. Տ. Շնորհը նույ. ի Նախատօնակի թեամբ:

— Երիկուագէմին, Հայում մասի արարութիւնը, որ ուրիշ տարիներ կը կատարուէր նոյն Եղիկեցւոյ մէջ, սրուան մէջ պատահած ցնցին գեղորին Հետեանքով (առև Պաշտօնական Հաղորդագրութիւնը) առկի ունեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:

● 31 Օգոստոս, Կիրակի, Վերափխանման տօնին առթիւ, արողջ Միարանութիւնը ինքնաշարժերով մեկնացաւ Եղիմիածնի Ա. Պատուած ամուայ Եղիկեցին, ուր «Հրաշափառուսի Հանդիսաւոր մուտքէն ետք, Տիրամօր Ա. Գերեզմանին յրայ Հանդիսաւորապէս Ա. Պատուած մասոյց կեր. Տ. Շնորհը նույ. Գալուստեան, և քարոզեց «Եւ ընդ քո իսկ անձն անցցէ ուուր . . .» (Ղուկ., թ., 35) բնարանով:

— Գեր. Արբազանը Նախագահն առա կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդաստանակին և Նախատօնակին»:

— Այս իրիկունէն սկսեալ, Աստուածածնայ Զօրեայ տօներու ամբողջ ընթացքին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եղիկեցին յատուկ ժամերգութիւնն Առյն «Հակումները» շարուածակուցան 9 օրերէն վերջ շաբաթը մէկ անգամ, ամէն Հինգշաբթի:

• Կիր. 7 Սեպտ.ին, ըստ առվարութեան, Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի մեր վերնատան երաշխաւոր Ա. Աստուածածին մատրան մէջ:

• Գչ. 9 Սեպտ., Ա. Յովակիլիմոյ և Աննայի տօնին առթիւ, Ա. Աստուածածին Տաճարի Հայր Յայսէփի գերեզմանին վրայ մատուցուեցաւ Ա. Պատարագը Բատ առվարութեան, օրուան պատարագին էր Տաճարին Տեսուչը՝ Հոգ. Տ. Հայկասեր Արք. Պայրամեան, որ խօսեցաւ նաև աւուր պատշաճի քարող մը:

• 14 Սեպտ., Կիրակի, Ա. Աստուածածին Գիլ Գօտոյ տօնին առթիւ, Միաբան Հայրեր, Գիր. Տ. Ծնորհք Եպոս.ի գլխաւորութեամբ, իջան Գեթեսիմանի ձորը, ուր Ա. Աստուածածին Տաճարին մէջ, Տիրամօր Ա. Գերեզմանին վրայ մատուցուեցաւ Ա. Պատարագը՝ Քարողեց Հոգ. Տ. Թարգում Վրգ. Աստուածան, բնաբան ունենալով շեր գոտիները ամրացուցէք: Ա. Պատարագէն հայք կատարուեցաւ նոր նկարներու օծումը, ձեւամբ Գիր. Տ. Ծնորհք Եպոս.ի:

• Կիր. 21 Սեպտ. — Խնամեն Ա. Աստուածածին: Այս առաւօտ, Գիր. Տ. Նորայր Եպոս. Պայտարեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Գեթեսիմանի ձորը, ու «Հրաշափառուով» մուտք գործեց Ա. Աստուածածին տաճար, ուր Գիրշ Մրբազանը մատոյց օրուան հանդիսաւոր Ա. Պատարագը Տիրամօր Ա. Գերեզմանին վրայ և քարողեց, չիշտելով խօսարհութեան զերը մեր անհատական թէ ընկերային կենարին մէջ: Այս ցոյց տուաւ Ա. Կոյսը իրեն տիպ որ խօսարհութեան, որուն շնորհիւ ան արժանացաւ Քրիստոսի մայրը Ըլլալու և երկինք վերափոխուելու գերազանց փառքերուն:

• 27 Սեպտ. Շարաթ կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Խաչվերացի մեծահանգստու նախագահութեամբ Գիր. Տ. Առուէն Եպոս. Քէմհաճեանի, որ ապա Ա. Խաչափայտի մատունքը Ա. Գիլազրի մատուաէն հանդիսաւորագէս փոխազրից Աւագ Սեղան:

— Երիկնաղէմին, Գիր. Արքազանը նախագահը նաև Մայր Տաճարին մէջ պաշտուած Հակման արարողութեան:

• Յաջորդօր, Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ա. Պատարագը մատոյց և քարողեց Գիր. Տ. Ծնորհք Եպիսկոպ.՝ Զօրութիւն Ա. Խաչի քարիստու...» ընաբանով, բացատրելով թէ աշխարհիկ բանակներու, ինչպէս նաև Քրիստոսի բանակին մէջ հերե քասակարգի զինուորներ կան միշտ, զատալիքներ, զաւաճանեներ և հաւատարիմներ, Ըլլալու համար սակայն այս վերջիններէն, հարկ է ունենաւ հաւատք, քաջութիւն և համբերութիւն: Քարողէն Ետք, Գիր. Տ. Առուէն Եպոս.ի նախագահութեամբ, կատարուեցաւ տարեկան հոգեհանգստեան հանդիսաւոր Կարգը՝ Ա. Աթոռույս և ազգիս բարեբարներ կարապետ և Գրիգոր Մելքոնեան եղբարց հոգիներուն համար:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Խաչվերացի մեծահանգստու Անդղաստանը, նախագահութեամբ Գիր. Տ. Առուէն Եպոս. Քէմ-

հաճեանի, և իներկայութեան ժողովուրդի հոգ բազմութեան:

• Եր. 4 Հոկտ.ին, ըստ առվարութեան, Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յակոբի Տաճարի Ա. Խշան վերնամատրան մէջ:

• Կիր. 5 Հոկտ. — Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ Պատարագից և իր վրգ ական անգրանիկ քարուս խօսեցաւ Հոգ. Տ. Կերպէն Տիր. Բապու հան, ուրիշ ունենալով նկեղեցին, ու ծանրանալով հիմնալու շուրջ:

• 10 Հոկտ. Արքաթի կէսօրէ վերջ, Ա. Գեղագից տօնին նախատօնակը կատարուեցաւ, ըստ առվարութեան, Ա. Քաղաքի Ղպտոց Ա. Գեղագ եկեղեցու մէջ, Գիր. Տ. Ծնորհք Եպիսկոպ.ի գլխաւորութեամբ, մեկնեցաւ Ղպտոց Ա. Գեղագայ վանքը, ուր Ա. Պատարագը մատոյց և քարողեց Հոգ. Տ. Կորին Վրգ. Մանուկիւն սկսած, բնաբան ունենալով օրուան ձաշու Աւետարանէն ցի ամենայն որ խոստովանեցիցի յիս առաջի մարդկան, և Որդի Մարզոց խոստովանեցիցի զնմանէ առաջի հրեշտակաց Աստուածոյ: Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուածոյ (Ղկո., Ժմ., 8-9), յայտնիլով թէ քրիստոնէութիւնը որքան հեղութեան, խօսարհութեան և խաղաղութեան, նոյն քան և աւելի համարձակութեան ու չարին զէմ ծառանալու, անոր մեքենայութիւններուն զէմ պայքարելու արիստեան կրօնքն է: Այս ցոյց տուաւ Ա. Գեղագը իրեն տիպար մը այս վերջիններէն: Ա. Պատարագէն Տիր. Միաբանութիւնը պատուաիրուեցաւ Ղպտոց Հոգ. Տեղչէն:

— Նոյն օրը կէսօրէ վերջ, վաղուան Վարագի Ա. Խաչի տօնին առթիւ, Գիր. Տ. Առուէն Եպոս. Քէմհաճեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառուով» մուտք գործեց Ա. Յարութիւն Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ մեր Ա. Գողզութիւնը վերնամատրան մէջ: Ազա կատարուեցաւ Տնօրինական Արքատեղեցաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս Թափօրապիտն էր Գիր. Տ. Ծնորհք Եպոս. Գալուստեան:

• Յաջորդօր, 12 Հոկտ. Կիրակի, զիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ա. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ: Ազա, Գիր. Տ. Առուէն Եպոս. Քէմհաճեան մատոյց օրուան հանգիստուոր Ա. Պատարագը՝ Քրիստոսի Ա. Գեղեցմանին վրայ և քարողեց, պատմականը ընելով Հայր. նկեղեցու տոնախարած խաչի չափ տոներուն, ու ծանրանալով Ալարագայ Խաչի խորհուրդին շուրջ: Եթե քարողի, կատարուեցաւ Հայրապետական մազմանքը, ն. Ա. Օթութիւն Տ. Տ. Վաղգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օման Յրգ և ծննդեան 50րդ տարեկարձերուն առթիւ, որուն ընթացքին զուաւ թօրէն կը հնչէին Ա. Յարութեան Տաճարին հայկական զանգերը:

● 18 Հոկտ., Ա. Գէորգայ տօնին յաշորդ Եր, ըստ սովորութեան, Ա. Պատարազը մատոցւեցաւ Մայր Տաճարի ներքին գաւիթը՝ Ա. Գէորգայ սեղանին վրայ.

● 19 Հոկտ.ի կիրակին, ի Ա. Յակոբ մատուցուած Ա. Պատարազի ընթացքին, Հոգ. Տ. Վազգէն Վրդ. Գրպրըւեան խօսեցաւ իր գարցապետական անդրանիկ քարոզը, բնարան ունենալով օրուան ձաշու ընթերցուածէն «Փարձեցէք զանձինն եեր, եթէ կայցէք ի հոյն հաւատու» (Բ. Կարնթ., ժի., 5):

● Ուր. 24 Հոկտ. — Յօրդանանի բարեխնամ կառավարութեան հրահնագին համաձայն, առաջատան ժամը 10ին, Ա. Յակոբը անց Մայր Տաճարին մէջ, իներկայութեան Ա. Թ. Վարդարանի երկու աշակերտութեան և ժողովուրդի բազմութեան, կատարուեցաւ Գոհարանական Մազմանք՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) հիմնարկութեան 13րդ աշխաղարձի առթիւ: Արարողութեանց կը նախագահէք Գեր. Տ. Ուուրէն նպա.՝ Գեր. Տ. Ենորհք նպա, խօսեցաւ սոյն կազմակերպութեան ունեցած մարզկոգուած զործունէութեան չուրջ, զրուատելով աշխարհի խաղաղութեան համար անոր տարած ջանքերը:

— Իոյն օրը հետորէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Թարգմանչաց հանդիսաւոր նախատօնակը՝ նախագահութեամբ Գեր. Տ. Ուուրէն նպա. Քէմիհանեանի:

● Եր. 25 Հոկտ. — Ա. Թարգմանչաց վարդապետցն մերոց՝ Օրուան հանդիսաւոր Ա. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Առաք Անդանին վրայ: Պատարազին էր, ըստ ընկալեան սովորութեան, կիւլպէնկեան Մատենադարանի Տեսուչը՝ Հոգ. Տ. Դաւիթ Արդ. Առաջինկեան, Վարդեց Գեր. Տ. Ենորհք նպա., ծանրան ալոյի Թարգմանիչ վարդապետներու կատարած զործերու շարժափնիներուն վրայ, և յետ քարոզի նախագահնեց Ա. Աթոռոյս և ազգին մեծ անունն քարերար Քայլուստ Կիւլպէնկեանի, ինչպէս նաև իր տիկնոջ և ձնողաց հոգիներուն համար կատարուած տարեկան հոգեհանգստեան հանդիսաւոր կարգին:

● Կիր. 26 Հոկտ. — Ա. Պատարազը մատուցուեցաւ ի Ա. Հրեշտակապետ: Պատարազեց Հոգ. Տ. Կիրեղի Վրդ. և քարոզեց Գեր. Տ. Ենորհք նպա., մէկնարանիով օրուան ձաշու Անեստարանին ընթերցուածը (Մարկ., ժի., 35-44):

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ Ք

● Քչ. 2 և Եջ. 4 Սեպտ. — Գեր. Տ. Ուուրէն նպա., հետո ունենալով Հոգ. Տ. Վազգէն Վրդ. ը, մեկնեցաւ Ամման՝ պատկան իշխանութեանց մօս, վանական խնդիրներու կարգադրման զործուն:

● Քչ. 2 Սեպտ. — Պատրիարքարանս այցելեց քարղաքին Անկիլիքան Արքեպոս. Գեր. Տ. Առքինէս, զոր ընդունեց Գեր. Տ. Ենորհք նպա., Արքեպոսկոպոսը նոր վերադարձած էր Լուսունէն, ուր մասնակցած էր Լամբեթի ժողովին:

— Նոյն օր ստորագրուեցաւ Ա. Յարութեան Տաճարի հարաւային թեկի նորոգութեան համաձայնիրը, պատրիարքուած՝ երեք իրաւակից Պատրիարքութեանց ներկայացուցիչներու կողմէն Յանուան Ա. Աթոռոյ ստորագրեց Լուսարարապետ Գեր. Տ. Ենորհք նպա.:

● Բչ. 8 Սեպտ. — Երուսաղէմի Քաղաքապետ Վամիմ. Խունի էլ-Խաթիպ այցելեց Պատրիարքարան, և չուրջ կէս ժամ սիրալիր զրոյց ունեցաւ Գեր. Տ. Ուուրէն և Տ. Ենորհք Սրբազններու հետ:

● Քչ. 9 Սեպտ. — Գեր. Տ. Ուուրէն և Տ. Ենորհք հպա. ներ. իրենց հետ ունենալով Հոգ. Տ. Վազգէն և թեթղենէմի Տեսուչ Տ. Մամրէկ վարդապետները, այցելեցին կառավարչատուն և նորհարսորդցին Ա. Քաղաքիս Նոր Միթասուրքից՝ Համտի Պէյ Խալաֆ, որ թեթղենէմի Քայլագուաթենէ սոյն պաշտօնին բարձրացած էր:

● Եջ. 11 Սեպտ. — Լատինաց Պատրիարքարանի Դիւռանապետը բարեկամական այցելութիւն մը տուած Պատրիարքարանու և ընդունուեցաւ Գեր. Տ. Ուուրէն նպա. ի կողմէ:

● Եր. 13 Սեպտ. — Կ. ա. Ժամը 10.30ին, Երուսաղէմի Վամիմ. Կառավարչը տուած ժամացրութեան համաձայն, Ա. Աթոռոյ Գործոց Բնակ. Վարիչ Գեր. Տ. Ուուրէն նպա. Քէմիհանեան, ընկերակցութեամբ Դիւռանապետ Հոգ. Տ. Թորգուն Վրդ. Մանուկեանի և Աւագ Թարգման Հոգ. Տ. Վազգէն Վրդ. Գրպրըւեանի, ներկայացաւ Վամիմ. Կառավարչին և անոր հետ ունեցաւ երկու ժամ տեղ տեսակցութիւն մը վանքի վերջին խնդիրներու չուրջ:

● Բչ. 15 Սեպտ. — Երուսաղէմի Վամիմ. Կառավարիչ Հասան էլ-Քէթիպ, իր թիւ Մ1/0/24/52 և 15 Սեպտ. 1958 թուակիր Խամակզի, Կ. Վամիմ. Խերքին Գործոց Նախարարի Հրահնագին համաձայն, տեղեկացուցի կառավարութեան որոշումը եղիշէ նպա. Տէրաւերանի Երուսաղէմ մուտքի անկարելութեան մասին:

● Եջ. 18 Սեպտ. — Նախապէս առնուած ժամագրութեան համաձայն, Գեր. Տ. Ուուրէն նպա., ընկերակցութեամբ Հոգ. Տ. Ս. Թորգուն և Վազգէն Վրդ. վարդապետներու, տեսակցութիւն մը ունեցաւ ն. Վ. Երուսաղէմի Կառավարչին հետ՝ վանքի վերաբերեալ հարցերու չուրջ:

● Բչ. 24 Սեպտ. — Հանրօնուտ Շինութեանց նախարար ն. Վ. Ալլիմ էլ-Պասիթիթի անակնկալ անհանգստութեան առթիւ, յանուան Ա. Աթոռոյ Միաբանութեան, Գեր. Տ. Ուուրէն նպա., հեռագիր մը յեց նորին Վամիմ թեկի համար, շուտագոյթ ապաքինում մաղթելով:

● Եր. 26 Սեպտ. — Առաջատան Ժամը 9.30ին, Խալաֆաց Մարգարէի ծննդիան տօնին առթիւ, Գեր. Տ. Ուուրէն նպա., ընկերակցու-

թեամբ Հոգ. Տ. Տ. Անուշաւան և Վազգէն վարդապետներու և Անմանի Տեղական Խորհուրդի անդամներ՝ Տիարք Յակով Պերպէրեանի, Պատրոս Տումանեանի և Բիւզանդ Զօրպանեանի, Ներկայացաւ Արքունի Պատրաստ և սուրապրեց այցելուներու մասնաւոր տոմարին մէջ:

● Կիր. 28 Սեպտ. — Ա. Երկիրը չըշագայող Անկարի քանի և կեղծեցոյ պատգամաւորութիւն մը այցելեց Պատրիարքարան և ընդունուեցաւ Գեր. Տ. Շնորհք Եպոսի Կողմէ:

● Բ. 29 Սեպտ. — Երեկոյեան, Ա. Ա. խափա Միարաններէն Գեր. Տ. Հմայիակ Ծ. Վրդ. Խնդոյեան, որ մէկ ու կես տարիէ ի վեր կը զանուէր Միացեալ հահանգներ իրբե հուրակ Ա. Ամոռոյ ժամանեց Ա. Աթոռ և մեկնեցաւ Հոկտ. 17ին:

● Գ. 30 Սեպտ. — Կ. ա. Ժամը 11/6, Համաշխարհային եկեղեցական Խորհուրդի Աւագ Ներկայացուցիչ Օր. Առութ Պէտք այցելեց Պատրիարքարան, ուր տեսակցութիւն մը ունեցաւ Գեր. Տ. Տ. Առուրէն և Շնորհք Արքազաններու հետ, Գաղթականաց Հարցի կապակցութեամբ: Պէտքին յանձնուցաւ յուշագիր մը մեր գաղթականաց կացութեան մասին:

● Դ. 1 Հոկտ. — Առաւտուեան Ժամը 8ին, Գեր. Տ. Առուրէն Եպոս, ի գլուխ Միարանութեան, Կատարեց բացումը ժամ, Վարդ, և Ընծայարանի և ապա Ա. Թարգմանչաց Վարժարանի 19:8-:9 պարուցական տարիշընին:

● Կիր. 5 Հոկտ. — Առաւտուեան Ժամը 10ին, Քաղաքի Աստիճանատան մէջ տեղի ունեցաւ վանքի աւագ զրան զանապան Ղազարոս Քիւշտիւրեանի և գաղթականաց փոապան Յակով Մէնչէանի զատավարութիւնը, որոնք բանտարկուած էին Օգոստոս 30ի վանքէն ներս պատահած զեպքերու ընթացքին:

● Գ. 8 Հոկտ. — Կէսօրէ առաջ Ժամը 11ին, Երուսաղէմի Նորընտիր Միթասարք Համտի խալափ, Փախադարձ այցելութիւն տուաւ Պատրիարքարան և ընդունուեցաւ Գեր. Տ. Առուրէն Եպոսի Կողմէ:

● Ար. 10 Հոկտ. — Պիոս ԺԲ, Պապի մահաւան առթմօվ, Գեր. Տ. Առուրէն Եպոս, հետն ունենալով Հոգ. Տ. Վազգէն Վրդ. Ա. Տիար Կարպիս Հինգլեանը, ցաւակցութեան զնաց Լատինաց Ամեն, Ա. Պատրիարքին, Պապական Նորի բակին և Ֆրանչիսկանց Գեր. Կիւտօտտին:

● Եր. 11 Հոկտ. — Առաւտուեան Ժամը 9ին, ընդառաջելով Լատինաց Ամեն, Ա. Պատրիարքի հրաւերին, Ա. Յարութեան Տաճարին մէջ, Պիոս ԺԲ, Պապի հոգովոյ կատարուած հանգստան պաշտամունքին, յանուն Պատրիարքարանին, Ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Կիւրեց Վրդ. Պարիկան և ընկերակցութեամբ Հոգ. Տ. Առասէվ Վրդ. Մամուրի և Տիար Կարպիս Հինգլեանի:

● Բ. 13 Հոկտ. — Գեր. Տ. Առուրէն և Տ. Շնորհք Եպիսկոպոսներ, Տ. Հմայիակ Ծ. Վրդ. և Տ. Վազգէն Վրդ. Ամման զային վանական գործերով և նոյն օր վերապարձան:

● Գ. 14 Հոկտ. — Զեռնարկուեցաւ Ա. Յարութեան Տաճարի նորոգութեան աշխատանքնե-

րուն, որուն կ'անդրադառնանք աւելի հանդամանորէն յռուածիկային:

● Եշ. 16 Հոկտ. — Իրիկուան Ժամը 6ին, Ամպասատօր պանդոկին մէջ, Տիար ձօրձ Կարպագետեանի (Ներկայացուցիչ Միացեալ հահանգաց Զբոսաշրջիկներու Գրասենեակին) կողմէ, ի պատիւ Միացեալ հահանգներէն եկող խումբ մը զրոսաշրջիկներու զրասենեակներու Ներկայացուցիչներուն արուած ընդունելութեան Ներկայ եղան Գեր. Տ. Առուրէն Եպոս, Հոգ. Տ. Թարգոմ Վրդ. և Տիար Կարպիս Հինգլեան:

● Եր. 18 Հոկտ. — Կէսօրէ առաջ Պատրիարքարանու այցելեց Էռնուոնի Զրց Թայլամի Խըմբագրագետունին, սուուն Կ'ընկերանար Երուսաղէմի Անկարի քանի քանի և կեղծեցոյ Երէց Հայր Ելքը:

— Նոյն օր սուրապրուեցաւ Յունաց և մեր Պատրիարքարաններու համաձայնագիրը՝ Ա. Աստուածածնայ Տաճարը վերատին Հեղեղութելու վրանգէն ապահովելու միջոցառութեան մասին: Այս մասին ևս աւելի հանդամանորէն՝ յառաջի կային: Պատրիարքարանին կողմէ համաձայնագրը սուրապրապետ վերապատիւ Տ. Շնորհք Եպոս: Գեր. Տ. Կ'ընկերան Վրդ. թագուած է արդէն:

● Կիր. 19 Հոկտ. — Կէսօրէ առաջ, Քաղաքի Յայն Կամուլիկ Պատրիարքարանին մէջ, Պիոս ԺԲ. Պապի հոգովոյ կատարուած հանգստան պաշտաման Ներկայ եղան Հոգ. Տ. Կիւրեց Վրդ. Պարիկան և Հոգ. Տ. Կ'ընկերան Վրդ. թագուած հանգստան:

● Եր. 20 Հոկտ. — Կէսօրէ առաջ, Քաղաքի Միթասարքի գրասենեակին մէջ, միայ յարան ունենութեանց Ներկայացուցիչներու հետ Խորհրդակցական մողով մը տեղի ունեցաւ Միացեալ Հեղեղութելու կազմակերպութեան (ՄԱԿ) Հիմնարկութեան 13րդ տարեղարձի տօնախմբութիւնը կատարելու շուրջ: Պատրիարքարանին կողմէ Ներկայ էին Հոգ. Տ. Առուրգոմ Վրդ. Թանոս կեան և Տիար Կարպիս Հինգլեան:

— Նոյն ժամուն, Հին Քաղաքի Աստիճանապետ Աստըզ կի. Կաղիքի Ներկայացաւ Գեր. Տ. Առուրէն Եպոս. վանքի վերաբերեալ կարգապահական և այլ խնդիրներու առնչութեամբ:

● Ար. 21 Հոկտ. — ՄԱԿի Հիմնարկութեան 13րդ տարեղարձի առթիւ, յանուն Ա. Աթոռոյ Միարանութեան և Յարդանանի Հայ համայնքին, Հնորհաւորական հեռազիր զրկուեցաւ ՄԱԿի Բնդշանուոր Քարտուղարութեան:

— Այս ուրախ առթիւ, երկու օրեր, վանքի աւագ զուուը զրոյազարդուած էր և եղեքտրական լոյսեր ազուցուած:

— Նոյն առթիւ, զոյց վարժարաններու մէջ խոսուեցաւ սոյն կազմակերպութեան կատարած զարծունէութեան շուրջ:

● Բ. 27 Հոկտ. — Ասորուց Անտիոքի և Միջն Արեւելքի Պատրիարք Մար Իգնատիոս ձագոս Գ. ի Գահակալութեան առաջին առթիւ պարեպարագուած էր և Արքայի կողմէ սարքուած թէյասեղանին Ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Կիւրեց Վրդ. Պարիկան և Հոգ. Տ. Վազգէն Վրդ. Գլուխընարկեան:

## ՊԻՌՍ ՃԲ. ՊԱՊ

Տարւոյս Հոկտ. ամսոց ծին իր յաւիտենական հանդիսարք մտաւ Հռովմէական Եկեղեցւոց հոգեւոր պետը, Պիոս ԺԲ. Պապը, 82 տարիներու հասուն տարիքի մէջ։ Իր մահը արդինք էր իշուածքի և տեղի ունեցաւ իր ամառանցքին մէջ։

Պիոս ԺԲ. ծնած է 1876ին Հռովմէի մէջ եւ անուանուած՝ կուտենի Բաչելի։ Կուտենի բահանայ ծիռնադրուած՝ 1899ին, եւ մտած՝ Վատիկանի Քարտուղարութեան սպասարկութեան մէջ։ Առաջին Մեծ Պատերազմի տարիներուն նշանակուած է Պատեկան Նուիրակ Պավարիոյ և ապա՝ համայն Գերմանիոյ։ 1917ին եպիսկոպոսացած է։ 1929ին կը բարձրանայ կարտինալական աստիճանին եւ կը նշանակուի Վատիկանի Պետական Պետական Քարտուղար։ Իսկ 1939ին կ'ընտրուի Պապ, յաջորդելով Պիոս ԺԲ.ին իրեն։ Հռովմէական Եկեղեցիի 26 լրդ Քահանայապետը։

Դրեթէ 20 տարիներու իր պայտօնավարութիւնը հանդիպեցաւ մեր աշխարհի ամենէն տագնապալի շրջաններէն մէկուն։ Աֆոռ բարձրացած էր Բ. Համաշխարհային Պատերազմի նախօրեակին։ Պատերազմի ընթացքին, բայց մանաւանդ անկէ վերջ, Հռովմէական Եկեղեցին Կեդրոնական ու Արեւելան Եւրոպայի մէջ անցուց, եւ կը շարունակէ անցնել, տագնապի լուրջ շրջան մը, իրեւ նետեւանք Համայնավարական վարչածինի տիրապետման այդ երկիրներու մէջ։ Հռովմէական Եկեղեցիի պատմութեան մէջ իր անունը յատկապէս պիտի յիշուի իրեւ այն Պապը՝ որ Ս. Կոյսի մարմնապէս վերափոխումը անցուց Հռովմէական Եկեղեցիի դաւանական հաւատալեաց շարքին մէջ։ Եղած է համեմատարար լայնամիտ Պապ մը, շարունակարար շեշտելով որ պարեար չկայ եւ չի կրնար ըլլալ նշմարիս գիտութեան եւ կրօնքի միջին, մինչեւ իսկ ընդունեց որ եղաշրջման գիտական տեսութիւնը անհաշտելի չէր Եկեղեցիի ուսուցմանց հետ։ Լիովին օգտագործած է գիտական բոլոր գիտութիւնները (ռատիօ, թեկիվիժըն, եւայլն) եւ տեսութիւնները Եկեղեցւոյ օգտին համար։ Իր հօտէն նանցուած է նաև իրեւ սրբակնացած Պապիրէն մէկը։

Իր օրով կարտինալական շրջանակը զգալապէս ընդունուեցաւ իր մէջ առնելով գրիթէ ամէն ազգէ կամ աշխարհագրական մեծ շրջանակներէն կարտինալներ, որով սկիզբ գրուած եղաւ Հռովմէական Եկեղեցիի բարձրագոյն այս կարգը իտալական մենաշնորհ մը ըլլալէ ազատագրելու։ ձանցուած է առհասարակ խաղաղասէր, բայց միաժամանակ կորովի եւ խոհական Քահանայապետ մը։

Եղած է մեծ ուսումնական, դիւնագէտ ու լեզուագէտ հոգեւորական մը։ Բացի իտալերէնէն գիտէր լատիներէն, ֆրանսերէն, անգլերէն, սպաններէն, բորթուկալերէն եւ գերմանիրէն։ Թաղուեցաւ Ս. Պետրոսի ներքնայարկին մէջ, ուր թաղուած են պապերէն մեծ մասը։

ՄԻՈՒՆ, իր վշտին մէջ, ցաւակցութեան բաժինը կը բերէ Հռովմէական Եկեղեցիի մեծ սույգին։

\* \*

Ս. Աթոռոյ Գործոց Բնորհ. Վարիչ Գեր. Տ. Առուրէն Եպս., Հոկտ. 9ին, վշտակցական հեռագիր զարկաւ Վատիկան Աստան, Պիոս ԺԲ. Պապի մահուան առթիւ, որուն ի պատասխան ստացուեցաւ Վատիկանէն հետեւեալ հեռագիրը։

«Կարտինալներու Սրբազն ժողովը կը հրահանգէ ինձի արտայայտել իրենց անկեղծ գնահատանքը եւ երախտազիտութիւնը, վշտակցութեան այն անկեղծ պատգամին համար՝ զոր դրկած էիք Գերագոյն Քահանայապետ Պիոս ԺԲ.ի մահուան առթիւ»։

Կարտինալ ԱԼ.ՕԵԶԻ Մ.Ա.Ա.Լ.Ա.

\* \*

Վերջին պահուն կ'իմանանք որ նոր Պապ ընտրուած է Վենետիկի Պատրիարք Կարտինալ Աննելո Խոնգալլի (Խոտացի) եւ առած է Յովհաննէս Ի. անոնը։ ՍԻԾ. կը մաղթէ Քրիստոնէական Եկեղեցւոյ մեծագոյն հաստածի Հօփուապետին խաղաղասէր եւ արդիւնաշատ պաշտօնավարութիւն։



S. ԵՂԻՇԵ Ծ. ՎՐԴ. ԻՒԹԻՒՑԵԱՆ  
1889—1958

Տարւոյս Յուլիս ամսոյ 29ին ի Տէր հանգուցեալ է Աւատրիոյ և Գերմանիոյ Հայոց Հոգեւոր Հովիւ Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Իւթիւննեան:

Հանգուցեալ Եղիշէ Ծ. Վրդ. ծնած է 1889ին, Կ. Պոլսոյ մէջ: Իր նախնական ուսումը ստացած է Սկիւտարի Երմոնեան դպրոցին մէջ և շրջանաւարտ ելած է Գաւրզիւղի Արամեան վարժարանէն: Երկար տարիներ ուսուցչական պաշտօն վարած է Կ. Պոլսոյ հայկական վարժարաններու մէջ մինչեւ 1928 և սոյն թուականին քահանայ ծեռնադրուած է Եփկոմիդիոյ նախկին և նոյն շրջանի Պուլկարիոյ առաջնորդ Տ. Մուհիմանոս Արքեսոս. Յովակիմեանէ, Առքիայի մէջ:

1929ին նշանակուած է Վեճննայի Հայոց Հոգեւոր Հովիւ, պաշտօն մը՝ զոր վարած է միծ նուիրուածութեամբ: 1944ին իր կրօպակիցը կրօսնցուցած ըլլալով, Տ. Արտաւազգ Արքեսոս. Միւրմէեանէն ստացած է Վեճար և վարդապետական մասնաւոր իշխա-

նութիւն: Իր բազմամեայ եկեղեցանուէր եւ արդիւնաւէտ ծառայութեան համար 1952ին Տ. Խալդ Արքեսոս, Աջապահեանէն ստացած է Մայրագոյն Վարդապետի աստիճան, Փարիզի Հայոց Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ մէջ:

Հանգուցեալ Հայր Մուրրը լանգախաչ ստացած է Երանաշնորհ Տ. Խորչէն Կաթողիկոսէն: Ան ժամանակ մը ելած է նաեւ Պուտարեշտի Հայոց Հոգեւոր Հովիւ:

Հանգուցեալ Եղիշէ Ծ. Վրդ. իր տարիներու անդուլ ծառայութեամբ ցուցարիւրած է բարի հովիւի, գիտակից պաշտօնէի, առաքինի քրիստոնեայի և ազգին ու եկեղեցին նուիրուած հայ եկեղեցականի մը արժանիթները:

Յուղարկաւորութիւնը եւ Յաղումը տեղի ունեցած է Օգոստոս 2ին և մարմինը ամփոփուած է լնտանեկան դամբարանին մէջ:

Ընկալցի Տէր Յիսուս զիոնի նորա իլոյս երեսաց իւրոց:

Տիկին Շուշան Կոօվնեան՝ կը նուիրե 500 ֆիլս, վասն բարգաւոնման Մբրոց Յակոբ և անուն Տովորանին:

## 1958-ի «ՍԻՐՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

### ԵՐԱՎԱՐԺԵՄԵՆ

Հոգ. Տ. Վաղգեն Վրդ. Գրպրըսլեան:

Բարեկ. Վարդապետ Արկ. Զարքարեան:

### ԱՆՎՐԵՐԱՎՈՒԵԼԻ

Արժ. Տ. Արտէն Քչնյ. Աչձեռն:

Արժ. Տ. Եսորեկ Քչնյ. Շրիքհանին (Այն-  
[Ճար]):

Տիկ Յակոբ Զարքարեանին (Պէյրութ):

Տիկին Աննա Թիւրէքհանին (Պրուքին):

Տիկ Յակոբ Յարութեանին (Ֆրէզնո):

Լոյս Տեսան  
ՍՈՒՐԵ ԱԹՈՈՒՅՑՍ ՏՊՈՐՈՒՆԵՆ

**ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏԱՑՑՑ**

ՀԱՅՑ. ԱԴԱԲ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

(Հայերէն բնագրաւ եւ Անգլերէն բարզմանութեամբ  
Տ. Տիրան Արքեպո. Եկեղեցիանի)

Էջ՝ 232

Գ. Տպագուռքին

Գիր. 1 Տիհու

(ԽԵՒ) ՅՈՎՃԱՆՆԵԽՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

**ՏԱՂԱԳԻՐՔ**

Հրան. Եղիշայր Եպս, Ծովական

Էջ՝ Խ. + 115

Գիր. 500 Ժիկ

ԹՈՐԴՈՄ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

**ԽՈՒՄԲԻՆ ՀԵՏ**

(ՀԱՒԱՏՔԻ ԿԱՅՏԵՐ)

Էջ՝ 143

Գիր. 300 Ժիկ

**ՀԱՅ ՈՒԽՏԱԽՈՐ**

(ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ՈՒՂԵՑՈՅՑ ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՑ)

Էջ՝ 144

Գիր. 400 Ժիկ

**ՀՈԳԵԽՈՐ ԵՐԳԵՐ ԵՒ ԶԱՐԱԿԱՆՆԵՐ**

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Էջ՝ 103

Գիր. 250 Ժիկ